Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

НОВАЯ АРАБСКАЯ РЕДАКЦИЯ АГАФАНГЕЛА

(АРАБСКИЙ ТЕКСТ И ИССЛЕДОВАНИЕ)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1968

9(47.925)
Տ-37

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(ԱՐԱԲԵՐԵՆ ԲՆԱԳԻՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

2113

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1968

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

Աշխատության մեջ տրված է Ագաթանգեղոսի Պատմության արաբերեն թարգմանության նորահայտ բնագիրը, ինչպես նաև ուսումնասիրություն նրա մասին։ Հայկական բնագրի և հունական միջանկյալ թարգմանության հետ կատարված համեմատությունների միջոցով ցույց է տրված սույն արաբական թարգմանության նշանակությունը Ագաթանգեղոսի ուսումնասիրման համար։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթանգեղոս—Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց։ Աշխ. Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909։

Agathangelus—Agathangelus und die Akten Gregors von Armenien, neu hrsg. von Paul de Lagarde. Göttingen, 1887.

Марр—Н. Марр, Крещение Армян, Грузин, Абхазов и Аланов святым Григорием, С. Петербург, 1905.

Garitte—G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange. Città del Vaticano, 1946 (Studi e testi, 127).

Ծանոթություն. Առաջին երկու գրքերը նշում ենք ըստ պարբերությունների և միայն կարիք եղած դեպքում ըստ էջերի, իսկ մնացյալ երկուսը միայն ըստ էջերի։

Սույն արաբերեն բնագրի պարբերությունները ուսումնասիրության մեջ դնում ենք § նշանով։ Արաբերեն բնագրի հրատարակության մեջ բացի նրա պարբերությունների համարներից և ձեռագրի էջերից նշված են նաև հունական Ագաթանգեղոսի (քառակուսի փակագծերով) և հայկական Ագաթանգեղոսի (կլոր փակագծերով) պարբերությունները։

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Հայ մատենագրության մեջ Ագաթանգեղոսի Պատմությունը մի բացառիկ երկ է, որը թարգմանվել է միջնադարյան գրեթե բոլոր քրիստոնյա ժողովուրդների լեզուներով (հունարեն, արաբերեն, վրացերեն, հաբեշերեն, լատիներեն և այլն)։ Ոսկեդարյան հայ մատենագրության այս գոհարը մեկն է այն կարևոր արժեքներից, որ հայը մուծել է համաշխարհային մշակույթի գանձարանը։ Միևնույն ժամանակ նրան առնչվող խնդիրները հայ մատենագրության ամենաբարդ և տքնաջան աշխատանք պահանջող հարցերից են։

Նրա մասին հնագույն տեղեկությունը տալիս է Ե դարի պատմիչ Ղազար Փարպեցին, որն իր Պատմության հենց առաջին տողերում գրում է. «Սկիզբն առաջին գրոց պատմութեանն Հայոց, որում սկիզբն արարեալ պատմեաց սուրբ այրն երանելի Ագաթանգեղոս, սկսեալ ի մահուն Արտաւանայ յԱրտաշրէ յորդւոյ **Սասանայ բռնաւոր Ստահրացւոյն**. և զդարձ աշխարհիս Հայոց յանգիտութենէ կռապաշտութեան յաստուածգիտութեան ճշմարտութիւն ի ձեռն սրբոյ նահատակին Գրիգորիսի, յորոյ անուն և զգիրսն անուանեալ կոչեն Գրիգորիսի»[1]։ Փարպեցին ճանաչում է մի երկ, որն սկսում է Արտաշիր Սասանյանի ձեռքով Արտավանի սպանության հիշատակմամբ և կոչվել է «Գիրք Գրիգորիսի»։ Նրա այս և հաջորդ տեղեկությունները բացառիկ նշանակություն ունեն, որ-

[1] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 1։

պես հեղինակին գրեթե միակ ժամանակակից հավաստի վկայություն։

Սեբեոսի Պատմության մեջ նույն «Գրիգորիսի Գիրք» անունն է տրվում այս երկին։ Կրոնական վեճի ժամանակ հայերը պարսից խսրով արքային ներկայանալիս «ունէին պատրաստական անդ ընդ ինքեանս զգիր սրբոյն Գրիգորի»[1]։

Հետագայում «Գրիգորիսի Գրքի» հեղինակի մասին մատենագիրները որոշ չափով այլ տվյալներ են տալիս։ Հեղինակն արդեն համարվում է Տրդատ Գ թագավորի հռոմեացի քարտուղար և Հայոց դարձի ականատես վկա։ Տարոնի Պատմությունը նրան կոչում է պարզապես Ագաթանգեղոս[2]։ Հենց Ագաթանգեղոսի Պատմության Առաջաբանը[3] նրան համարում է (սա հավանաբար օտարամուտ տարր է) Տրդատի քարտուղարը, որն արքայի հանձնարարությամբ գրում է Հայոց դարձի պատմությունը։ Այլևս չի հիշվում «Գրիգորիսի Գիրք» անունը, այլ պարզապես Ագաթանգեղոս անունն է տրվում, որը Կիրակոս Գանձակեցու մոտ ստուգաբանվում է հունարեն իմաստով «Ագաթանգեղոս, որ թարգմանի բարի հրեշտակ»[4]։

«Գրիգորիսի Գիրքը» վստահելի հեղինակություն է եղել հայ եկեղեցու համար ամբողջ միջնադարում։ Սասանյան արքունիքի հետ վեճերի ժամանակ (օրինակ Շապուհ արքայի հետ) հայերն այն օգտագործել են և նույնիսկ թարգմանվել է պահլավերեն (...մատուցին առաջի թագաւորին զԱգաթան-

---

1 Սեբեոսի Եպիսկոպոսի Պատմութիւն, Երևան, 1939, էջ 124։

Ագաթանգեղոսի շուրջը գոյություն ունեցող գրականության համար տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1959, էջ 151—213։

2 «Պատմութիւն Տարօնոյ», Երևան, 1941, էջ 65, 71։

3 **Ագաթանգեղոս**, 12։

4 **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 6։ Վանական վարդապետը «Հարցմունք համառօտ» երկասիրության մեջ «Ուստի է Ագաթանգեղոս» հարցին պատասխանում է «յԱգատագոյ ձորոյն յԱգադակ գեղջէն...» (Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 1480, 1617 թվ., երես 578ա)։ Դժբախտաբար այսպիսի տեղանուն հայտնի չէ Հայաստանում։ Ագադակը, ըստ Ս. Երեմյանի Այգետակի աղավաղումը կարող է լինել։

գեղոյ Պատմութիւն ցանկալի. եւ հրամայեաց ընթեռնուլ և թարգմանել ի Պարսիկ գիր և ի լեզու)[1]։

Ագաթանգեղոսի Պատմությունն առաջին անգամ տպագրվել է 1709 թվականին Կ. Պոլսում (կոչվում է նաև էջմիածնի հրատարակություն) Գրիգոր Մարզվանեցու ջանքերով[2], որից մոտավորապես մեկ հիսնամյակ անց լույս տեսավ նրա հունարեն թարգմանությունը (և լատիներեն խմբագրությունը) Հ. Ստիլտինգի ձեռքով լատին «Վարք սրբոց»[3] շարքում։

Հ. Ստիլտինգը կասկածի տակ է առնում Ագաթանգեղոսի Պատմության հիշած պատմական փաստերի հավաստիությունը, քանի որ այդ դեպքերից շատերի մասին հույն և լատին մատենագիրները նման վկայություններ չունեն, իսկ մի մասն էլ ուղղակի անտրամաբանական է համարում։ Նրան հակաճառում է Մ. Չամչյանը[4] և նրա հայտնած ոչ մի տարակուսանքի հետ չհամաձայնելով պնդում է, որ Ագաթանգեղոսի փաստերը հավաստի են[5], իսկ Ստիլտինգի տարակուսանքը հայ մատենագիրներին և հայ դպրությանը անծանոթ լինելու հետևանք է։ Մ. Չամչյանը առաջինն էր, որ նմանություն գտավ Ագաթանգեղոսի և Կորյունի որոշ հատվածների մեջ։

Ագաթանգեղոսի Պատմության հայկական բնագրի քննական առաջին հրատարակությունը (1835) Վենետիկում (բազմաթիվ գրչագրերի բաղդատությամբ), ինչպես նաև հայագիտության մեջ քննական մտքի ներթափանցումը հիմք դարձան այս երկի մասին առանձին ուսումնասիրությունների երևան գալուն։

Դեռևս 1867 թվականին Ագաթանգեղոսի ֆրանսերեն

---

1 Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Մոսկվա, 1860, էջ 82։

2 Գիրք վիպասանութեան, որ կոչի համանունակի Ագաթանգեղոս... ՌՃԾԹ... ի քաղաքիս Կոստանդինուպոլսոյ։

3 Acta Sanctorum, Septembris, t. VIII, Antverpiae, 1762, p. 320—402.

4 **Մ. Չամչյան**, Պատմութիւն Հայոց, Ա, Վենետիկ, 1784, էջ 668—679։

5 Այս հարցի շուրջը տե՛ս Հ. Յ. **Տաշեան**, Պատմական արժէք Ագաթանգեղեայ, «Հանդէս Ամսօրեայ», 1890, էջ 193, 225, 241, 273։

թարգմանիչ Վ. Լանգլուան[1] այն կարծիքն էր հայտնել, որ այս երկի հեղինակը չէր կարող Դ դարում ապրած լինել և ոչ էլ աշխարհիկ (քարտուղար), այլ Ե դարի եկեղեցական էր։ Այնուամենայնիվ նա չի ժխտում հնից եկող այն տեսակետը, թե բնագիրը հունարենն է, իսկ հայկականը՝ սոսկ նրա թարգմանությունը։

Ագաթանգեղագիտության մեջ մի լուրջ քայլ էր Ա. Ֆոն Գուտշմիդի «Ագաթանգեղոս» աշխատության լույս ընծայումը։

Գուտշմիդը աներկբայորեն հայկական Ագաթանգեղոսը համարում է բնագիր, իսկ հունարենը՝ նրա թարգմանությունը[2]։ Հունական Ագաթանգեղոսի սկզբնական այն հատվածը, որը հայկականի մեջ չկա, Գուտշմիդը[3] իրավացիորեն համարում է օտարամուտ և ինքնուրույն տարր, քանի որ նրա հեղինակի նույնիսկ քաղաքական տրամադրությունը հակված է Արտաշիր Սասանյանի կողմը ի հեճուկս հայկական Ագաթանգեղոսի բուն բնագրի։ Արտաշիրի և Արտադուխտ աղախնի հարաբերությունների մասին խոսում է նաև Ֆիրդուսին իր «Շահնամեում», միայն թե աղախնի անունն է Գուլնար։ Գուտշմիդի համար կասկածելի և օտարամուտ է նաև հայկական Ագաթանգեղոսի Առաջաբանը։

Նրա համար պարզ է, որ այս երկի հեղինակը Ե դարի հայ եկեղեցական է, իսկ Վ. Լանգլուայի այն ենթադրությունը, թե հունարեն գրված Ագաթանգեղոսը Է դարի սկզբին Եղնիկ Երեցի

[1] **V. Langlois,** Collections des historiens anciens et modernes de l'Arménie, Paris, 1867.

[2] **A. Gutschmid,** Agathangelos, Zeit. d. Deut. Morg. Ges., B.XXXI, S. 1—4. Այսուամենայնիվ, 1886 թվին Պապադոպուլոս-Կերամևսը (Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, էջ 206) պնդում է, որ Հայկականը հունարենից է թարգմանված, իսկ Հ. Ավգերյանը նույնիսկ 1909 թվականին առաջ է քաշում այն տեսակետը, թե հեղինակը (Տրդատի քարտուղարը) լատիներեն է գրել («Լատին լեզուն և գրականությունը նախնեաց քով», «Բազմավէպ», 1909, էջ 145—160)։

[3] Նրա այս աշխատությունը մասամբ թարգմանվել է հայերենի Ն. Ջնդոյանի ձեռքով, տե՛ս «Ագաթանգեղոս ըստ Ալփրետ Կուդշմիտի գերմանացւոյ», «Բազմավէպ», 1878, էջ 297, 1879, էջ 10 և 97։

ձեռքով հայերենի է թարգմանվել՝ անընդունելի։ Ագաթանգեղոսի Պատմության մեջ գոյություն ունեցող որոշ կրկնությունները և նույն դեպքի կամ երևույթի մասին տարբեր նկարագրությունները և այլն, Գուտշմիդին առիթ են տալիս ենթադրելու, որ մատենագիրը տարբեր աղբյուրներ է օգտագործել։

Հունական Ագաթանգեղոսի, ինչպես նաև նրա Մետափրաստյան խմբագրության քննական հրատարակությունը Պ. դը Լագարդի ձեռքով կարևոր քայլ էր Ագաթանգեղոսի ուսումնասիրման համար և մանավանդ նրա բնագրին առընթեր գրված հավելվածը[1]։

Ագաթանգեղագիտության անցած ուղին ամփոփեց Բ. Սարգսյանը իր ծավալուն աշխատության մեջ[2], որ դժբախտաբար, քիչ բան ավեց այս կնճռոտ հարցի ուսումնասիրման ասպարեզում։ Հակադրվելով Ա. Ֆ. Գուտշմիդին, նա որոշ հարցերում նույնիսկ ետ է գնում իր ժամանակից[3]։ Այնուամենայնիվ, մի քանի հատվածներ (օրինակ Վարդապետության շուրջը) հետաքրքրություն են ներկայացնում։

Հայկական Ագաթանգեղոսի նախնական խմբագրության հետ սերտ առնչություն ունի Գեորգ Ասորու (Արաբաց եպիսկոպոսի) նամակում հիշված տեղեկությունները Գրիգոր Լուսավորչի կենսագրության մասին։ Գեորգ եպիսկոպոսը (հավանաբար հակոբիկ) իր Թուղթը գրել է 714 թվականին Յեշուա Ճգնազգյաց քահանային։ Հ. Տաշյանը մանրամասն համեմատելով Գեորգ Ասորու խոսքերը հայկական Ագաթանգեղոսի հետ, գտավ, որ շատ տեղեր նրանք բառ առ բառ նման են. նրա ասելով «ասորին և հայն թեև նույն գիրքը կներկայացնեն, բայց ոչ միևնույնը»։ Տարբերություններ կան Գեորգ Ասորու Թղթի և Ագաթանգեղոսի թե՛ հայկական բնագրի, թե՛ հունական թարգմանության միջև։ Տաշյանը հերքում է Պ. դը Լագարդի այն վարկածը, թե Ագաթանգեղոսը կարող էր ասո-

[1] **Agathangelus,** S. 121—149.

[2] **Բ. Սարգիսյան,** Ագաթանգեղոս և իր բազմադարեան գաղտնիքը, Վենետիկ, 1890։

[3] Տե՛ս Հ. Տաշյանի գրախոսականը, «Հանդէս ամսօրեայ», 1891, էջ 243—250։

բական բնագիր ունենալ և հայկականի բնագիր լինելը անտարակուսելի է համարում։

Ագաթանգեղոսի աղբյուրների հարցում Տաշյանը համամիտ է Գուտշմիդի այն տեսակետին, թե Ագաթանգեղոսի հայ խմբագիրն է Կորյունից քաղել և ոչ թե հակառակը։ Այդ խմբագիրը բանաքաղություններ է կատարել նաև այլ աղբյուրներից։ Հենց Հռիփսիմեի վկայաբանության մեջ նրա անվան հունարեն բառախաղը (ընկեցեալ)[1] մատնում է այդ հատվածի հունական ծագումը։ Տաշյանի եզրակացությունը հետևյալն է[2]. «Ագաթանգեղոս խմբագրություն է այլևայլ աղբյուրներէ և այս խմբագիրն հայ եկեղեցական մի է Ե դարուն կեսերը, որ հմուտ էր հույն և ասորի (կ'երևա թե նաև պարթև) լեզվաց»։

Գեորգ Ասորու Թղթին վերջերս անդրադարձավ պրոֆ. Ժ. Գարիտը՝ այն համեմատելով իր հրապարակած հունարեն Վարքի հետ[3]։ Գեորգ Ասորու այն տեղեկությունը, թե Գրիգոր Լուսավորիչը հռոմ (հռոմեացի) էր, հաստատվում է այս հունական Վարքի միջոցով, որտեղ նա կոչվում է Կապադովկացի[4]։

Ագաթանգեղագիտության մեջ երկար վեճերի առարկա դարձած հարցերից է Ագաթանգեղոսի Պատմության աղերսը Կորյունի, Փավստոսի, Խորենացու և այլոց հետ։ Կորյունին նվիրված իր ուսումնասիրության մեջ Նորայր Բյուզանդացին վստահորեն հայտարարում է, որ Դ դարում գրված Ագաթանգեղոսը հաջորդ դարում Կորյունի ձեռքով թարգմանվել է հայերեն, ընդ որում հիմք ունենալով զուտ լեզվական ոճական տվյալները, նա գրում է. «Թարգմանութիւնք զոր ես Կորեան

---

1 Հռիփսիմեի մասին տե՛ս գլուխ Գ։

2 **Հ. Տաշյան,** Ագաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսին, Վիեննա, 1891, էջ 86—87։

3 **Garitte,** p. 218.

4 Տե՛ս **N. Adontz,** Grégoire l'Illuminateur et Anak le Parthe, Revue des Etudes Arméniennes, t. VIII, 1928, p. 233—245.

կը համարիմ. Գիրք Մակաբայեցւոց, Եւթաղ Աղեքսանդրացի, Ագաթանգեղոս և Փաւստոս Բիւզանդ»[1]։

Կորյունի և Ագաթանգեղոսի մասին վեճի առթիվ Ն. Ադոնցը գրում է. «Կորյունի մերձավորությունը Ագաթանգեղի, Եվթաղի և Մակաբայեցվոց գրքին հայտնի է, սակայն նրանց փոխադարձ հարաբերությունը մնում է խորհրդավոր»[2]։

Հակառակ Ագաթանգեղոսի Պատմության մասին հայտնըված բազմապիսի և հաճախ հակասական մտքերին, այսուհանդերձ, այս բոլորը հետևյալ ընդհանուր եզրակացության են հանգում.

Ե դարի կեսերին պատմական և վկայաբանական աղբյուրներից հայ եկեղեցականի ձեռքով խմբագրվել է «Գրիգորիսի Գիրքը», որը տեսել և նկարագրել է Ղազար Փարպեցին։ Չի բացառվում այն հնարավորությունը, թե Ագաթանգեղոսի Պատմությունը կարող էր բացի հայկականից նաև հունալեզու աղբյուրներ (Դ կամ Ե դարի առաջին կեսի) ունեցած լինել։ Ահա այս հայկական խմբագրությունն է, որ թարգմանվել է հունարենի և տարածվել ամենուրեք։ Ագաթանգեղոսի Պատմությունը թեև լի է վկայաբանական տարրերով, այնուամենայնիվ, նրա պատմական տեղեկություններից շատերը հավաստի են և արժեքավոր[3]։

Ագաթանգեղոսի Պատմության կազմավորումը և տարածումը[4] սերտ առնչություն ունի Սուրբ Գրիգորի հիշատակի

---

1 Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, գրեաց Նորայր Ն. Բիւզանդացի, Տփղիս, 1900, էջ 14։ Տե՛ս նաև՝ «Հայկական աշխատասիրութիւնք հայազէտ Պ. Ցեթթերի», Վիեննա, 1895, էջ 81—82։ **Գ. Տեր-Մկրտչյան,** Ագաթանգեղոսի աղբիւրներից, Յիշատակ պատակնքաց Գուրիա և Շմոնի վկայից, Վաղարշապատ, 1896, էջ 3—62։

2 **Ն. Ադոնց.** Դարձեալ Կորիւնի շուրջը, «Հանդէս ամսօրեայ», 1928, էջ 76—94։

3 **Տաշյան.** Ագաթանգեղոս առ Գէորգայ..., էջ 87—149։

4 Տրդատի ու Գրիգորի զույգը Դ—Ե դարերում զուգահեռ կազմավորվել էր թե՛ մատենագրության, թե՛ արվեստի (քանդակագործության) ասպարեզներում։ Հայկական վաղ միջնադարին պատկանող (Դ—Ե դարեր) Թալինի մի քանի կոթողների վրա գտնում ենք Գրիգոր Լուսավորիչը լուսապսակով, իսկ նրանից ներքև խոզագլուխ Տրդատը՝ աղոթողի կերպարան-

տոնակատարության հետ, որի մասին որոշ եզրակացություններ են հանգում Պ. Պեետերսը և Ն. Ակինյանը, հիմք ընդունելով Նեապոլսի մարմարյա տոնացույցը։ 1742 թվականին, երբ Նեապոլսի Սան Ջիովանի եկեղեցին էր նորոգվում, հայտնաբերվեցին մարմարյա երկու տախտակներ, որոնց վրա փորագրված էր տարվա 12 ամիսների տոնացույցը։ Թ դարում քանդակված այս տախտակների վրա սեպտեմբերի 28-ին հիշված են «Ս. Հռիփսիմէ և Գայանէ», իսկ սեպտեմբերի 30-ին և դեկտեմբերի 2-ին ու 3-ին՝ «Հայոց Ս. Գրիգոր» վկաների տոները։

Այս տոների (որոնցից վերջին երեքը համապատասխանում են Մուտն ի Վիրապն, Ելն ի Վիրապէն և Գիւտ նշխարաց՝ օրերին) արևմուտք ներթափանցմանը նախորդել է ակնեբևորեն այս վկաների մասին գրված հայտնի պատմության տարածումն այդ կողմերում։

«Ան, որ թելադրած կամ ներշնչած է փորագրել տեղիքներս,— գրում է Ն. Ակինյանը,— պետք է որ կարդացած ըլլար Ագաթանգեղոսը»[1]։ Պատահական չէր, որ Զ դարում Կ. Պոլսի Ս. Սոփիա տաճարի որմնանկարների մեջ տեղ էր գտել Հայոց լուսավորիչը՝ «Ս. Գրիգոր Հայոց» վերտառությամբ, իսկ շուտով հունարենի էր թարգմանվել Ագաթանգեղոսի Պատմությունը և ինչպես Պ. Պեետերսն է ցույց տալիս, արդեն Ը դարում Ս. Գրիգորի տոնը մտել էր հունական տոնացույցի մեջ[2], իսկ Թ դարում նրա տոնակատարության օրը

քով։ Օձունի (Տաշիր) հայտնի մահարձանի վրա քանդակված են մի շարք տեսարաններ՝ Տրդատը խոզակերպ, բուժված Տրդատը իր քրոջ՝ Խոսրովիդուխտի հետ, Տրդատը ձեռքին խաչագավազան և այլն։ Տե՛ս Գ. Յովսէփեանց, Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակոյթի պատմութեան, Պրակ Գ, Նիւ-Յորք, 1944, էջ 57—63, նույն նյութերի շուրջը տե՛ս նաև՝ Բ. Առաքելյան, Հայկական պարզաքանդակները 4—7-րդ դարերում, Երևան, 1949, էջ 41—47։

[1] Ն. Ակինյան, Ս. Գրիգոր Լուսաւորչի տօները Նեապոլսի մարմարեայ տօնացոյցին վրայ, «Հանդէս Ամսօրեայ», 1947, էջ 600—614։

[2] **P. Peeters,** S. Grégoire l'Illuminateur dans le calendrier lapidaire de Naples, Analecta Bollandiana, t. LX, 1942, p. 94.

քանդակված ենք գտնում Նեապոլսի վիմագիր տոնացույցի վրա։

Ագաթանգեղագիտության մեջ արմատական հեղաշրջում էր 1902 թվականին արաբական խմբագրության հայտնաբերումը Ն. Մառի ձեռքով։ Սրա հրապարակումը և ուսումնասիրությունը պարզեց, որ մեզ հասած հայկական Ագաթանգեղոսը միակ հայալեզու բնագիրը չէր, որ գոյություն է ունեցել Հայոց դարձի նյութի շուրջը։ Ն. Մառը[1] իրավացիորեն ենթադրում է, որ իր հայտնաբերած արաբական խմբագրությունը պետք է թարգմանված լիներ հունարենից, որն իր հերթին պիտի ունենար մի հայկական՝ մեզ չհասած բնագիր օրինակ։

Բազում նոր կռահումների և եզրահանգումների առիթ տվեց արաբական խմբագրության հայտնաբերումը։ Լուծելու համար սրա և մինչ այդ հայտնի բազմալեզու խմբագրությունների փոխհարաբերության հարցը, Ն. Մառը մի ամբողջ տեսություն ստեղծեց[2]։ Ըստ նրա՝ Ե դարում եղել է Ագաթանգեղոսի խմբագրությունը Մեսրոպ Մաշտոցի ձեռքով կազմված։ Սա թարգմանվել է հունարենի, որից օգտվել է Գեորգ Ասորին 714 թվին և ապա կորել է։ Երկրորդ խմբագրությունը, որը կազմվել է քաղկեդոնական հայերի միջավայրում, թարգմանվել է հունարենի և ապա արաբերենի։ Վերջինս նրա (Մառի) ձեռքով հայտնաբերված խմբագրությունն է։ Ը դարում հակաքաղկեդոնական հայ ազգային եկեղեցին կազմում է երրորդ խմբագրությունը, հենց այն, որ մեզ է հասել իր հայկական բնագրով և հունարեն թարգմանությամբ։

Ընդունելով հանդերձ երեք խմբագրությունների գոյությունը, Ն. Ադոնցը[3] որոշ ուղղում է առաջարկում Ն. Մառի մշակած տեսության մեջ։ Նա ընդունում է, որ Մեսրոպ Մաշտոցը կարող էր հավաքած լինել Գրիգոր Լուսավորչի մասին գոյություն ունեցող վարքագրական և այլ կարգի նյութերը, որպես Վարք Գրիգորի։ Բացի դրանից, նա հավանական է գտնում, որ նման աշխատանք կարող էր կատարած լինել նաև

[1] **Марр,** стр. 162—163, 182.

[2] Նույն տեղում, стр 180—182.

[3] **Н. Адонц,** Армения в эпоху Юстиниана, СПб. 1908, стр. 341—342.

Կորյունը։ Սակայն երկրորդ խմբագրությունը նա համարում է Է դարի սկզբին ապրած Եղնիկ Երեցի աշխատանքը, որն ըստ Ադոնցի, վերախմբագրել է ոչ միայն Գրիգորի Վարքը, այլև Մաշտոցի Վարքը (Կորյունի)։ Անկախ խմբագրող մատենագրի անձնավորությունից, Ն. Ադոնցը երկրորդ խմբագրությունը համարում է Զ դարի վերջի և Է դարի սկզբի գործ, քանի որ հայ նախարարությունների և եկեղեցական թեմերի (եպիսկոպոսությունների) ցուցակներում տարբերություն կա մեզ ծանոթ հայկական բնագրի և արաբական խմբագրության միջև, ընդ որում երկրորդի մեջ այս ցուցակները համապատասխանում են Զ դարի վերջի իրադրությանը։

Ն. Մառի ենթադրությունն այն մասին, թե անկասկած պիտի եղած լինի այս խմբագրության հունական օրինակը, հաստատվեց, երբ հայագետ և քրիստոնյա Արևելքի ականավոր գիտակ պրոֆ. Ժ. Գարիտը հրատարակեց իր կողմից իսկ Սպանիայում հայտնաբերած հունական խմբագրությունը։ Համեմատելով այս խմբագրությունն արաբականի հետ, Ժ. Գարիտը այն եզրակացության հանգեց, որ արաբականը հունականի թարգմանությունն է՝ որոշ շեղումներով[1]։ Հունական նորահայտ խմբագրությունը ոչ միայն բանասիրական մեծ արժեք ունի, այլև տալիս է պատմական նոր տվյալներ, որոնք պակասում են մեզ ծանոթ հայկական բնագրի մեջ և նույնիսկ արաբական խմբագրության մեջ, թեև վերջինս, ինչպես ասվեց, հիմնականում նրանից է թարգմանված։

Այսպիսով, Ագաթանգեղոսի մինչև այժմ հայտնի խմբագրությունները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի.

Առաջին խմբի մեջ մտնում են հետևյալ խմբագրությունները.

1. Հայկական մեզ հասած Ագաթանգեղոսի Պատմությունը, շարադրված Ե դարում, ապա որոշ փոփոխությունների ենթարկված։

2. Ագաթանգեղոսի հունարեն թարգմանությունը, կատարված Զ դարի վերջում։ Մինչև Ժ դարը նրան կցվել է հունական Առաջաբանը։ Սրա քննական բնագրի հրատարակիչն է Պ. դը Լագարդը։

[1] Garitte, p. 261.

3. Ագաթանգեղոսի արաբերեն թարգմանությունը, հունարենից կատարված, որի միակ ձեռագիրը սույն աշխատության ուսումնասիրման առարկան է։

Երկրորդ խումբը՝ Վարք կոչված, հետևյալ խմբագրություններն ունի.

1. Մեզ չհասած հայկական Վարքը, որի խմբագիրն է, ըստ Ն. Ադոնցի, Եղնիկ Երեցը (Է դարի սկիզբ)։

2. Վարքի հունարեն թարգմանությունը, որի հրատարակիչն է Ժ. Գարիտը։

3. Վարքի արաբական թարգմանությունը, հունարենից կատարված, որը հրատարակել է Ն. Մառը։

Մեր աշխատության մեջ թեև խնդրո առարկան առաջին խմբին պատկանող արաբական նորահայտ խմբագրությունն է, այնուամենայնիվ, կուզենայինք հակիրճ ձևով նկարագրել երկրորդ խմբի խմբագրությունների էությունը, որը մանրամասնորեն պարզաբանել է Ժ. Գարիտը։

Հունական նորահայտ Վարքի հատուկ անունների, քերականության և ոճի ուսումնասիրությունը Ժ. Գարիտին բերում է այն եզրակացության, որ սա անկասկած հայկական մի կորած բնագրից է թարգմանված։ Ժ. Գարիտը հատուկ գլխի տակ նշում է հունական Վարքի հայկաբանությունները։ Կան բազմաթիվ ոճական ձևեր, որոնք հունարենին հատուկ չեն, բայց երբ նկատի ենք առնում համապատասխան հայկական ձևերը, պարզ է դառնում, թե թարգմանիչը, որն ըստ Ժ. Գարիտի հույն պետք է լիներ, ինչքան շատ է ենթարկվել հայկական բնագրին։

Հունական Վարքի սկիզբը թեև պակաս թերթեր չունի, այնուամենայնիվ, առաջին հայացքից երևում է, որ արհեստական է։ Ժ. Գարիտը իրավացիորեն ենթադրում է, որ թարգմանիչը կամ այլ ոք կրճատումներ են կատարել։ Արաբական Վարքի գրչագրի առաջին թերթերը պակասում են, և շատ հետաքրքրական կլիներ, եթե մենք այս խմբագրության՝ Վարքի բուն

սկիզբը իմանայինք: Դժբախտաբար հունական Վարքը նույնպես այս հարցում մեզ չի օգնում: Չկան ոչ միայն հայկական Ագաթանգեղոսի Առաջաբանի և հունական Ագաթանգեղոսի սկզբնական հատվածի (Արտաշիրի պատամբության) նյութերը, այլև պակասում է նույնիսկ այնպիսի հիմնական մաս, ինչպիսին է Խոսրովի և Տրդատի պատմությունը: Ն. Ակինյանի այն վարկածը[1], թե Արտաշիրի ապստամբության մասին հունական Ագաթանգեղոսին կցված առեղծվածային հատվածը իր ժամանակին այս Վարքի կրճատված մասից է հանվել՝ կարիք է զգում ավելի ուժեղ փաստարկների:

Սակայն հունական Վարքի կողմնակի ակնարկներից պարզվում է, որ Խոսրովի և Տրդատի պատմության հատվածը նրա սկզբում նախապես գոյություն է ունեցել: Տրդատն ու Գրիգորը զրույցի ընթացքում հիշեցնում են իրենց հին հարաբերությունները: Կեսարիո Ղևոնդիոս արքեպիսկոպոսին գրած նամակում Տրդատը հիշում է իր հին մեղքերը և Գրիգորի մարտիրոսությունը, ինչպես նաև այն, որ ինքը եղել է Լիկիանոսի մոտ: Այս բոլորը, ինչպես նաև այլ հետքեր[2], հստակ կերպով ցույց են տալիս, որ այս բաժինն իրոք եղել է և միայն հետագայում է կրճատվել:

Հունական Վարքն սկսվում է Գրիգորի մարտիրոսության բաժնով, որի սկիզբը նույնպես կրճատված է: Այս բաժինը մեծ մասամբ հակիրճ է և այս տեսակետից տարբերվում է հայկական և հունական Ագաթանգեղոսից և նույնիսկ արաբական Վարքից, թեև հունարեն և արաբերեն Վարքերը ունեն իրենց հատուկ առանձին գծերը: Պատմական տեսակետից հունական Վարքի ամենաարժեքավոր հատվածն է Գրիգոր Լուսավորչի կնոջ (Յուլիտտա, հայ՝. Յուղիտայ) մասին պատմող բաժինը: Հայկական Ագաթանգեղոսը չի խոսում նրա կնոջ մասին, այլ շատ հակիրճ և լակոնական ոճով ասում է, որ Տրդատ թագավորին տեղեկացրին, թե Գրիգորը «մինչ դեռ ի

[1] Ն. Ակինյան, Արտաշիր Բաբականի վէպը յունարէն Ագաթանգեղոսի մէջ և Ս. Գրիգորի Նորագիւտ յունարէն Վարքը, «Հանդէս Ամսօրեայ», 1947, էջ 567—581:

[2] Garitte, p. 279—283.

մանկութեան տիօն էր զինուորութեամբ՝ ամուսնացեալ և երկուս որդիս ստացեալ»[1]: Նույնիսկ արաբական Վարքը չունի այս հատվածը: Գրիգորի կնոջ մասին խոսվում է ուշ շրջանում: Կապադովկիայում ստացած նրա ուսման մասին խոսելիս հիշվում է, որ նա «իբրև եղև երկոտասանամեայ, այր ոմն աստուածապաշտ, որ կոչէր Դաւիթ, ամուսնացուցանէ զնա ընդ դստեր իւրում, որ կոչիւր Մարիամ: Արդ, իբրև եղէն նորա երկուս որդիք, անուն անդրանկին Վրթանէս և կրտսերոյն Ռստակէս, մայրն եմուտ ի վանս կանանց...»[2]:

Ամենայն հավանականությամբ Ե դարի իր նախնական ձևի մեջ, հայկական Ագաթանգեղոսն ունեցել է Գրիգորի կնոջ մասին որոշ հատված, սակայն ժամանակի ընթացքում, երբ կուսակրոնության գաղափարն ավելի և ավելի է արմատացել, այդ հատվածը, ըստ երևույթին, խորթ է թվացել և այդ տողերը ջնջելու կարիք է զգացվել:

Ընդհանրապես, եթե համեմատենք հայկական ու հունական Ագաթանգեղոսը և հունական ու արաբական Վարքերը, կտեսնենք, որ առաջինների հետ համեմատելիս, հունական Վարքն ավելի ինքնուրույն է, քան արաբականը, որը համեմատաբար մոտ է կանգնած հայկական Ագաթանգեղոսին:

Այսպիսով, վաղ միջնադարում եղել է մի հայկական Վարք, որը մեզ չի հասել: Սա հունարեն է թարգմանել հույն թարգմանչի ձեռքով, ապա որոշ մասերում փոփոխվել է և դարձել ինքնուրույն խմբագրություն: Վերջինս թարգմանվել է արաբերեն, որը նույնպես ինքնուրույն է, քանի որ բառացիորեն չի համընկնում հունականի հետ:

Հունական Վարքի հայտնաբերումը հնարավորություն ընձեռեց Ժ. Գարիտին, իր մանրակրկիտ ուսումնասիրության մեջ վերանայել[3] Ն. Մառի տեսակետները և արաբական Վարքի հրատարակման առթիվ նրա առաջարկած տեսությունը:

Նորահայտ հունական Վարքը հաստատում է Մառի այն

[1] Ագաթանգեղոս, 859:

[2] «Պատմութիւն Տարօնոյ», Երևան, 1941, էջ 72:

[3] Garitte, p. 338—350.

ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

նոթագրությունը, թե իր հայտնաբերած արաբական խմբագրությունը պետք է թարգմանված լիներ հունարենից, իսկ վերջինս էլ իր հերթին՝ հայկականից:

Սակայն Մառի այն տեսակետը, թե այս խմբագրությունը (Վարքը) քաղկեդոնական միջավայրում է կազմվել, Ժ. Գարիտի մոտ տարակուսանք է առաջացնում: Ձեռագրի Սինայի հունադավան վանքում գտնվելը կամ թերթերի վրացական համարակալումը բոլորովին էլ չէին կարող ապացուցել նրա քաղկեդոնական ծագումը[1]: Մառի այն վարկածը, թե հայոց, վրաց և աղվանից հիշատակումը որպես մեկ ամբողջություն, Է դարի խզումից հետո, կարող էր ընդունելի լինել լոկ քաղկեդոնիկ հայի կողմից, նույնպես բավարար կռվաններ չունի: Իսկ ինչո՞ւ չենթադրել, որ հայկական այս կորած բնագրի խմբագիրը կամեցել է, այսպիսով, շեշտել հայոց եկեղեցու դավանակցությունը կովկասյան մյուս եկեղեցիների նկատմամբ: Գրիգոր Լուսավորչի տեսիլքի մեջ սպիտակ ոչխարների հոտից սևերի անջատումը, Մառը համարում էր հակաքաղկեդոնականներին ուղղված ակնարկ: Սա ևս շատ անորոշ փաստարկ է, քանի որ նույնը հիշվում է հենց հայկական Ագաթանգեղոսի մեջ:

Տարակուսանք է առաջացնում նաև Տայքի միջավայրի մասին Մառի տեսակետը, որի կռվաններից մեկը որոշ տեղանունների մեջ վրացական վերջածանցների առկայությունն է: Նորահայտ հունական խմբագրության մեջ համապատասխան տեղերում այդ տեղանունները նույնպես ունեն նման վերջավորություններ և այն էլ հունարենին շատ բնորոշ ձևով: Մառը հենվում էր նաև Աղձնիք տեղանվան փոխարեն նախարարների ցուցակում արաբական Վարքի մեջ Արտանուջ անվան գոյության փաստի վրա[2]: Սակայն հունական նորահայտ

[1] Ի դեպ, նույն վանքում է հայտնաբերվել հենց մեր ուսումնասիրության մեջ խնդրո առարկա արաբական Ագաթանգեղոսը, որի հայերեն բնագիրը Մառի կողմից որակվել էր հայ ազգային եկեղեցու հակաքաղկեդոնական խմբագրություն:

[2] **Марр**, стр. 182.

խմբագրության մեջ նույն տեղում գրված է 'Αρζιανῆς[1], որը Աղձնիքի հունական ձևն է: Համոզիչ և կտրուկ է այս հարցում Ն. Ադոնցի դեռ իր ժամանակին հայտնած տեսակետը, թե Արտանուջ ձևը սոսկ գրչական սխալ է և առաջարկում էր կարդալ Արզանուն (ارزن)[2]:

Ագաթանգեղոսի Պատմության առնչվող հարցերը դեռ սպառված չեն: Այնքան շատ են նրա բազմալեզու խմբագրությունները, և այնքան բազմապիսի ու կնճռոտ նրանց հետ կապված խնդիրները, որ թեև երկու հարյուրամյակ բազմազգ ուսումնասիրողներ են նրանով զբաղվել, այնուամենայնիվ, դեռ շատ աշխատանք պետք է կատարվի:

Ագաթանգեղագիտության մեջ ամեն մի նոր խոսք, նոր տեսակետ կապված է նոր բնագրերի հայտնաբերման հետ, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ հանդես գալ աշխարհի տարբեր մասերում և միջնադարի տարբեր լեզուներով: Այդպիսի բնագրերից է նորահայտ արաբական Ագաթանգեղոսը:

Ժ. Գարիտի հրատարակած հունական Վարքը, ինչպես նաև Մառի լույս ընծայած արաբական թարգմանությունը կազմում են, ինչպես ասվեց, Ագաթանգեղոսի այլազան խմբագրությունների երկրորդ խումբը, որը չպետք է շփոթել առաջին խմբի հետ[3], որին է պատկանում սույն ուսումնասիրության առարկա հանդիսացող արաբական խմբագրությունը:

Այս արաբական ձեռագիրը գտնվում է Սինայի Ս. Կատարինեի վանքում: Ձեռագրի մանրաժապավենը սիրալիր կերպով մեզ տրամադրել է պրոֆ. Ժ. Գարիտը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

[1] **Garitte**, p. 72, 200—202.

[2] **Адонц**, Армения в эпоху Юстиниана, стр. 293, прим. 3.

[3] Վերջերս Օքրիդայում (Մակեդոնիա, Հարավսլավիա) Ս. Գրիգորի մի նոր հունարեն Վարք հայտնաբերվեց, որը մասամբ համապատասխանում է Ագաթանգեղոսի Պատմությանը, իսկ մասամբ արաբական Վարքին (**Garitte**, La vie grecque inédite de S. Grégoire d'Arménie, Analecta Bollandiana, t. 83. fasc. 3—4, 1965).

Այս խառնածին բնագիրը՝ Օքրիդայի Վարքը, Ագաթանգեղոսի տարբեր խմբագրությունների երկու խմբերի միջև միացման օղակ է կազմում:



[1] Այս տոհմածառը պարունակում է հիմնական խմբագրությունները և պայմանական է, քանի որ շարունակ հայտնաբերվում են նորանոր խմբագրություններ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԸ

I. ՁԵՌԱԳԻՐԸ

Ագաթանգեղոսի Պատմության արաբական խմբագրությունը գտնվում է Սինայի թերակղզու Ս. Կատարինեի վանքի Sin. ar. 395 ձեռագրում: Ինչպես նշված է հիշատակարանում, ձեռագիրն արտագրված է նույն վանքում, աշխարհի արարչագործության 6837 (այսինքն՝ 1328/1329) թվականին:

Թեև նախկինում Սինայի այս հինավուրց վանքի ձեռագրերը ցուցակագրելիս նշված է եղել վերոհիշյալ գրչագրի մասին որպես «Պատմություն սուրբ Գրիգորի»[1], այսուամենայնիվ, ոչ-ոք չի կռահել, որ դա Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» կարող էր լինել:

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո, երբ Սինայի Ս. Կատարինեի վանքն է այցելում պրոֆ. Ժ. Գարիտը, նկատում է, որ այդ գրչագիրը քրիստոնեական արաբական մատենագրության արժեքավոր նմուշներից է, մանավանդ որ նրա մեջ կար Ագաթանգեղոսի Պատմության արաբական թարգմանությունը:

Ձեռագիրը թղթից է և մեծ չափի (32×22 սմ), գրված մեկ գրչի ձեռքով[2]: Յուրաքանչյուր երեսի վրա գրված է քսան տող: Գրչագիրը լավ վիճակում է, և միայն սկզբի թերթերը կորած են, իսկ առաջին 11 թերթերի վերևի մասը վնասված է: Գրչի կատարած որոշ նշումներից Ժ. Գարիտը եզրակացնում է, որ սկզբի պակաս թերթերի թիվը հիսուն է:

[1] **M. D. Gibson**, Catalogue of the Arabic MSS. in the Convent of S. Catharine on Mount Sinai (Studia Sinaitica, III), London, 1894, № 395, p. 64.

[2] Ձեռագրի նկարագրության մասին տե՛ս **G. Garitte**, Une Version arabe de l'Agathange grec dans le sin. ar. 395, Muséon, t. LXIII, 1950.

Ձեռագրում կան հետևյալ բնագրերը (ըստ Հայսմավուրքի օրերի).

1. 21 սեպտեմբեր—Վարք Հովնանի
2. 22 սեպտեմբեր—Վկայաբանություն Փոկասու և նրա աշակերտի Հովհաննու քահանայի
3. 24 սեպտեմբեր—Վկայաբանություն սրբուհի Թեկղի
4. 25 սեպտեմբեր—Պատմություն սրբուհի Եվփրոսինեի
5. 25 սեպտեմբեր—Վկայաբանություն եղբարց Սաբինիանոսի, Պավղոսի և նրանց քրոջ Տատտայի ի Դամասկոս
6. 26 սեպտեմբեր—Գործք սուրբ Հովհաննու Ավետարանչի
7. 27 սեպտեմբեր—Վկայաբանություն սրբուհի Մարիամի
8. 28 սեպտեմբեր—Վարք սուրբ Քարիտոնի
9. 29 սեպտեմբեր—Վարք սուրբ Կիրիակոսի
10. 30 սեպտեմբեր—Վարք սուրբ Գրիգորի Հայոց։

Ուշագրավ է, որ այս գրչագիրը հայտնաբերվեց հենց Սինայում, քանզի այնտեղ էր Ն. Մառը 1902 թվականին գտել Ագաթանգեղոսի Պատմության մյուս խմբագրության՝ Վարքի արաբական ձեռագիրը։

Սինայի Ս. Կատարինեի վանքը միջնադարյան Արևելքում համաքրիստոնեական (մանավանդ հունադավան) մշակութային կարևոր կենտրոն է եղել։ Նրա նշանակությունն ավելի է պարզ դառնում, երբ նկատի ենք առնում նրա պատմությունը և ձեռագիր գանձերը։

Սինայի Թերակղզում «այրվող մորենու» մոտ, որտեղ, ըստ Ս. Գրքի, Մովսեսը Եհովայից ընդունել է պատվիրանները, դեռ Դ դարից եղել են քրիստոնյա անապատականներ, սակայն Զ դարում Բյուզանդիայի Հուստինիանոս կայսրը մենակյացներին պատսպարելու համար ամրացված վանք կառուցեց։ Նրա օրոք շինված եկեղեցին մինչև այժմ էլ կանգուն է[1]։

[1] Այժմ Ս. Կատարինեի վանքում կան մոտավորապես մեկ տասնյակ վանականներ։ Սինայի հունադավան արքեպիսկոպոսը նստում է մեծ մասամբ Կահիրեում։

Արաբական նվաճումներից հետո Ս. Կատարինեի վանքը իր գոյությունը շարունակեց մահմեդական շրջապատի մեջ կղզիացած։ Երբ Բյուզանդիայում սկիզբ առավ պատկերամարտությունը, և ոչնչացվեցին սրբապատկերները, Ս. Կատարինեի վանքը այդ ավերածությունից զերծ մնաց, և այժմ էլ այնտեղ կան մինչև Զ—է դարերը հասնող արժեքավոր սրբապատկերներ, որոնց ընդհանուր թիվը երկու հազար է։

Վանքն ունի մոտավորապես երեք հազար ձեռագիր՝ հունարեն, արաբերեն, ասորերեն, ինչպես նաև վրացերեն, սլավոներեն և եթովպերեն լեզուներով[1]։ Նրա հնագույն ձեռագրերն են Դ դարից մի հունարեն Ավետարան (այժմ Բրիտանական թանգարանում) և 400 թվականի ասորերեն Ավետարան։

Ս. Կատարինեի վանքում հայկական մեկ գրչագիր (Դավիթ Անհաղթ) է հայտնաբերվել, որ վրացերեն ձեռագրերի մեջ է խառնված եղել։ Վրացական մագաղաթյա գրչագրերի մեջ ընկել են նաև հայկական պատառիկներ։ Թեև Ն. Մառի կարծիքով[2] վանքի նկուղում պետք է լինեին հայկական ձեռագրեր, այնուամենայնիվ, այդպիսիք դեռ չեն հայտնաբերվել։

2. ԱՐԱԲԱԿԱՆ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԸ ՀՈՒՆԱՐԵՆ ՄԻ ՀԱՐԱԶԱՏ ՕՐԻՆԱԿԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է

Դժվար չէ կռահել, որ այս արաբական խմբագրությունը հունական Ագաթանգեղոսից է թարգմանված։ Բավական է

[1] Համաշխարհային երկրորդ պատերազմից անմիջապես հետո Ալեքսանդրիայի համալսարանի և ամերիկյան երկու համալսարանների միացյալ արշավախումբը մանրամասն հետազոտեց և լուսանկարեց այդ ձեռագրերը։ Տե՛ս National Geographic Magazine, vol. 125, № 1, 1964, p. 82—127.

[2] **Н. Марр.** Предварительный отчёт о работах на Синае. Сообщения Имп. Прав. Палест. Общ., т. XIV, ч. II, 1903.

համեմատել հենց դիցաբանական անունները և արդեն պարզ կդառնա, թե ինչպես թարգմանիչը հարազատորեն կրկնել է հունականի ոչ միայն անունները, այլև հաճախ հոլովական վերջավորությունները (տե՛ս «Հատուկ անուններ» գլուխը)։

Արաբական Ագաթանգեղոսը հարազատորեն պահպանել է հայկական դիցաբանական անունների այն ձևերը, որոնք գտնում ենք հունական թարգմանության մեջ.

Անահիտ — Արտեմիս
Աստղիկ — Աֆրոդիտէ
Արամազդ — Դիոս
Վահագն — Հերակլէս
Միհր — Հեփեստոս
Նանէ — Աթենաս
Տիր — Ապոլոն

Արաբական թարգմանության մեջ պահպանված են այս հատուկ անունների նույնիսկ հունական հոլովական վերջավորությունները՝ սեռական (եզակի և հոգնակի), հայցական և մի դեպքում նույնիսկ կոչական (տե՛ս Գրիգոր «Հատուկ անուններ» գլխում)։

Տեղանունների հարցում արաբական Ագաթանգեղոսն այնքան է ազդված հունարենից, որ բացի հունական ձևերի օգտագործումից, մի քանի հասարակ անուններ նույնիսկ հատուկ անվան տեղ է ընդունել (տե՛ս «Թարգմանության ժամանակը» ենթագլուխը, «Լեզուն» գլխում)։

Արաբական Ագաթանգեղոսը կրկնում է հունարենի նույնիսկ թարգմանական սխալները, ինչպես օրինակ, Տրդատ Արշակունու մասին «Մանկիկ մի փոքրիկ»[1] արտահայտության աղավաղումը թե՛ հունականի, թե՛ հայկականի մեջ։

Հետևողական լինելով իր սորկամիտ նմանողության մեջ, արաբ թարգմանիչը նույն անունը նույնիսկ տարբեր հոլովական (հունական) վերջավորություններով է գրում, ըստ հունարենի շարադրանքի։ Այն դեպքում, երբ Լիկիանոս անունը հունարեն բնագրում ուղղական հոլով ունի, արաբերենը գրում

[1] Ագաթանգեղոս, 36։

է «Լիքիանուս»[1], իսկ այլ դեպքում, երբ նա սեռական կամ տրական վերջավորություն ունի, արաբ թարգմանիչը գրում է «Լիքիանու»[2] (տե՛ս Լիկիանոս «Հատուկ անուններ» գլխում)։

Կարևոր է նշել, որ արաբական Ագաթանգեղոսի և հունական Լավրենտյան օրինակի բնագրային բաղդատությունը ակնհայտորեն ցույց է տալիս առաջինի մերձավորությունը և հարազատությունը հայկական Ագաթանգեղոսի համեմատությամբ։ Արաբականի տարբերությունը հունականից և մերձավորությունը հայկականին հետևյալ պարագաներում է.

1. Արաբական Ագաթանգեղոսը պահպանել է այս երկի հիմնական հատվածներից երեքի ենթավերնագիրը։ Հայկականի բուն բնագիրը (թեկուզ որոշ ձեռագրերում) ունի հինգ հիմնական հատվածների (Խոսրովի և Տրդատի պատմություն, Ս. Գրիգորի վկայաբանություն, Հռիփսիմյանց վկայաբանություն, Ս. Գրիգորի տեսիլ և Հայոց դարձի պատմություն) վերնագրեր, որոնցից միայն առաջինն է հունականում հստակ պահպանված, իսկ արաբերենը, բացի սկզբի վերնագրից, ունի նաև Գրիգորի վկայաբանության և Հռիփսիմյանց վկայաբանության հատվածների վերնագրերը։

2. Արաբականի սկզբում չկա Արտաշիրի ապստամբության հատվածը, որը գտնում ենք լոկ հունականի մեջ։ Սա ոչ միայն վկայում է, որ արաբական Ագաթանգեղոսը մի հունական հարազատ օրինակի թարգմանությունն է, այլև միաժամանակ օգնում է միանգամ ևս աներկբայորեն պնդելու, որ հունական Ագաթանգեղոսը նախապես այդ հատվածը չի ունեցել։

Բացի Լավրենտյան օրինակից, կան հունական Ագաթանգեղոսի հինգ պակասավոր գրչագրեր (Garitte, p. 272—273), որոնց մեջ թեև Ագաթանգեղոսի սկիզբը պահպանված է, սակայն ոչ մեկը չունի այդ հատվածը։ Ուստի հունական Ագաթանգեղոսի արաբ թարգմանիչը ձեռքի տակ է ունեցել վերջինների խմբին հարող մի հունական ձեռագիր։

[1] § 25։
[2] § 20։

3. Հայկական Ագաթանգեղոսի «Որդւոյ Վաղարշու» (Ագաթանգեղոս, 18) խոսքերի դիմաց Լավրենտյան օրինակը Վաղարշ անունը աղավաղել է υἱοῦ Οὐαλερίου (Agathangelus, 9)։ Օտտոբոնյան գրչագիրը ունի τοῦ ἀλασοῦρ (Garitte, p. 390), ուր թեև այդ անունը դարձյալ աղավաղված է, այնուամենայնիվ, շ (ս) հնչյունը պահպանվել է։ Արաբականը գրում է «Ուալրասի որդու» (§ 1), պահպանելով հունականի ոչ միայն ընկած ս-ն, այլև սեռականի վերջավորությունը։ Նույն Լավրենտյան օրինակն իր վերոհիշյալ սկզբնական հատվածում, որը արաբականը չունի, Վաղարշ անունը ճիշտ ձևով է պահպանել։

4. Հայկական Ագաթանգեղոսի (Ագաթանգեղոս, 19) «Ի դճորայ պահակին» (ձեռագրերի մեծ մասում՝ և զիւրոյ պահակին) արտահայտության դիմաց հունարենի Լավրենտյան օրինակը բնագրի խոսքերը աղավաղում է «... և Καιζουάρου կոչված աշտարակը» (Agathangelus, 10)։ Պ. դը Լագարդը ենթադրում է καὶ ζουάρου, որը հստակություն է մտցնում (Agathangelus, S. 143)։ Արաբական Ագաթանգեղոսը ապացուցում է, որ իրոք այսպիսին պետք է եղած լիներ հունական թարգմանության հին օրինակը՝ «... և աշտարակը, որ կոչվում էր Ջուարու աշտարակ» (§ 2)։

5. Հայկականի «Ի տէրութիւնն Արտաշրի» (Ագաթանգեղոս, 20) արտահայտությունը հունականի մեջ (Agathangelus, 10) կորել է, իսկ արաբականն ունի (§ 3)։ Բարեբախտաբար մյուս հունական գրչագրերում (Garitte, 372, 391) այդ արտահայտությունը պահպանված է։

6. Հայկականի Ուտիք տեղանունը Լավրենտյան օրինակի մեջ թվում է, թե կորել է։ Արաբականն ունի հետևյալ ձևով՝ «Նուտի» (§ 11), որի էությունը կպարզվի, եթե լավ քննենք նույն տեղում հունականի խոսքերը։ Հայկականի «յՈւտի գաւառի» (Ագաթանգեղոս, 28) արտահայտության դիմաց հունականն ունի ἐν αὐτῇ τῇ πατρίδι (Agathangelus, 14), որտեղ կարելի է նկատել Ուտիք տեղանունը դերանվան կերպարանափոխված ձևով։ Բարեբախտաբար նորահայտ ձեռագրերից երկուսը նույն տեղում ունեն ἐν οὐτῃ (Garitte, 372, 391)։ Ուրեմն արաբ թարգմանիչը տեղանվանը նախորդող հունական մասնիկը նրան միացնելով ստացել է Նուտի ձևը։

7. Պատահական չէ այն հանգամանքը, որ «Երէզ» տեղանունը երբ հայկական բնագրում ուղղական հոլով ունի, արաբականը նրա դիմաց տալիս է «Արիզ» ձևը, իսկ այն դեպքում, երբ հայկականը սեռական հոլով ունի՝ Երիզայ, արաբականը նույնպես «Յրիզա» ձևն ունի, որը պետք է հունական միջանկյալ օղակ ունենար։ Սակայն ոչ միայն Լավրենտյան, այլև Օտտոբոնյան օրինակը այդպիսի ձև չեն տալիս (տե՛ս Երէզ բառը «Հատուկ անուններ» գլխում)։

8. Գրիգոր Լուսավորչին Խոր Վիրապ նետելուց հետո Տրդատ թագավորի տված առաջին հրովարտակի (Ագաթանգեղոս, 126—131) միայն ճակատի խորագիրն է մնացել հունական Ագաթանգեղոսի մեջ (Agathangelus, 57)։ Արաբականը հայկական բնագրից պահպանելով հանդերձ այնքան, ինչքան որ հունականն ունի «Տրդատ արքայ Հայոց Մեծաց, առ մեծամեծս և առ իշխանս.... և քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս», դրանից անմիջապես հետո զգուշացնում է՝ «Ինչպես որ սրան հետևում է նամակի շարունակությունը, որի պարզաբանված հիշատակումը և խոսքի երկարումը անօգուտ է» (§ 109)՝ ի հեճուկս հունականի, որն անմիջապես անցնում է հաջորդ նյութին։

9. Շատ հետաքրքրական է հայկական բնագրի Յայէլ (Ագաթանգեղոս, 180) անվան ձևափոխումը հունականի մեջ Իաքելի (Agathangelus, 77)։ Սակայն արաբական թարգմանությունն ունի «Յայիլ»։

10. Հռիփսիմեի չարչարանքների ընթացքում նրան պըրկեցին չորս ցցերի կապելով՝ «և հարեալ չորս ցիցս ի գետինն երկուս ոտիցն և երկուս ձեռացն» (Ագաթանգեղոս, 198)։ Հունական Լավրենտյան օրինակը նշում է, որ նրա ձեռքերից և ոտքերից կապեցին (Agathangelus, 82), բայց առանց հիշելու չորս ցցերը։ Արաբականը պահպանել է չորս ցցերի հիշա-

տակումը (§ 168), որը բարեբախտաբար կա նաև Վատիկանյան գրչագրում (Garitte, 380)։

11. Տրդատ թագավորի մոտ հավաքված 16 հայ նախարարների ցուցակում կա «իշխանն Ծոփաց աշխարհին» (Ագաթանգեղոս, 795)։ Հունական Ագաթանգեղոսի մեջ Ծոփաց երկրի անունը չի տրվում (Agathangelus, 135), արաբական թարգմանությունը հիշում է «Սուֆանիթիս երկրի իշխանը»։ Վատիկանյան ձեռագիրը նույն տեղում հիշում է Ծոփաց երկրի իշխանին (Garitte, 387)։

12. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրած եպիսկոպոսների ցուցակում ութերորդը՝ «Արտիթէս» (Ագաթանգեղոս, 845) Լավրենտյան օրինակում աղավաղված ձևով է հանդես գալիս՝ Արտիոս (Agathangelus, 153), արաբականը պահպանել է ավելի ճիշտ ձևը՝ «Արտաթիս»։

13. Գրիգորի որդիներին բերելու համար ուղարկված երեք նախարարներից Արտավազդը (Ագաթանգեղոս, 850) չի հիշվում հունական Լավրենտյան օրինակում (Agathangelus, 159), արաբականն այն պահպանել է հունականին շատ բնորոշ ձևով «Արթուաքսատ»։

Կան նաև մի քանի այլ մանր փաստեր, որոնք, սակայն, երկրորդական նշանակություն ունենալու պատճառով այստեղ չենք հիշել։

Արաբական Ագաթանգեղոսը[1] թեև թարգմանվել է Լավրենտյան օրինակից շատ ավելի հարազատ հին գրչագրից, այնուամենայնիվ, դժվար է որոշել, թե Լավրենտյան օրինակից հետո հայտնաբերված հունական Ագաթանգեղոսի գրչագրերից (Վատիկանյան, Օտտոբոնյան և այլն) ո՞ր մեկին է

[1] Սույն աշխատանքը կատարելիս արաբական Ագաթանգեղոսը համեմատել ենք նաև Վիեննայի կրկնագիր օրինակի հետ և հանգել հետևյալ եզրակացության. արաբական Ագաթանգեղոսը, ինչպես նաև հունականը, մի քանի տեղերում շեղվելով հայկական ծանոթ ձեռագրերից, նման են Վիեննայի ընտիր օրինակին, սակայն չկա մի այնպիսի պարագա, երբ արաբական Ագաթանգեղոսը ուղղակիորեն և մենակ նման լիներ Վիեննայի օրինակին, շեղվելով ոչ միայն հայկական ծանոթ ձեռագրերից, այլև հենց հունականից։

նա մերձավոր, մանավանդ, որ կան պարագաներ (թեև եզակի), երբ նա տարբերվում է այս վերջիններից և նմանվում է Լավրենտյանին։ Օրինակ, Խոսրովի սպանությունից հետո Տրդատին արևմուտք փախցնելիս գահաժառանգը կոչվում է «Մանկիկ մի փոքրիկ» (Ագաթանգեղոս, 36)։ Լավրենտյան օրինակը այս խոսքերը թարգմանում է «ոչ շատ փոքրիկ մանկան», այսինքն հակառակ իմաստով։ Արաբականը կրկնում է Լավրենտյանին, այնինչ Օտտոբոնյան օրինակը պահպանել է հայկականին հարազատ ձևը (Garitte, p. 392).

3. ՀՈՒՆԱԿԱՆ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԸ ԵՎ ՆՐԱ ԳՐՉԱԳՐԵՐԸ

Ագաթանգեղոսի Պատմության տարածման հարցում վճռական նշանակություն ունեցավ նրա հունարեն թարգմանվելը, քանի որ, ինչպես արդեն հանրահայտ փաստ է, վերջինիս միջոցով են առաջացել այլալեզու խմբագրությունների մեծ մասը։

Երկար ժամանակ հունական Ագաթանգեղոսի միակ ձեռագիրը Ֆլորենցիայի Լավրենտյան մատենադարանի ԺԲ դարի (VII—25) գրչագիրն էր։ Դրա հիման վրա էր առաջին հրատարակությունը կատարել Հ. Ստիլտինգը, իսկ Պ. դը Լագարդը տվել էր քննական հրատարակությունը։ Վերջինս թեև արժեքավոր գործ է, այնուամենայնիվ, Ֆլորենտյան ձեռագիր օրինակի աղավաղված լինելու պատճառով, չէր կարող լիովին վստահելի դառնալ։

Լագարդի հրատարակությունից հետո, մանավանդ անցյալ երկու տասնամյակներում, պարզվեց, որ Լավրենտյան օրինակից բացի, կան հունական Ագաթանգեղոսի բազմաթիվ գրչագրեր, թեև ցայսօր նա միակ ամբողջականն է։ Պրոֆ. Ժ. Գարիտի և այլոց (Ժ. Բիդե) ջանքերի շնորհիվ հայտնի դարձավ, որ Վատիկանում, Փարիզում և այլուր, գոյություն ունեն հունական Ագաթանգեղոսի մի քանի ոչ լրիվ գրչագիր օրինակներ, որոնց ամենահինը հասնում է մինչև Թ դարը։ Այդ մասին Ժ. Գարիտը գրում է իր որոշ հոդվածներում, իսկ 1946 թ. լույս տեսած ծավալուն աշխատության մեջ տալիս է նրանցից երեքի գիտական նկարագրությունը, ձեռագրերի

բոլոր տարբերությունները համեմատելով Լավրենտյան օրինակի հետ։

Հնագույնը Վատիկանի Օտտոբոնյան ժողովածուի (Ottob., gr. 373) գրչագիրն է։ Սա հունական բոլորգիր Թ դարի ձեռագիր է, որը պարունակում է սրբերի Վարքեր (Ս. Քարիտոն, Ս. Սաբա և այլն)։ Սկիզբը է առնում նույն տեղում, ուր հայկական Ագաթանգեղոսն է սկսում (Առաջաբանից հետո) և ունի Լավրենտյան օրինակի 9—61 պարբերությունները (ըստ Լագարդյան հրատարակության)։ Որոշակիորեն տարբերվում է Ագաթանգեղոսի Լավրենտյան օրինակից և, ինչպես կտեսնենք, հնարավորություն է տալիս ստուգելու վերջինիս սխալները։

Վատիկանի հունական մագաղաթյա գրչագիրը (Vat., gr. 1853) կրկնագիր է, որի նախնական գրվածքը Ժ դարից է։ Պարունակում է հունական Մետափրաստյան Հայսմավուրքից սեպտեմբեր ամսի մի քանի Վարք, որոնց մեջ է նաև Ագաթանգեղոսի Պատմությունը։ Ձեռագրի հնագրական ուսումնասիրությունը Ժ. Գարիտին բերում է այն եզրակացության, որ պետք է արևելքում (Կ. Պոլսում) գրված լիներ։ Այս Վատիկանյան կրկնագիրը պարունակում է հունական Ագաթանգեղոսի 10—147 պարբերությունները հատվածաբար։

Վերջապես Ժ. Գարիտը տալիս է Վատիկանյան մի կրկնագիր պատառիկ՝ բաղկացած մի քանի թերթերից և գրված հունական երկաթագրով։ Կրկնագրի նախնական գրվածքը, թեև այլոց կողմից համարվել է Է—Ը դարերի, այնուամենայնիվ, Ժ. Գարիտը Թ դարից վաղ համարելու ոչ մի հիմք չի գտնում։ Պատառիկը պարունակում է հունական Ագաթանգեղոսի 59—68 պարբերությունները հատվածաբար (մոտավորապես Հռիփսիմյանց վկայաբանության սկիզբը)։

Հունական Հայսմավուրքում սեպտեմբեր ամսի 30-ին, որն ի դեպ բոլոր քրիստոնյա ժողովուրդների մոտ Գրիգոր Լուսավորչին է նվիրված, կան հայոց սրբին նվիրված համառոտ տողեր և ծագում են ոչ թե Մետափրաստյան խմբագրությունից, այլ հենց հունական Ագաթանգեղոսից։ Օրինակ,

Պատմոսի Հայսմավուրքում[1] (Ժ դար) այդ հատվածի անձնանունները նման են հունական Ագաթանգեղոսի ձևերին, իսկ Բրյուսելի մի հունական կրկնագիր-ձեռագրի[2] նախնական գրվածքը (Ժ—ԺԱ դարեր), ըստ էության, հունական Ագաթանգեղոսի մի պատառիկն է։

Ժ դարում, երբ արդեն Արտաշիրի ապստամբության հատվածը կցվել էր հունական Ագաթանգեղոսի սկզբին, Սիմեոն Մետափրաստեսը ամփոփեց այն և մտցրեց իր կազմած Վարք սրբոցի մեջ։ Ագաթանգեղոսի Մետափրաստյան խմբագրությունը մեզ հասել է մի քանի հունական գրչագրերի մեջ, որոնցից փարիզյան երկու ձեռագրերի հիման վրա կատարվեց անդրանիկ հրատարակությունը 1865 թվին։ Պ. դը Լագարդը հետագայում լույս ընծայեց նոր հրատարակություն՝ Վատիկանյան գրչագրերի հիման վրա։

Հունական Ագաթանգեղոսը և Մետափրաստյան խմբագրությունը տարածվել են միջնադարյան քրիստոնյա աշխարհում։ Հունական Ագաթանգեղոսից է կատարված լատինական համառոտ խմբագրությունը, որի ձեռագիրը (ԺԳ դար) գտնըվում է Հռոմի Բարբերինյան մատենադարանում։

Մետափրաստյան խմբագրությունն ունեցել է վրացական և սլավոնական թարգմանություններ։ Վրացական խմբագրությունը 1081 թ. Կ. Պոլսում Թեոփիլոս կրոնավորի ձեռքով կատարված, համարվում է հունական Մետափրաստյան խմբագրության ազատ թարգմանությունը։ Կա նաև մի վրացական պատառիկ, որն ուղղակի հայկական Ագաթանգեղոսի թարգմանությունն է համարվում[3]։ Սլավոնական խմբագրությունները դեռ հատուկ ուսումնասիրության կարիք են զգում։

Սակայն հունական Ագաթանգեղոսն ամենից ավելի արաբերեն թարգմանություններ է ունեցել, որոնցից է հենց մեր ուսումնասիրության առարկա ամբողջական թարգմանությունը։

---

[1] Garitte, p. 7—8.

[2] Նույն տեղում, p. 9.

[3] G. Garitte, Sur un fragment géorgien d'Agathange, Muséon, LXI, 1948.

4. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Հայկական Ագաթանգեղոսի մեզ հասած խմբագրությունը որոշ չափով տարբեր է սույն երկի Ե դարի նախնական խմբագրությունից, և եթե նկատի ունենանք, որ նրա հունական թարգմանությունը կատարվել է Զ դարում, ապա հունական Ագաթանգեղոսը շատ հարցերում կարող էր բանասիրական պրպտումների հենակետ լինել։

Դժբախտաբար հունական Ագաթանգեղոսի միակ ամբողջական օրինակը՝ Լավրենտյանը հեռացել է հունականի նախնական և հարազատ կերպարանքից։ Այս բանն ապացուցում են նորահայտ գրչագրերը, որոնք, այնուամենայնիվ, լրիվ բնագիրը չեն ընդգրկում։ Ուստի կառուցվածքի հարցերում նրանք չեն կարող մեզ օժանդակել։

Հունական Ագաթանգեղոսի նախնական հարազատ կերպարը որոշ չափով պահպանել է նորահայտ արաբական Ագաթանգեղոսը, որի համեմատությունը հունական Լավրենտյան օրինակի և հայկական բնագրի հետ հնարավորություն է տալիս այդ եզրակացությանը հանգելու։

Բազում վեճեր են ծագել հայկական Ագաթանգեղոսի Առաջաբանի[1] և հունականի Լավրենտյան օրինակում Արտաշիրի ապստամբության առեղծվածային հատվածի շուրջը։

Բանասերները (Գուտշմիդից մինչև Գարիտ) մանրամասնական պրպտումներ են կատարել ապացուցելու, որ Արտաշիրի ապստամբության հատվածի լեզուն և տրամադրությունը տարբեր են բուն հունական Ագաթանգեղոսից։

Ավելի պերճախոս է հինգ հունական ձեռագրերում (Թ—ԺԲ դարերի)[2] սկզբնական հատվածի բացակայության փաստը։ Նրանք սկսում են այնտեղ, ուր հայկական Ագաթանգեղոսի բուն սկիզբն է «Ընդ նուազել ժամանակաց թագաւորութեանն Պարթևաց....»։

[1] Բ. Սարգսեան, Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն, էջ 9—15։

[2] Garitte, p. 272—273

Արդ, մի նոր փաստ է նաև նրա բացակայությունը արաբական Ագաթանգեղոսի մեջ։ Բնական է, որ վերջինս թարգմանվել է Լավրենտյան օրինակից տարբեր հին գրչագրից, որը հարում է վերոհիշյալ հինգ ձեռագրերի խմբին։ Հավանական չէ ենթադրել, որ արաբ թարգմանիչը կարող էր կրճատած լինել այդ հատվածը, քանի որ նման դեպքում հազիվ թե երջանիկ պատահականությամբ կտրեր հենց այնտեղ, ուր հայկականի բուն բնագիրը սկիզբ է առնում[1]։ Ի դեպ, պետք է նշել, որ արաբական Ագաթանգեղոսի մեջ կրճատումներ կատարվել են միայն վերջին մասերում։

Անդրադառնալով Ագաթանգեղոսի բնագրային հարցերին, Ն. Ադոնցը և Ն. Մառը հավասարապես ենթադրել են, որ հայկական Ագաթանգեղոսը վերջնականապես խմբագրվել է Ը դարում[2]։ Սակայն բանն այն է, որ նրանք վերջնական խմբագրություն հասկացության մեջ շատ լայն շրջանակ են ընդգրկում։ Ըստ նրանց, Ագաթանգեղոսի բնագիրը վերջնականապես խմբագրվելով, հիմնական փոփոխության է ենթարկվել։ Այս տեսակետը գուցե առարկության չենթարկվեր, եթե չլինեին Ագաթանգեղոսի հունական և արաբական թարգմանությունները և այլ նորահայտ խմբագրությունները։

Ագաթանգեղոսի Պատմության բուն բնագիրը, ըստ նյու-

[1] Առաջաբանը միատարր չէ և փաստորեն նրա էությունը դեռ որոշ չէ։ Կարևոր է Մաշտոցյան մատենադարանի 6332 ձեռագիրը (ԺԷ դար), որի մեջ Վարդապետությունը չկա, իսկ փոխարենը դրված են Նունեի Վարքը (Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, գիրք Բ, գլ. ԶԶ ամբողջովին), Մանեի Վարքը և այլն։ Այս ձեռագրի մեջ չկա նաև Առաջաբանը։ Առաջաբան չունի նաև 3516 ձեռագիրը, որը, սակայն, սկզբում դատարկ թերթեր ունի։

[2] Հայ մատենագրության պատմության մեջ Ը դարը այն սահմանն է, որից առաջ ապրած մատենագիրներից շատերն ու նրանց երկերը (էությունը կամ ժամանակը) այս կամ այն ձևով կասկածի տակ են առնված, իսկ Ը դարից այս կողմ (երբ մանավանդ գոյություն ունեն թվագրված ամբողջական ձեռագրեր) մատենագիրների անձնավորությունը և նրանց երկերը մեծ մասամբ տարակուսանք չեն առաջացրել, նույնիսկ խստապահանջ բանասերների մոտ։ Այս շրջանում հավաքման և խմբագրման մեծ աշխատանք է կատարվել Հովհան Օձնեցի կաթողիկոսի օրոք, որին վերագրվում է Հայոց կանոնագրքի և Գիրք թղթոցի ձևավորումն ու խմբագրումը։

3—353

թի, ունի հետևյալ հիմնական հատվածները. ա) Խոսրով և Տրդատ, բ) Վկայաբանութիւն Ս. Գրիգորի, գ) Վկայաբանութիւն Ս. Հռիփսիմեանց, դ) Տեսիլ Ս. Գրիգորի, ե) Դարձ աշխարհիս Հայոց։ Եթե այս բաժանումը համեմատենք Ագաթանգեղոսի նախնական խմբագրության մասին գլխավոր հավաստի աղբյուր Ղազար Փարպեցու նկարագրած հակիրճ բովանդակության հետ, կտեսնենք, որ վերջինս ընդհանուր գծերով այս բաժանումներն է տալիս, միայն թե սկսում է մանրամասն, ապա հակիրճ է դառնում։

Վերոհիշյալ հինգ բաժինները կազմում են Ագաթանգեղոսի Պատմության բուն բնագիրը, որն, իհարկե, նախնական խմբագրությունից որոշ (բնագրային) տարբերություն ունի։ Մովսես Խորենացին, Ղազար Փարպեցու նման, տեսել էր նախնական խմբագրությունը և այնպիսի տեղեկություններ (Մարիամի, Սեղբեստրոսի և Նունեի մասին)[1] է Ագաթանգեղոսի անունով հիշում «որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»[2], որոնք բոլորովին բացակայում են մեզ հասած բնագրում։ Այնուամենայնիվ, նախնական խմբագրության բնագրային փոփոխությունները թվով և որակով աննշան են եղել և մեզ հասած խմբագրությունը (Առաջաբանով և Վարդապետությամբ) հարազատորեն պահպանել է իր ոսկեդարյան լեզուն։ Փավստոսի, Կորյունի և Եզնիկ Կողբացու երկերի հետ Ագաթանգեղոսի Պատմությունը համարվում է դասական գրաբարով շարադրված ոսկեդարյան երկ[3] և մտնում է «չորրորդ դասի» մեջ, որին նա տվել է իր անունը (Ագաթանգեղյան դաս)[1]։

Ագաթանգեղոսը բնագրային փոփոխությունների է ենթարկվել նախքան հունարեն թարգմանվելը, այսինքն մինչև 6-րդ դարի վերջը։ Թարգմանությունից հետո նա այլևս նման փոփոխությունների չի ենթարկվել։ Այս կերպարանքը գտնում ենք հունական և, մանավանդ, արաբական Ագաթանգեղոսի մեջ։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ[2]

	Ագաթանգեղայ պատմութիւն			Վարք	
	հայկական (1909)	յունական (1887)	արաբական	յունական (1946)	արաբական (1905)
Առաջաբան	1—17	1			?
Ապստամբութիւն Արտաշրի		2—9a			?
Խոսրով և Տրդատ	18—47	9b—21	1—30		?
Վկայաբանութիւն Ս. Գրիգորի	48—136	22—58	31—113	1—29	] 1—9
Վկայաբանութիւն Հռիփսիմեանց	137—210	59—88	114—181	30—50	10—37
Տեսիլ Ս. Գրիգորի	211—258 716—776	89—127	182—275	51—92	38—85
Վարդապետութիւն	259—715				
(Կին Ս. Գրիգորի)				93—97	
Դարձ աշխարհիս Հայոց	777—891	128—170	276—364	98—198	86—187
Վերջաբան	892—900	171—172		199	188

[1] Մովսեսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 220, 227, 232—234։

[2] Խորենացու պատմության մեջ այս հարցում երկվություն կա։ Մի կողմից, որպես ժամանակակից, Խորենացին տեսել է Ե դարի նախնական խմբագրությունը և հիշել հազվագյուտ տեղեկությունները, սակայն միաժամանակ նրա պատմության մեջ ոչ միայն չի հիշվում «Գիրք Գրիգորիսի» անունը, այլև այնտեղ մտել է, հավանաբար հետագայում սկիզբ առնող այն ավանդությունը, թե այս երկի հեղինակը Տրդատ թագավորի հռոմեացի քարտուղարն էր։

[3] Ն. Ակինյան, Դասական հայերենը և Վիեննական Մխիթարեան դպրոցը, Վիեննա, 1932, էջ 45։

[1] Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Բ, Երևան, 1951, էջ 82—83։

[2] Տե՛ս Garitte, p. 270.

5. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՎԵՐՆԱԳՐԵՐԸ

Ագաթանգեղոսի բնագրով զբաղվող գրեթե բոլոր բանասերները նշմարել են նրա մեջ ինքնուրույն հատվածներ, որոնք բնականաբար իրարից տարբեր ծագում ունեն: Հատկապես շեշտել են երեք հատվածների ինքնուրույնությունը՝ Վկայաբանություն Ս. Գրիգորի, Վկայաբանություն Հռիփսիմյանց և Տեսիլ Ս. Գրիգորի: Անկախ և ինքնուրույն հատված է նաև սկզբնական՝ Խոսրովի ու Տրդատի պատմությունը, որին անմիջապես հաջորդում են վերոհիշյալ երեք հատվածները, ինչպես նաև վերջին մասը՝ Հայոց դարձի պատմությունը:

Ագաթանգեղոսի հայերեն բնագրի բոլոր հրատարակիչները (1709—1930 ունեցել է ութ հրատարակություն) նրա հատվածների որոշ գրչագրերում նկատվող վերնագրերը ուշագրության արժանի չհամարելով կամ բոլորովին չեն նշել և կամ էլ տողատակ են իջեցրել ծանոթագրությունների մեջ:

Այս տպավորությունն ավելի է ուժեղացրել այն պարագան, որ հունական Ագաթանգեղոսի Լավրենտյան օրինակը գրեթե լրիվ կորցրել է այդ վերնագրերը:

Արաբական թարգմանությունը ցրում է այս տպավորությունը և մտորումների առիթ տալիս Ագաթանգեղոսի հատվածների վերնագրերի շուրջը: Արաբական Ագաթանգեղոսը պահպանել է Խոսրովի ու Տրդատի պատմության, Ս. Գրիգորի վկայաբանության և Հռիփսիմյանց վկայաբանության հատվածների վերնագրերը: Բացի դրանից, ունի նաև Ս. Գրիգորի վկայաբանությանը նախորդող երկու փոքր ենթավերնագիր, որոնցից մեկը հայկական ձեռագրերում էլ կա:

Մաշտոցյան Մատենադարանում գտնվող Ագաթանգեղոսի ձեռագրերի ուսումը մեզ բերեց այն եզրակացության, որ արաբական Ագաթանգեղոսի պահպանած վերնագրերը պետք է ունեցած լինեին իրենց նախատիպերը հայկական բնագրում: Բանն այն է, որ Ագաթանգեղոսի այժմ Մաշտոցյան Մատենադարանում պահպանվող քանից ավելի ձեռագրերից ոչ բոլորն են օգտագործել Գ. Տեր-Մկրտչյանն ու Ս. Կանա-

յանը 1909 թվականի քննական հրատարակության ժամանակ, բացի դրանից, որոշ ձեռագրերում այս հատվածները թեև վերնագիր չունեն[1], այնուամենայնիվ, նրանց սկիզբը այնպիսի հանդիսավորությամբ է ձևավորված՝ մանրանկարներով, կիսախորաններով ու լուսանցազարդերով, որ չի կարելի այն պատահական համարել:

Եթե Ագաթանգեղոսի ամեն մի հատվածն առանձին վերցնենք, ապա կտեսնենք, որ նրանց վերնագրերը ձեռագրերում հետևյալ պատկերն են ներկայացնում.

ա) Բուն բնագրի սկիզբը (Խոսրով և Տրդատ):

Հայկական ձեռագրերից շատերն, իրարից չնչին տարբերությամբ, այստեղ ունեն հետևյալ վերնագիրը. «Պատմութիւն յաղագս ծննդեան և սննդեան և վարուց և վարդապետութեան սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին» (ձեռ. 1920, 2639, 1458, 3516 և այլն): Զարմանալի ճշտությամբ հայկական ձեռագրերը բուն բնագրի սկիզբը ավելի հանդիսավոր ձևով են նշում, քան նրան նախորդող և ձևականորեն ամբողջ ձեռագրի սկիզբը հանդիսացող Առաջաբանը: 1570 թվականի Բաղեշի օրինակում (ձեռ. 1920) Ագաթանգեղոսի ձեռագիրը սկսվում է սոսկ կիսախորանով և լուսանցազարդով, իսկ բուն բնագիրը (սույն հատվածը) սկիզբ է առնում լրիվ մեկ երես զբաղեցնող մանրանկարով (Տրդատը, Լուսավորիչն ու Ագաթանգեղոսը), իսկ մյուս երեսում՝ կիսախորան ու լուսանցազարդ:

Հունականի Լավրենտյան օրինակը այստեղ ոչ մի նշում չունի, այլ պարզապես բուն բնագրի սկիզբը միաձուլվել է Առաջաբանի հետ: Սակայն Առաջաբանի սկզբում հիշում է, որ սա Ագաթանգեղոսի Առաջաբանը և Գրիգորի մարտիրոսության պատմությունն է Πρόλογος Ἀγαθαγγέλου, ἐν οἷς καὶ τὸ μαρτύριον τοῦ ἁγίου Γρηγορίου: **Վատիկանի Օտտոբոնյան գրչագիրն ունի**՝ Μαρτύριον τοῦ ἐν ἁγίοις πατρὸς ἡμῶν Γρηγορίου ἀρχιεπισκόπου τῆς Μεγάλης Ἀρμενίας (Garitte, p. 390) «Մար-

[1] Դժբախտաբար այս վերնագրերը հնարավոր չէ գտնել Վիեննայի կրկնագիր ձեռագրի մեջ, քանի որ այնտեղ ոչ մի հատվածի սկիզբը չի պահպանվել:

տիրոսություն մեր սուրբ հոր, Հայոց Մեծաց արքեպիսկոպոս՝ Գրիգորի»:

Արաբական Ագաթանգեղոսը ունի երկար վերնագիր. «Պատմություն մեր հոր, Մեծ Հայք երկրի եպիսկոպոս, Անակ պարսկի որդի և Հայաստանի թագավոր Խոսրովի ազգակից՝ Սուրբ Գրիգորի, Գայանեի, Հռիփսիմեի, որը Եվպրաքսիան է, և միանձնուհի ընկերուհիների հետ Մեծ Հայք երկրում [կրած] մարտիրոսության»:

բ) Վկայաբանութիւն Ս. Գրիգորի:

Արաբերեն ձեռագրում (§ 21, 23) այս հատվածին նախորդում են երկու փոքր ենթավերնագիր: Առաջինը հետևյալն է. «Առաջին հրաշքները և առաքինի գործերը», որն իր համապատասխան տեղում մի քիչ ստորև (Ագաթանգեղոս, 38) որոշ ճառընտիրների մեջ ունի հետևյալ վերնագրերը. «Հինգերորդ շաբաթ աւրն, վկայաբանութիւն սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչին, որ վկայեաց առաջի Տրդատայ թագաւորին», «Վեցերորդ շաբաթ աւրն յիշատակ է սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչին» (Ագաթանգեղոս, էջ 25, 10-րդ տողի ծանոթագրություն): Դժվար է ասել, թե ինչ առնչություն ունի արաբական Ագաթանգեղոսի վերնագիրը հայկականի հետ, սակայն առավել ևս անորոշ է արաբականի հաջորդ ենթավերնագիրը՝ «Երկրորդ հրաշքները», որը հայկական ձեռագրերում համապատասխան նշում չունի:

Հստակ է Ս. Գրիգորի վկայաբանության սկիզբը հայերեն բազմաթիվ ձեռագրերում: Մատենադարանի № 1912 հնագույն թվակիր ձեռագիրը (1220) ունի հետևյալ վերնագիրը. «Վկայութիւն սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչի» (երես 48բ), որից հետո սկիզբ է առնում այս հատվածը՝ «Յառաջին ամին Տրդատայ...»: ԺԳ դարի մի ուրիշ գրչագիր (ձեռ. 5583), որը զուրկ է մանրանկարներից և լուսանցազարդերից, սույն տեղում ունի սկիզբ ազդարարող ծառաձև զարդ (երես 7բ): Հովհաննավանքի 1293 թ. ձեռագիրը (ձեռ. 1479, երես 13) մեծատառ և կարմիր է գրում առաջին բառերը:

Հանդիսավոր սկիզբ ունի Բաղեշի հայտնի ձեռագիրը, որը սույն տեղում հատուկ մանրանկար է զետեղել Ս. Գրիգորի պատկերով: ԺԷ դարի վերոհիշյալ հետաքրքրական ձեռագիրը (ձեռ. 6632)[1] ունի ոչ միայն վերնագիր՝ «Վկայութիւնք սրբոյն Գրիգորի լուսաւորչին. քրիստոս Աստուած է» (երես 5բ), այլև հատվածը վերջացնում է հիշատակարանով՝ «Զմեղաւորս Յովհաննէս...» (երես 20բ): Այս հատվածը վերջաբան ունի նաև 1220 թվականի ձեռագրում (1912), որն առավել ևս շեշտում է սույն հատվածի ինքնուրույնությունը: Արաբական Ագաթանգեղոսն ունի՝ «Երրորդ՝ նրա առաքինության և հրաշագործության վարքագրությունը» (§ 33):

գ) Վկայաբանութիւն Հռիփսիմեանց:

Ագաթանգեղոսի բոլոր հատվածների մեջ ամենից ավելի ինքնուրույնություն ունի այս գիրքը: Ձեռագրերում հանդիպում ենք հետևյալ վերնագրերին. «Յաղագս գալստեան սրբոց Հռիփսիմեանց և նահատակութեան նոցին» (ձեռ. 1920, 3825 և 1458), «Սրբոցն Հռիփսիմեանցն վկայութիւն» (ձեռ. 6632): Բացի դրանից, 1920 ձեռագիրն ունի հանդիսավոր սկիզբ (երես 30ա), կիսախորանով ու մանրանկարով, իսկ հատվածի վերջում տալիս է հիշատակարան՝ «Զքաջ հռետոր և զանյաղթ փիլիսոփայն զՆերսէս...» (երես 46ա): Հատվածի վերջում հիշատակարան ունի նաև 2639 ձեռագիրը, որին հետևում է մանրանկար (երես 33բ):

Ճառընտիրների ձեռագրերը հարում են № 6632 ձեռագրի վերնագրին՝ «Վկայաբանութիւն սրբոց Հռիփսիմեանցն» և կամ «Վկայաբանութիւն սրբոյն Հռիփսիմեա և ընկերաց նորա» (Ագաթանգեղոս, 137, ծան.):

Բարեբախտաբար հունական Լավրենտյան օրինակը պահպանել է այս հատվածի վերնագրի մի մնացորդը: Նախորդ հատվածը վերջացնելուց հետո նա զգուշացնում է, թե դրանից հետո սուրբ կանանց մասին է խոսելու (ἐντεῦθεν τὰ κατὰ τὰς ἁγίας γυναῖκας Agathangelus, 58, տող 86 ծան.):

[1] Ձեռագիրը Խաչիկ վրդ. Դադյանի հավաքածուից է:

Արաբական Ագաթանգեղոսի պահպանած վերնագիրը մոտ է հայկական ճառընտիրներում գտնվող ձևերին՝ «Պատմություն առաքինի վկաներ Հռիփսիմեի, Գայանե գլխավորի և նրա ընկերների» (§ 114)։

Հետաքրքրական է նշել, որ հայկական ձեռագրերից մեկում (ձեռ. 1912), որն ի դեպ հնագույնն է (1220 թվական), Հռիփսիմյանց վկայաբանության հատվածը լրիվ պակասում է։ Ձեռագրում զեղչված է նաև նախորդ հատվածի վերջին երկու հրովարտակները, որից հետո անմիջապես հաջորդում է Տեսիլ Ս. Գրիգորի հատվածը (երես 85բ)։

դ) Տեսիլ Ս. Գրիգորի։

Այս հատվածի վերնագիրը համեմատաբար հազվադեպ է պատահում հայկական ձեռագրերում և երևի պատահական չէ, որ սա չի պահպանվել արաբական թարգմանության ձեռագրում։ Ագաթանգեղոսի միայն մեկ ձեռագիր ունի սրա վերնագիրը՝ «Սրբոյն Գրիգոր Լուսավորչին ելն ի վիրապէն» (ձեռ. 6632, երես 31ա), որին հաջորդում են հետևյալ խոսքերը՝ «Յայնմ ժամանակի տեսիլ երևեալ...»։ Սակայն այլ ձեռագրերում, որոնք թեև վերնագիր չունեն, այլ ինչ-որ նշանով ազդարարում են հատվածի սկիզբը, սկսում են հետևյալ խոսքերով՝ «Եւ այնուհետև մտեալ յեղէգն», այսինքն մի քանի տող վերև։ Բաղեշի ձեռագիրը սույն տեղում տալիս է մանրանկար (խողերը եղեգնուտում), ապա կիսախորան ու լուսանցազարդ (երես 47ա)։ Գրեթե նույնը կրկնվում է նաև 2639 ձեռագրում (երես 34ա), ինչպես նաև Երուսաղեմի մատենադարանի 314 (1648 թվական) ձեռագրում (Ն. Պողարյան, Մայր Ցուցակ Ձեռագրաց, Գ հատ., Երուսաղեմ, 1954)։ Որոշ ճառընտիրներում այս հատվածի սկզբում կան վերնագրեր (օր. «Նորին սրբոյն Գրիգորի ելն ի վիրապէն», Ագաթանգեղոս, 211, ծան.), սակայն մի քանի տող վերևում՝ «Արդ, ասուրս վեց ի խոր տխրութեան...»։

ե) Հայոց դարձը։

Բոլոր հատվածների մեջ ամենից անորոշը դարձի վերնագիրն է, դեռ չենք խոսում այն մասին, որ սա միաձույլ հատ-

ված չէ։ Ըստ նյութի, այս հատվածն սկսում է հայկական քննական հրատարակության 777 պարբերությամբ «Անոյր այնուհետև խորհուրդ հաւանութեան ընդ թագաւորին...», բայց որովհետև նախորդող (Տեսիլ Ս. Գրիգորի) հատվածը երկու մասի է բաժանված, Վարդապետությունը մեջտեղում դետեղելու պատճառով, ձեռագրերում վերնագիր է դրվում այնտեղ, որտեղ Վարդապետությունը վերջանում է և նորից շարունակվում է Տեսիլը։ Ձեռագրերում կան հետևյալ վերնագրերը. «Յաղագս տեսլեան սրբոյն Գրիգորի լուսաւորչին գիջումն միածնի ի Վաղարշապատ քաղաքի» (ձեռ. 1920), «Յաղագս տեսլեան սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին զիջումն միածնին ի Վաղարշապատ քաղաքի» (ձեռ. 1458, երես 151բ), «Քահանայութեան և գիւտի նշխարաց Սրբոյն Գրիգորի.... Տեսիլ սրբոյն Գրիգորի...» (ձեռ. 6632, երես 40բ)։ Համենայն դեպս, բնագրի հրատարակիչներն այս տեղում նախընտրել են դնել հետևյալ վերնագիրը. «Դարձ փրկութեան աշխարհիս Հայաստան, ընդ ձեռն առն սրբոյ նահատակի», կարծես փորձելով վերականգնել այն, որ ձեռագրերում ժամանակի ընթացքում աներևութացել է։ Նախընտրելի են Փարպեցու «Դարձ աշխարհիս Հայոց» խոսքերը[1]։

Իհարկե, այս նյութերի հիման վրա դժվար է աներկբայորեն հայտարարել, թե գտել ենք Ագաթանգեղոսի ուրույն հատվածների վերնագրերը, այսուամենայնիվ, կասկածից վեր է թվում նրանց գոյության փաստը, իսկ այն վերնագրերը, որոնք գտնում ենք հայկական բազմաթիվ ձեռագրերում, համենայն դեպս, այնքան էլ աղավաղված չեն, քանի որ արաբական թարգմանության մեջ պահպանված ձևերը նրանցից շատ չեն հեռանում։

---

[1] Ղազար Փարպեցի, էջ 1։

6. ԱՐԱԲԱԿԱՆ ՄՅՈՒՍ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունարենից հետո և հունարենի միջոցով Ագաթանգեղոսը ամենից շատ արաբերենի է թարգմանվել։

Բացի սույն ուսումնասիրության մեջ խնդրո առարկա արաբական ամբողջական Ագաթանգեղոսից, մի փոքրիկ հատված էլ կա Վատիկանյան մի արաբերեն ձեռագրում, որը մեծ մասամբ ղպտերենից է թարգմանված[1]։

Սույն հատվածը որոշ տողեր ունի (Ագաթանգեղոս, 80, 83, 95, Agathangelus, 33, 34, 42) Գրիգորի երկար աղոթքից, որը նա արտասանել է չարչարանքների ժամանակ։ Հետևյալ նախադասության մեջ՝ «Այլ գի սիրեաց զմարդիկ՝ վասն այնորիկ եղև իբրև զմեզ» արաբերեն թարգմանությունը որոշ փոփոխության է ենթարկվել՝ «և իր ցանկության պատճառով դարձավ մեզ նման»։ Այստեղ սիրո փոխարեն ցանկություն, կամք բառն է օգտագործվում, այնինչ հունականն այս դեպքում հավատարիմ է հայկական բնագրին։ Սա, ըստ Ժ. Գարիտի, ղպտերենից թարգմանելու հետևանք է, քանի որ այդ լեզվում նույն բառը միաժամանակ նշանակում է սեր, կամք և ցանկություն։ Ահա սա հիմք է տալիս նրան ենթադրելու, որ այս արաբերեն հատվածը թարգմանված է ղպտերենից, որն իր հերթին հունարենից պետք է թարգմանված լինի։ Իհարկե, սրա հիման վրա դժվար է ենթադրել, որ ամբողջ Ագաթանգեղոսը կարող էր ղպտերենի թարգմանված լիներ, որովհետև շատ հավանական է, որ ղպտի թարգմանիչը սոսկ մի հատված է ընտրել հունական Ագաթանգեղոսից։ Այս հատվածը կապ չունի արաբական Ագաթանգեղոսի հետ, որի համապատասխան տեղը (§ 63) բոլորովին այլ ոճ ունի։

Ղպտական միջանկյալ թարգմանություն է ենթադրում Ժ. Գարիտը նաև Գրիգոր Լուսավորչի արաբերեն Համառոտ Վարքի[2] համար, որը նա հայտնաբերել է և լույս ընծայել

---

[1] Garitte, 402—406.

[2] **G. Garitte,** Une Vie arabe de S. Grégoire d'Arménie, Muséon, t. LXV, 1—2, 1952.

Տե՛ս հայերեն թարգմանությունը «Էջմիածին», Զ, 1961։

բնագրով ու լատիներեն թարգմանությամբ։ Ձեռագիրը ԺԴ դարից է և գտնվում է Կահիրեի Ղպտի թանգարանում, սա ուղղակի հունական Ագաթանգեղոսից է ամփոփված և արաբական մյուս խմբագրությունների հետ առնչություն չունի։

Արաբական Համառոտ Վարքի խմբագիրը գլխավոր ուշադրությունը նվիրելով հենց Գրիգոր Լուսավորչին, ձգտում է դեպքերը նրա հետ կապել։ Տրդատի խոզակերպ դառնալու պատճառը համարվում է Գրիգորի խոր Վիրապ նետվելը և ոչ Հռիփսիմյանց նահատակությունը և կամ Նիկիո ժողովին գնում է Գրիգոր Լուսավորիչը և ոչ՝ Արիստակեսը։

Համառոտ Վարքի և արաբական Ագաթանգեղոսի համեմատությունը ոչ մի մերձակցություն չի բացահայտում։ Ուստի անկախ այն բանից, թե համառոտ Վարքի և հունականի միջև կա ղպտական միջանկյալ թարգմանություն թե ոչ, հիմք չկա ենթադրելու, որ սա արաբական Ագաթանգեղոսից է համառոտված։ Այս մասին պերճախոս վկայություն է երկուսի հատուկ անունների բացահայտ տարբերությունն իրարից։

Համառոտ Վարք	Արաբական Ագաթանգեղոս
طرداد	تيريظاتيس
اربسما	رفسيميا
اردكسات	ارطكظاط
لاندبوس	لا ونتيوس
يوحنا	ارثانس

Ագաթանգեղոսի արաբական խմբագրություններից է նաև նրա մյուս խմբագրության՝ Վարքի թարգմանությունը (Ն. Մառի կողմից հրատարակված), որի մասին խոսվեց ներածության մեջ։ Ըստ Ժ. Գարիտի արաբական Վարքը որոշ չափով մոտենում է հայկական Ագաթանգեղոսին։ Համենայն դեպս նրա և նորահայտ արաբական Ագաթանգեղոսի համեմատությունը ցույց է տալիս, որ իրարից անկախ բնագրեր են, և հազիվ թե արաբական Վարքի թարգմանիչը ծանոթ լիներ արաբական Ագաթանգեղոսի ձեռագրին, կամ ընդհակառակը, վերջինիս թարգմանիչը՝ Վարքի թարգմանության ձեռագրին։

Եթե մի կողմից արաբական խմբագրությունները հայկական Ագաթանգեղոսին առնչվում են հունականի և մասամբ ղպտականի (ենթադրաբար) միջոցով, ապա իրենք իրենց հերթին հիմք են դարձել հաբեշական թարգմանության համար։

Մեր դարի սկզբին Լիսաբոնում լույս տեսավ Ագաթանգեղոսի համառոտ Պատմությունը հաբեշերեն[1]։ Հրատարակիչ Հ. Է. Պերեյրան գտնում է, որ այս համառոտ խմբագրությունը կատարված է ԺԴ դարում Եգիպտոսի վանքերից մեկում։

Հատուկ անունների ձևերը հստակորեն մատնում են իրենց արաբական ծագումը։ Այդ անունների նույնիսկ աղավաղումները արաբական գրությանը հատուկ սխալներ են։ Այսպես, օրինակ, Հռիփսիմեն գրված է «Արսիմա», որտեղ Բ-ի (արաբերենում փ չկա) անկումը հետևանք է մի կետի կորստյան, պետք է լիներ «Արիբսիմա» عربسيما։ Կետերի աղավաղում է կատարվել նաև Օտա (Աութանաս կամ Աութայաս) անվան մեջ, որը պետք է լիներ Աութայան اوطايان (տե՛ս Օտայ (Աւտայ) «Հատուկ անուններ» գլխում)։

Սակայն հաբեշական[2] համառոտ խմբագրության հատուկ անունների ձևերը ուղղակիորեն չեն կապվում արաբական Ագաթանգեղոսի անունների հետ, ուստի դժվար է ասել, թե սա վերջինիս համառոտումն է։ Հաբեշականի հատուկ անունները բավական մոտ են արաբական համառոտ Վարքի անուններին, թեև վերջինս իր բովանդակությամբ բոլորովին այլ բնույթ ունի։

[1] Vida de S. Gregorio, patriarca da Armenia. Versão etiopica, publ. por F. M. E. Pereira, Lisboa, 1903.

[2] Կա նաև մի չափազանց աղավաղված հաբեշական զրույց (միաբնակ մտայնությամբ), որտեղ Տրդատի հետ հիշվում են Ս. Սարգիս, Մարտիրոս (Մեսրոպ Մաշտոց) անունները։ Սակայն հայտնի չէ արաբերենի՞ց, թե՞ այլ լեզվից է թարգմանված։ Տե՛ս Պատմութիւն Տրդատայ Եթովպիարէն, «Բազմավէպ», 1895, էջ 71—76։

* * *

Հաբեշական խմբագրության և արաբերեն համառոտ Վարքի խմբին են հարում նաև արաբական (ղպտական) Հայսմավուրքի սեպտեմբերի 26-ի, 27-ի ու դեկտեմբերի 11-ի հատվածները[1], որոնց հատուկ անունները թեև մոտ են վերոհիշյալների հատուկ անունների ձևերին, այնուամենայնիվ, նրանց բնագրերը իրարից տարբեր շարադրանք ունեն։

Տալիս ենք այդ հատվածների թարգմանությունը, որոնք, անկասկած, հունարենից են կատարված։

«Թութ ամսի տասնհինգերորդ օրը (16 սեպտեմբեր)[2]։

Այս օրը հիշատակն է Հայոց պատրիարք Սուրբ Գրիգորիոսի (Ագրիղուրիուս), որը նահատակ դարձավ, սակայն կենդանի մնաց[3]։ Նա կամավոր կերպով ծառա դարձավ Հայոց երկրում Տրդատ (Թիրդադ) թագավորի օրոք։ Թագավորը հեթանոս էր և երբ մտավ կռատունը խունկ ծխելու ու հրավիրեց սրբին միասին խնկարկելու կուռքերին, սա չկատարեց այդ ցանկությունը։ Նա (թագավորը) սոսկալի տանջանքներով ու կրակով չարչարեց նրան և վերջապես նետեց մի դատարկ գբի մեջ, որտեղ նա մնաց տասնհինգ տարի։ Պալատի կողքին ապրում էր մի այրի պառավ կին։ Սա գիշերը երազում տեսավ մեկին, որն ասաց նրան՝ հաց պատրաստիր և նետիր գբի մեջ։ Իսկ նա եկավ և այդպես արեց մինչև լրացավ տասնհինգ տարին։

Այդ ժամանակ թագավորը սպանեց կույսերին, այսինքն սրբուհի Հռիփսիմեին (Արիբսիմա), Գայանեին (Ղայանա) և ընկերուհիներին, որից հետո հանել տվեց նրան գբից։ Նրա

[1] Synaxarium Alexandrinum, t. I, fasc. 1, ed. J. Forget, Beryti, 1905 (Corpus Scriptorum Christianorum Orientalium, Scriptores Arabici, ser. tertia, t. XVIII p. 30, 43, 49, 160.

Արաբական Հայսմավուրքի մեջ սեպտեմբերի 30-ին նույնպես հակիրճ հիշվում է Ս. Գրիգորը։

[2] Սա թյուրիմացություն է, որովհետև նույն արաբական Հայսմավուրքի այլ օրինակներում սեպտեմբերի 26-ն է նշված։

[3] Բառացի՝ առանց արյուն թափելու։

պատմության մնացյալ մասը կգտնես նրա մարտիրոսության օրը Քիհաք ամսի տասնհինգին: Թող նրա ողորմությունը հավիտյան մեզ հետ լինի, ամեն»:

«Թութ ամսի քսանինը (27 սեպտեմբեր):

Այս օրը նահատակվեցին սրբուհի Հռիփսիմե կույսը, Գայանե կույսը, նրանց ընկերակից մյուս կույսերը և այլ մարդիկ, բոլորը՝ յոթանասուն ութ (այլ ձեռագրերում՝ 72) հոգի: Պատահեց Դիոկղետիանոսի (Դիկլադիանուս) ժամանակ, որ նա ամուսնանալու նպատակով մի գեղեցիկ աղջիկ ուզեց և հրամայեց, որ նկարիչները դուրս գան բոլոր կողմերը և ամեն մի աղջկա ընտրելիս տախտակի վրա նկարեն նրա բոլոր մասերը և շարժուձևերը: Երբ [նկարիչները] հասան Հռոմի (Ռումիա) կողմերը, հանդիպեցին մի կուսանաց վանք, որտեղ գտան սրբուհի Հռիփսիմեին, որը նման չուներ: Նկարեցին նրան և ուղարկեցին թագավորին, որը երբ տեսավ, մեծապես հրճվեց և կոչ ուղարկեց թագավորներին ու մեծամեծներին հրավիրելով հարսանիքի:

Երբ կույսերը լսեցին, արտասվեցին և վանքից ելնելով փախան, հայցելով Քրիստոսից զորավիգ լինել և պահպանել իրենց: Եկան Հայաստան երկիրը Տրդատի թագավորության ժամանակ և իջևանեցին անմշակ այգիների մեջ գտնվող հնձանում: Նրանց թիվն էր վեց տղամարդ և յոթանասուն երկու կին, որոնցից երեսուն և ինը կույսեր էին: Մեծ նեղության մեջ էին առօրյա ապրուստը ճարելու խնդրում, սակայն նրանցից մեկը գիտեր ապակի պատրաստելու եղանակը, որի շնորհիվ ապրում էին:

Երբ թագավորը որոնեց ու չգտավ Հռիփսիմե կույսին և տեղեկանալով, որ Հայաստանի կողմերում է, լուր ուղարկեց Տրդատ թագավորին տեղեկացնելով այս խնդիրը, որպեսզի նրան հսկի: Երբ կույսերը լսեցին, քաղաքում թաքնվեցին, սակայն ձերբակալեցին նրանց:

Տրդատը հրամայեց Հռիփսիմե կույսին փառքով ու պատվով բերել, սակայն, երբ չկամեցավ, քարշ տալով բերեցին նրան: Հենց որ սրբուհու գեղեցկությունը տեսավ, ցանկացավ պղծել, տիրանալով նրան, սակայն չկարողացավ: Բերել տվեց

նրա մորը՝ Գայանեին, որ գուցե նրա սիրտը մեղմացնի, սակայն երբ սա եկավ, սկսեց մխիթարել ու համբերության կոչ անել՝ խորհուրդ տալով չմոռանալ իսկական փեսային՝ Հիսուս Քրիստոսին և չպղծվել՝ ենթարկվելով օտար մարդկանց:

Հրամայեց [թագավորը] կտրել նրա մոր՝ Գայանեի ատամները, իսկ սրբուհի Հռիփսիմեն ուժ ստացավ Տիրոջից հաղթելու թագավորին, նրան գետին տապալեց և ետ գցեց ու դուրս եկավ՝ նրան ընկած թողնելով: Թեև սա պատերազմներում հայտնի էր որպես քաջ հերոս, խայտառակ եղավ հաղթվելով մի դեռատի կույս աղջկանից և հրամայեց նրա գլուխը կտրել: Ապա եկան զինվորները և պարաններով արյունլվա կապկպեցին նրան, լեզուն կտրեցին, աչքերը փորեցին և կտոր-կտոր արեցին: Երբ թագավորը իր թմրությունից սթափվեց, զղջաց սրբուհու սպանության համար և հենց որ իմացավ նրա մահվան լուրը, հրամայեց կոտորել բոլոր կույսերին:

Իսկ զինվորները նրանց ամեն մեկի կրունկները ծակեցին, մաշկը հանեցին և կտոր-կտոր անելով նետեցին: Նրանցից (կույսերից) մեկը հիվանդ պառկած էր և աղաղակեց, սակայն զինվորները նրա գլուխը ևս կտրեցին, նրա ընկերակիցների նման, և բոլորը մարտիրոսության պսակն ընդունեցին: Սպանվեցին բոլորը, որոնք նրանց հետ եկել էին Հռոմից, իսկ նրանց թիվը յոթանասունութ[1] էր և բոլորի մարմինները նետված մնացին:

Նրանց մարտիրոսությունից[2] հետո թագավորը խելագարվեց և տանջվեց, մինչև որ եկավ Գրիգորիոսը ու աղոթելով նրա վրա՝ բուժվեց ու հավատաց և վերցնելով սրբուհիների մարմինները մի սուրբ վայրում թաղեց: Թող նրանց ողորմությունը մեզ հետ լինի և հավիտյան պահպանի չար թշնամուց, ամեն»:

«Քիհաք ամսի տասնհինգը (11 դեկտեմբեր):

---

[1] Այլ օրինակներում կա նաև յոթանասուն, յոթանասուներկու:

[2] Այլ օրինակում «Նրանց մարտիրոսությունից» արտահայտության փոխարեն կա՝ վեց օր:

Այս օրը մարտիրոսացավ Հայոց պատրիարք սուրբ Գրիգորիոսը, որը նահատակ դարձավ, սակայն կենդանի մնաց։ Այս սրբին, ինչպես նախկինում հիշեցինք, Հայոց թագավոր Տրդատը չարչարեց կուռքերին երկրպագելու հրամանին չանսալու պատճառով և վերջապես նրան նետեց մի չոր գբի մեջ, ուր տասնհինգ տարի մնաց։

Սակայն Տերը հոգում էր նրան։ Մի պառավ կին ամեն օր նրա ապրուստը բերում էր և ոչ ոք չգիտեր, որ նա կենդանի էր։ Իսկ թագավորը իր արածն արել էր, սպանել էր Հռիփսիմեին ու ընկերակից կույսերին, քանզի կամենում էր ամուսնանալ նրա հետ, իսկ նրանց կույս մարմինները նետված էին մնացել լեռների վրա։ Նրանց մարտիրոսությունից վեց օր հետո, երբ նա կատարվածի համար շատ տխուր էր, ցավելով սրբուհի Հռիփսիմեի համար, նրա մերձավորներն առաջարկեցին հեծնել և դուրս գալ որսի, որպեսզի նրա սրտում եղածը ցրվի։ Երբ նա իր ամբողջ զորքի հետ հեծավ և դուրս եկավ, նրա վրա նետվեց մի սատանա և վայր գցեց ձիուց ու սկսեց տանջել նրա մարմինը, ինչպես նաև բոլոր մարդկանց։

Աստված նրան ցամաքային խոզի կերպարանք տվեց և նա անտառ գնալով սկսեց շրջել, հոշոտել ում որ պատահում էր։ Թագավորության մեջ շատ մարդիկ դիվահար դարձան, մեծ սարսափ պատեց ու աղաղակ բարձրացավ պալատում, և այս ամենը՝ կույսերի պատճառով։

Իսկ թագավորի քույրը երեք գիշեր երազ տեսավ։ Մի մարդ ասում էր նրան՝ եթե հայր Գրիգորիոսին գբից դուրս չբերեք, ապա դուք փրկություն կամ բուժում չեք ստանա։ Մարդիկ տարակուսեցին, քանզի կարծում էին, որ նա մեռած էր։ Սակայն նրանք եկան գբի մոտ և պարան կախեցին, ստուգելու համար, թե արդյոք կենդանի՞ էր։ Ձայն տվեցին նրան, որպեսզի պարանից կախվի։ Վեր բարձրացրին նրան, լվացին ու նոր զգեստներ հագցնելով՝ հեծյալ վիճակում պալատ բերեցին։ Իմանալով նրանցից սրբուհիների դիակների վայրը, նա եկավ այդ տեղը, և գտավ նրանց երկրի գազանների ու թռչունների [հոշոտումից] զերծ մնացած։ Հրամայեց նրանց վայելուչ տեղ պատրաստել և մեծ պատվով թաղել։ Ժողո-

վուրդը խնդրեց նրանից բուժել թագավորին իր ունեցած [հիվանդությունից]։ Նա բերել տվեց նրան ու հարցրեց՝ կկրկնե՞ս քո չար գործերը, իսկ սա գլխով ասաց՝ ոչ։ Աղոթեց նրա վրա և սատանան դուրս եկավ և խելքն ու ինքնությունը վերադարձավ։ Այնուամենայնիվ, նրա մեջ թողեց խոզի որոշ հետքեր, այսինքն ձեռքի ու ոտքի եղունգները, որպեսզի նրան ստիպի խոնարհ լինել։ Ապա դևերից բուժեց թագավորին ու նրա մարդկանց և հրամայեց երկրի ժողովրդին հավաքվել։ Նրանց համար վաթսուն օր ծոմ սահմանեց ու սկսեց քարոզել, ուսուցանել Աստծո ճանապարհը Քրիստոսի մարդեղացումը։ Բոլորը, փոքրից մինչև մեծը, ենթարկվեցին և այսպիսով հայերը դարձի եկան։

Խնդրեցին, որ մկրտի իրենց, իսկ նա ասաց՝ ինձ չի կարելի, քանի որ ես քահանա չեմ։ Սուրհանդակներ ուղարկեցին Հռոմի երկիրը և նամակներ գրեցին թագավորին՝ տեղեկացնելով, որ իրենք դարձի են եկել Տիրոջը և խնդրեցին, որ Գրիգորիոսին պատրիարք ձեռնադրեն։ Այդ ժամանակ պատրիարքն էր Ղևոնդիոսը (Լանդիուս)[1] Հռոմի պապը։ Սուրհանդակների հետ բազում ընծաներ ուղարկեցին, իսկ նրանց հետ էր նաև սուրբ Գրիգորիոսը։ Երբ տեղ հասան և թագավորն ու պատրիարքը կարդացին նամակները, հրճվեցին, որ հայերը դարձ են կատարել դեպի Տերը։ Գրիգորիոսին Կեսարիայում պատրիարք ձեռնադրեցին և մեծ փառքով ուղարկեցին Հայոց թագավոր Տրդատի քաղաքը նամակների պատասխանի հետ միասին։

Մեծ ուրախություն եղավ այդ երկրում սուրբ Գրիգորիոսի գալստյան առթիվ։ Ամենուրեք կառուցվեցին եկեղեցիներ, իսկ նա ձեռնադրեց եպիսկոպոսներ, քահանաներ և տիրացուներ։ Մի գեղեցիկ եկեղեցի կառուցեցին կույսերի դիակների վրա և ծաղկեցին նրանց եկեղեցիներն ու կրոնը։ Դրանից հետո սուրբը վերջացրեց իր գործունեությունը և ննջեց խաղաղությամբ գնալով Քրիստոսի մոտ, որը սիրել էր նրան։ Թող նրա աղոթքները մեզ հետ լինեն, ամեն»։

---

[1] Լուսանցքում՝ Սիլբիսթրուս (Սեղբեստրոս)։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԼԵԶՈՒՆ

1. ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ

Ագաթանգեղոսի արաբերեն թարգմանության լեզուն կրում է Աբբասյանների թուլացումից հետո հստակորեն նկատվող միջին արաբերենին հատուկ բազում նշաններ և մանավանդ արաբ քրիստոնյա մատենագիրների լեզվին հատկանշական գծեր[1]*։*

Կա կետերի լիակատար շփոթություն և շատ դեպքերում նրանք բոլորովին չեն նշանակված։ «Համզան» որոշ դեպքերում չի դրված, իսկ այլ դեպքերում սխալ տեղում է գտնվում և ավելորդ է։ «Դամման» (կարճ ու*) մեծ մասամբ սխալ տեղում է գտնվում, իսկ հազվագյուտ դեպքերում դրվում է «տաշդիդը» (բաղաձայնի կրկնության նշան)։ Ուղղագրության մեջ չափազանց տարածված է բառավերջի բայական «ալիֆ մակսուրա» կոչված վերջավորությունը (որը* ى *է գրվում և երկար* ա *է կարդացվում) պարզապես «ալիֆ» տառով փոխարինելու երևույթը։*

Հնչունաբանական տեսակետից արաբական Ագաթանգեղոսը դասական լեզվից շեղման բազմաթիվ օրինակներ է տալիս. ظ (ẓ) *դառնում է* ض (ḍ), فضيعة (§ 52) *փոխանակ* فظيعة*-ի՝ «չարաչար, սարսափելի»,* حفضتموها (§ 206) *փոխանակ* حفظتموها*-ի՝ «դուք այն պահպանել եք»,* ث (th) *դառնում է* ت (t) اتوابه (§ 52) *փոխանակ* اثوابه*-ի՝ «նրա հագուստները»։*

Բազմաթիվ բառեր օգտագործված են բարբառային իմաստով։ Օրինակ, شطارة (§ 2) *բառը գործածված է «քաջություն» նշանակությամբ, այնինչ դասական լեզվի մեջ նա նույնիսկ «անպարկեշտ ճարպիկի» իմաստն ունի։ «Առհավատչյա» իմաստով օգտագործված է* عربون (§ 197) *բառը,* قدام (§ 73) *բառը «առջև» իմաստով և կամ* فلحان (§ 212) *«օգուտ», «հաջողություն» նշանակությամբ։*

Կենդանի խոսակցական լեզվի (միջին արաբերեն) ազդեցությունը երևում է նաև քերականական ձևերի վրա։ Դերանունն ու գոյականը սեռով չեն համաձայնեցվում هذا الاشياء (§ 45) *«այս բաները», կամ* هذا الشجرة الذي (§ 58) *«այս ծառը, որ»։*

Բայի բառավերջի համզա կրող ալիֆը վերածվում է երկար ալիֆի ابتدي*, փոխանակ* ابتدأ *գրելու։ Բայի երկրորդ դեմք հոգնակի վերջավորության «նունը» (*ن*) ջնջվում է.* تدعو (§ 54) *փոխանակ* تدعون *«կանչում եք»։*

Կան խոսակցական լեզվին հատուկ բայական ձևեր։ Օրինակ, جايين (§ 320) *«եկողներ» և նույնիսկ բարբառային* اجا (§ 340) *ձևը, փոխանակ* جاء *-ի «եկավ»։ Կենդանի լեզվի հստակ ազդեցությունն է կրում նաև* يقرون (§ 326) *ձևը, որը դասական լեզվի մեջ պետք է լինի* يقرأون *«կարդում են»։*

2. ՀՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արաբական Ագաթանգեղոսի մեջ կան թե՛ սովորական հունական փոխառություններ, թե՛ ոչ սովորական հունաբանություններ։

Սովորական հունական փոխառություններից են ايقونة (εἰκών) *սրբապատկեր, պատկեր* اركون (ἄρχων) *իշխան, հրամանատար (օգտագործված է հայկական նախարարի փոխարեն)* برفير (πορφυρίς) *թագավորական ծիրանի,* بلاط (παλατιον) *ապարանք, արքունիք։*

[1] *Տե՛ս* G. Graf, Der Sprachgebrauch der ältesten christlich-arabischen Literatur, Leipzig, 1905.

Արաբերենի համար ոչ սովորական հունաբանությունները մեծ թիվ են կազմում: «Նշխարք ոսկերաց»[1] արտահայտության համար արաբ թարգմանիչն օգտագործում է لمصل (§ 306) բառը (λείψανον), իսկ ձև կամ արտաքին տեսքը համար՝ اسكيم (§ 11) բառը (σχῆμα): «Հարաւահողմն»[2] բառի դիմաց արաբականն ունի الرياح الغربية النوطسية (§ 14) «արևմտյան նոթուսային հողմեր» (νότος հարավային քամի), որտեղ թարգմանիչը չի թարգմանել հունարեն բառը: Հետաքրքրական է, որ հայերեն «գելարան» կամ «մամուլ» բառի դիմաց հունականն ունի τῷ κοχλίῳ[3] ձևը, իսկ արաբականը كخليون (§ 89) հունական վերջավորությամբ: Նույն պարբերության մեջ «մեքենայք» բառի համար արաբականն ունի الميخان (μηχανικῶν): Հայերեն սենեակ (տաղավար) բառի համար կա قيطون (κοιτῶν), որը ննջասենյակ է նշանակում: Արաբական վերջավորություն է ստացել «ձեռնադրություն», բառի դիմաց գտնվող شيروطونية (§ 319, 347) χειροτονία արտահայտությունը, ինչպես նաև արթնություն նշանակող اغربنيات (§ 322) (ἀγρυπνία) բառը:

Հետաքրքրական է, որ մեկ դեպքում արաբական Ագաթանգեղոսի հետ նույն հունաբանությունն ունի հայկականը «անագնովսաց» (գրակարդաց) الاغنسطيون (§ 345) ἀναγνωστῶν.

3. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Դժվար է որոշել արաբական թարգմանության ժամանակը, քանի որ այդ մասին ուղղակի տվյալներ չկան և կարելի է սոսկ քրիստոնյա արաբական մատենագրության ընթացքին հետևելով մոտավորապես որոշ ենթադրություններ անել:

Ըստ էության, արաբական քրիստոնյա մատենագրություն ասելով հասկանում ենք այն գրական ժառանգությունը, որն

[1] Ագաթանգեղոս, *810*:

[2] *Նույն տեղում, 31*:

[3] **Agathangelus,** 48.

ստեղծվեց մահմեդականության երևան գալուց հետո, թեև դրանից առաջ էլ կային քրիստոնյա արաբներ, որոնք ունեին իրենց մատենագրությունը: Քրիստոնյա արաբական մատենագրության կազմավորումը և ծաղկումը հիմնականում հետևանք էր ասորիների և Եգիպտոսի ղպտիների արաբացման, որը արաբական նվաճումից մեկ դար հետո (Ը դարի երկրորդ կես) արդեն ակնբախ երևույթ էր: Այս մատենագրության կենտրոնները դարձան Երուսաղեմի Ս. Սաբա և Սինայի Ս. Կատարինե վանքերը, իսկ նրա ստեղծման մեջ մասնակցություն ունեցան, բացի ասորիներից (իրենց տարբեր հատվածներով՝ մելքիտ, նեստորյան ու հակոբիկ) և ղպտիներից նաև Իսպանիայի արաբացած բնակիչները՝ մոզարաբները (արաբ. մուսթարաբ՝ արաբացած):

Ը և մանավանդ Թ դարերում վերոհիշյալ ժողովուրդների (նաև արաբախոս հրեաների) միջավայրում արաբերենն աստիճանաբար կերպով մրցում էր ասորերենի, ղպտերենի և լատիներենի հետ: Հունարենից արաբերեն թարգմանչական աշխույժ գործունեություն են ծավալում ասորիները, ոչ միայն իրենց քրիստոնեական համայնքների, այլև նույնիսկ Աբբասյան խալիֆայության համար: Թ դարում նշանավոր դարձան ասորի թարգմանիչ մատենագիրներ Հունայն Իբն Իսհակը և Սաբիտ Իբն Կուրրան, որոնք հունարենից արաբերեն գիտական (բժշկական, փիլիսոփայական և այլն) թարգմանություններ կատարեցին և խթանեցին արաբների մտավոր զարթոնքը:

Թեև քրիստոնյա արաբ մատենագրության մեջ թարգմանություններ էին կատարում նաև ասորերենից ու ղպտերենից, այնուամենայնիվ, հիմնական աղբյուրը հունական մատենագրությունն էր: Հին Կտակարանի տարբեր թարգմանությունները, որոնք կատարվել են այդ երեք լեզուներից, սկիզբ են առել դեռ Ը դարում, իսկ Ժ դարում արդեն կային Հին և Նոր Կտակարանի ճանաչված թարգմանություններ:

Ժ դարում սկիզբ առավ քրիստոնյա արաբ մատենագրության ծաղկման շրջանը, որը տևեց մինչև ԺԴ դարը: Ժ դա-

րում Եգիպտոսում հայտնի դարձան Սաիդ Իբն Բիթրիկ, իսկ Ասորիքում Մահբուբ (Ագապիոս) ալ-Մանբիջի պատմիչները։ Առաջինի գործը շարունակել է ԺԱ դարում Յահյա իբն Սաիդ ալ-Անթաքին (Անտիոքացի)։ ԺԳ դարում, թեև արաբերենը տիրապետող լեզու էր քրիստոնյա արաբների մոտ, այնուամենայնիվ ասորի մատենագիր Աբու-լ-Ֆարաջ Իբն ալ-Իբրին (Բար Հեբրեոսը) գրում էր երկու լեզվով՝ արաբերեն (պատմական) և ասորերեն (խրատական-կրոնական)։

Քրիստոնյա արաբ մատենագիրների հիմնական հատկանիշներից էր ռամիկ լեզվից չխուսափելը և արաբերենի այն շրջանը, որը լեզվաբանության մեջ «միջին արաբերեն» է կոչվում, բավական հարազատ ձևով արտացոլվել է հենց նրանց երկերի մեջ։ Մահմեդական արաբ (կամ արաբալեզու) մատենագիրները, սկզբունքորեն ջանում էին հավատարիմ մնալ Ղուրանի դասական լեզվին ու ոճին։ Արաբերենի պատմության մեջ Ժ դարը համարվում է միջին արաբերենի արագ զարգացման շրջան, երբ խոսակցական ռամիկ լեզուն զգալիորեն տարբերվում էր մատենագրության «գրաբար» լեզվից և իր արտացոլումը գտել է, ինչպես ասվեց, առաջին հերթին քրիստոնյա արաբական մատենագրության մեջ։

Արաբական Ագաթանգեղոսի լեզուն ունի միջին արաբերենին շատ բնորոշ գծեր, ուստի դժվար է այն Թ դարից ավելի հին համարել[1]։ Սակայն եթե Թ դարը համարենք այն սահմանը, որից առաջ այդ թարգմանությունը չէր կարող կատարված լինել, ապա ավելի դժվար է որոշել այն սահմանը, որից հետո նա չպիտի անցներ։

Թեև արաբական Ագաթանգեղոսի ձեռագիրը 1328/29

[1] Անունների հունական ձևերի արաբերեն տառադարձման մեջ կան հնության ցույց տվող որոշ նշաններ։ Հունարենի β տառը, որն արդեն միջնադարում «վ» էր արտասանվում, մեր արաբական ձեռագրում հաճախ ավանդաբար տառադարձված է հին արտասանությամբ՝ «բ» (տե՛ս Ագուանք, Բագաւան, Բասեն, Բասոս անունները, գլուխ Գ)։ Իհարկե, սա հնության նշան է և գուցե իրավունք տար թարգմանության ժամանակը Թ դարից առաջ տանելու, սակայն արաբական բարբառային ձևերի առատությունը մեզ կաշկանդում է այս հարցում։

թվականից է, այնուամենայնիվ թարգմանությունը կատարվել է դրանից առաջ։ Այդ մասին է վկայում առաջին հերթին այն փաստը, որ մեզ հասած գրչագիրը ընդօրինակություն է և ոչ թե արաբ թարգմանչի ձեռացագիրը։ Հատուկ անունների ծայրահեղ աղավաղումները չէին կարող թարգմանչի ձեռքով կատարված լինել, այլ մի քանի անգամ արտագրվելու հետեվանք են։ Դրա ցայտուն օրինակներից է Աղբիանոսի անունը, որը հունականից տառադարձվելով պետք է լիներ الفينوس, սակայն դարձել է امينيوس։

Պետք է նկատի ունենալ նաև այն փաստը, որ արաբ թարգմանչի օգտագործած ընտիր հունական օրինակին հարող գրչագրերը (Վատիկանյան, Օտտոբոնյան) մեծ մասամբ հին են՝ Թ—ԺԲ դարերից, որից հետո հավանաբար շարքից դուրս են եկել։ Իհարկե, որևէ դարաշրջանում հնարավոր էր այդպիսի հին ձեռագրեր ձեռք բերել, սակայն ավելի հավանական է ենթադրել, որ մոտավորապես ԺԲ դարից հետո չպիտի կատարված լիներ սույն արաբական թարգմանությունը։

Թարգմանչի անունը մեզ չի հասել և կարելի է լեզվական տվյալների հիման վրա ենթադրել, որ նա պետք է արաբ եղած լիներ։ Թարգմանիչը որոշ հունական բառեր չհասկանալով՝ դարձրել է տեղանուններ։ Հայկական Ագաթանգեղոսի «շինանիստ (քաղաքացն)» բառի դիմաց գտնվող ἐν ἡσυχία καὶ εὐανθεία[1] «հանգիստ և բարեկարգ» բառերը թարգմանիչը տեղանուն համարելով գրում է في يسوشياوا وذنيا (§ 2), որն արաբերեն ոչինչ չի նշանակում, իսկ (ի կողմն մի) հիւսիսոյ արտահայտության դիմաց գտնվող τὰ βόρεια[2] մասնիկն ու գոյականը միասին դառնում են մեկ բառ և այն էլ տեղանուն طافريا (§ 164)։ Սահմանակից բառի հունական թարգմանությունը ὅμορον[3] նույնպես արաբ թարգմանիչը տեղանուն է դարձրել امورون (§ 285)։ Բնականաբար հույնը չէր կարող նման սխալներ թույլ տալ, որոնք անկասկած արաբ թարգմանչի ձեռքով են կատարված։

[1] Agathangelus, 10

[2] Նույն տեղում, 81։

[3] Նույն տեղում, 132

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐ

Արաբական Ագաթանգեղոսի հատուկ անունները հունական թարգմանության ունեցած ձևերի հարազատ վերարտադրություններն են։ Հեթանոս աստվածությունների հայկական անունները բոլոր դեպքերում թարգմանված են հունարենի։ Նույնիսկ անձնանունները և հայկական տեղանունները տրրված են հունական ձևով և այս բոլորը գրեթե նույնությամբ կրկնվում է արաբական թարգմանության մեջ, որը պահպանում է նույնիսկ հունականի հոլովական վերջավորությունները։

Հատուկ անունների մի մասը արաբական Ագաթանգեղոսի մեջ աներևութացել է։ Դրանցից մի քանիսը՝ Արտաւան սպարապետ, Գուգարացիք, Տաճկաստան, Քուշանաց կողմանք և այլն, հունականն էլ չունի, իսկ մյուս մասը արաբականն է կորցրել՝ Աղձնիք, Ամդացւոց քաղաք, Աշոցք, Արուաստան, Կաղարջք, Մծբին։

Ուսումնասիրությունը հեշտացնելու համար այբբենական կարգով տալիս ենք տեղանունների համեմատական ցուցակը[1]:

Աբրահամ ’Αβραάμ ابراهيم *(39, 126, 144)*

Ագապէս ’Αγάπιος حبيب *(337)։ Սա այն բացառիկ դեպքերից է, երբ արաբականը տալիս է հունարենին համապատասխան արաբական բառը (անունը), որը նույնիմաստ թարգմանությունն է։*

Աթանագինէս ’Αθηνογένους أثيناجانس *(306, 328)։*

Ալանաց *(դրունք)* ’Αλανῶν دروب الانيين *(2)։ Մի այլ տեղում նույն բառը թարգմանվում է* ابواب الابواب *(334) «դռների դռներ» հավանաբար շփոթվելով Ճորա պահակի (Դերբենդ) հետ։*

Աղբիանոս ’Αλβῖνος الفينيوس *ձեռ.* امينيوس *(337),* ’Αλβῖνον الفينن *(338, 357)։ Այստեղ հունականի հոլովական վերջավորությունները նույնությամբ կրկնվում են։*

Աղուանք ’Αλβανοί الالبانيون *(3)* الالبانيين *(2)։*

Այրարատ ’Αραράτ ارارط *(4, 14, 105, 127, 275, 289, 299, 313, 333, 358, 360)։*

Անակ ’Ανάκ اناق *(սկզբ. վերն., 8, 10, 21)* اعناق *(104)* عناق *(105)։ Միևնույն անվան այսպիսի բազմաձևությունը թարգմանչի կամ գրչի լրկ անփութության հետևանք է։*

Անահիտ ’Αρτέμιδι ارتاميذة *(36)* Ἀρτέμιδος ارتاميطس *(31, 32)* ارتاميذس *42, 108, 285)* ارتاماس *(51)* ارتيمس *(277,* ارتميدس *(278)։*

Անգեղ *(տուն)* ’Αγγελιτῶν انجاليطون *(357)։ Մի այլ դեպքում (292) թարգմանիչը տարօրինակորեն տալիս է* اسرار *ձևը։ Կարելի է սոսկ ենթադրել, որ բառի հունական «լուր» իմաստը նկատի ունենալով թարգմանիչը ավել է այսպիսի աղճատված իմաստ (գաղտնիքներ)։*

Անի Ἰανί يانى *(284)։ Սա Անի Կամախն է։*

Անտիոքես ’Αντίοχος انتيوخس *(337)։*

Աշխեն ’Ασιχήνη اسيشينى *(265, 266, 289, 296, 316)։*

Ասորեստան ’Ασσυρίαν, Συρίαν سورية *(2, 6, 106, 174)* سوريا *(106)։*

Աստղիկ ’Αστέρος نجم *(306)։ Թե հունականը, թե արաբականը այս հատուկ անունը որպես հասարակ անուն են թարգմանել, իբրև հատուկ անուն ընդունելով միայն հաջորդող Ափրոդիտեն։*

[1] *Անունները ուղղական հոլովով տալիս ենք այն դեպքում, երբ բնագիրը այդ ձևն ունի, կողքին դնելով հոլովված ձևերը։ Այս գլխում արաբերեն բնագրի պարբերությունների համարները տալիս ենք սոսկ փակագծերի մեջ։*

Ատրպատական—այս ձևը թեև հունականում պահպանված է, այնուամենայնիվ արաբականը զանց է արել՝ խառնելով Պարսք անվան հետ:

Արամազդ Διός ديوس (36, 109) Κρόνου (հայր Զևսի) قرونس (284): Երկու դեպքում հայկական Արամազդի դիմաց հունականն ունի Դիոս, իսկ արաբականը՝ زاوس (285, 288):

Արիստակես 'Αρωστάκης ارسطاكس (347, 349, 350, 351, 354, 357, 362) الارسطاكس (361):

Արծրունիք Αρσουρσουνῶν ارجورذن ձեռ. صاصورذن (292):

Արշակունիք 'Αρσακιδῶν الصراكيطون (282). արաբական որոշիչ հոդը (ալ) շփոթվել է այս անվան առաջին վանկի հետ:

Արսուկես 'Αρσύκης ارصوكس (337) արաբականը պահպանել է հայկականին հարազատ ձևը: Հունականի նախնական ձևը պետք է եղած լիներ 'Αρσούκης (տե՛ս Agathangelus, S. 136):

Արտաշատ 'Αρταξάτ ارطكظاط (16) ارطكصاط (105) ارطقساط (164, 189, 190 ارطقسات 334) ارطكساط (184, 187), ارطواكساذ (348) 'Αρταξάτης ارطكصاتس (16) 'Αρταξερξοκτίστην ارطاكسر كصوكتيستن (277):

Արտաշիր 'Αρτασίρου ارضاسيروا (1) ارطاسيروا կամ ارظاسيروا (1) اردشير (1):

Արտավազդ (հուն. չունի) ارطواكساذ (348) հունարենում պարզապես հիշվում է, որպես սպարապետ Հայոց Մեծաց:

Արտավան 'Αρταβάνου ارطابانوا (1) ارطابانو (3):

Արտիթես 'Αρτιος ارتاقس (337) արաբականը հարազատորեն պահել է այս անունը, այնինչ հունականում աղավաղված է:

Աֆրոդիտես 'Αφροδίτης الزهرة (306) Արաբերենն այս դեպքում ինքնուրույն է թարգմանել հունական դիցաբանական անունը: Զուհարան գեղեցկության դիցուհին էր:

Բաբելոն Βαβυλωνίων بابل (153 182):

Բագայարիճ Βαγααρίζ فاغاريز (288):

Բագավան Βαγαυάν باغوان (313):

Հայկական Ագաթանգեղոսի մեջ Հովհաննեսի և Աթանագինեի նշխարների բերման առթիվ նշվում է, որ նրանց հիշատակի տոնը կատարվելու էր «ի նմին յաւուրն»: Սակայն հունականն ու արաբականը տվել են այդ ավանի անունը՝ Բագավան:

Բասեն Βασηνῶν باسينون (337):

Բասոս Βάσσος بصص (337):

Բարշամինայ (դիք) Βαρσαμήνης فاراثامينس ձեռ. فاراماميثس (283):

Գաղիացւոց (երկիր) Γαλλίων غاليا (335):

Գայիանէ Γαϊανή غايياني (սկզբ. վերն., 120, 126, 139, 141, 149, 156, 157, 161, 172, 175, 176, 177, 178, 180, 181, 240). غاياني (266) غاياييني (114-ի վերն., 115):

Գայլ Λύκου الذئب (31, 285): Այս գետի անունը հունարենում և արաբերենում թարգմանված է:

Գոթք Գութք Γόθθων, الغطثيين (23, 28, 29, 30):

Գրիգոր Γρηγόριος غريغوريوس (սկզբ. վերն., 20, 32, 34, 44, 46, 52, 54, 83, 85, 88, 92, 93, 94, 99, 100, 101, 103, 104, 107, 113, 189, 191, 195, 208, 209, 212, 228, 229, 230, 231, 232, 258, 260, 262, 263, 264, 265, 267, 271, 273, 277, 279, 281, 287, 290, 291, 293, 294, 295, 297, 300, 301, 302, 303, 305, 306, 307, 308, 309, 313, 320, 321, 325, 328, 333, 338, 343, 346, 347, 348, 349, 350, 351, 354, 362) اغريغوريوس (32, 33, 35, 37, 82, 91, 94, 184, 185, 187, 189, 194, 196, 236, 255, 268, 279, 284, 295, 297, 313, 315, 318, 326, 344, 357, 360, 361, 363) Γρηγόριε غريغوريا (103, 188):

Դանիել Δανιήλ دانيال (153):

Դատ Δατάς داطاس (348):

Դարանաղեաց (գաւառ) Δαραναλιτῶν الضارانالیطون (283) ضارانالیطون (349):

Դաւիթ Δαβίδ داوود (56, 160, 171):

Դեբովրայ Δεβόρραν ذافر (154):

Դերջան Δερζανιτῶν زرفانيطون (287):

Դիոկղետիանոս Διοκλητιανός ديوقليتيانوس (*114, 116, 128, 129*)։

Դիցաւան βωμῶν بامون (*313*)։

Այս դեպքում թարգմանիչը հունարեն «տաճար» իմաստով թարգմանել է հայկական տեղանունը, իսկ արաբերեն թարգմանիչը հունարեն բառը տեղանվան փոխարեն է ընդունել։ Այլ դեպքերում Դիցավան տեղանունը հունարենում և արաբերենում դարձել է Բագավան باغوان (*314, 328*)։

Եբրայեցիք ʽΕβραίων العبرانيين (*219*)։

Եկեղեաց (*գաւառ*) ʼΕκελισηνήν اقليساني (*285*)։

Մի այլ դեպքում շփոթելով եկեղեցի բառի հետ արաբ թարգմանիչը գրել է الكنيسة (*31*) *բառը։*

Եղիա ʽΗλίου ايلياس (*340*)։

Ենովք ʼΕνώχ اخنوخ (*59*)։

Երազամոյն ʼΟνειρομούσσοις انيروموسس (*277*)։ *Հունական Ագաթանգեղոսը հայերենից թարգմանել է այս բառը, իսկ արաբերենը հունականից նույնությամբ կրկնել է, նույնիսկ հոլովական վերջավորությամբ։*

Երասխ ʼΕρασάχ اراصاخ (*16*)։

Սա հայկաբանություն է, որ հունականից անցել է արաբականին։

Երեզ ''Ερη̃ζ اريز (*285*)։

Արաբերենն ունի նաև اريكس (*31*) *ձևը։ Հունական Օստաբոնյան գրչագրում կա* ''Ερεξ (Garitte, 393)։ *Մի այլ դեպքում, երբ հայերենն ունի «Երիզայ» ձևը, արաբականը նույն ձևով տալիս է* يريظا (*31*), *այնինչ հունականը դարձյալ նախորդ ձևն ունի։*

Երուսաղեմ ʽΙερουσαλήμ اورشليم (*167, 249*)։

Եւայ Εὔας حواء (*62*)։

Եւսեբիոս (*արքեպիսկոպոս և եպիսկոպոս*) Εὐσέβιος اوسابيوس (*337, 359*)։

Եւթաղիոս Εὐθάλιος اوثاليوس (*337*)։

Եփրատ Εὐφράτου الفرات (*173, 305, 306, 315, 324, 325, 337*)։

Զարաւանդ Ζαρουάνδων زاروواندون (*292*)։

Զեւս Διός زاوس (*284*)։

Հունական Ագաթանգեղոսը չունի ուղղական ձևը, այլ տալիս է սեռականը՝ Դիոս։

Թաբօրական (*լեառն*)։ *Այս անունը հունարենում չի պահպանվել, սակայն արաբերենը աղավաղված ձևով ունի* الباقاريون (*ալ-բատարիմուն*) (*342*), *որը գուցե եղած լինի* التابارمون (*ալ-տաբարիմուն*)։ *Արաբ գրիչը հավանաբար կարծել է, թե սա հունարեն* πάτερ ἡμῶν *«Հայր մեր» խոսքն է։*

Թիլն Θισδίας شذياس (*285*)։ *Հունական փոխված ձևը նույնությամբ կրկնվել է արաբերենում։*

Թորգոմ Θοργόμ فرغوم (*275*) ثرغون (*293*)։

Թորդան Θορδάν ترظان (*283*)։

Իսահակ ʼΙσαάκ اسحق (*144*)

Իսրայել ʼΙσραήλ اسرائيل (*123*) *144, 344*)։

Իտալացւոց (*աշխարհ*) ʼΙταλῶν ايطالون (*358*)։

Լիկիանէս, Լիկիանոս Λικινιανός ليكيانوس (*25, 27, 28*) Λικινιανῷ ليكيانوا (*20*)։

Լփինք Λιφίννιοι الليفنينيون (*3*)։

Խաղխաղ Χαλχάλ الخلخال (*11*)։

Խաղտիք Χάλτων خلطن (*334*)։

Նույնիսկ الكلدانيين (*284*), *ուր խաղտիքը շփոթված է քաղդեացոց հետ։*

Խոսրով Κουσάρω قوصاروا (*սկզբն. վերն., 1, 11, 104, 105*) قوصارو *3, 4, 6, 8, 19*), Κουσάρων قوصارون (*2*)։

Խոսրովիդուխտ Κουσαρωδούκτα قوصارو ضوقطا (*266*) قوبصارواوضوقطا (*184*) قوصاروضوكتى (*289*) قوصاروضوكتيا (*296, 316*), Κουσαρωδουκταν قوصاروظوقطن (*265*)։

Ծաւդէից (*աշխարհ*) Σουδαίων صوداون (*292*)։

Ծոփաց աշխարհ (*հունարենը չունի*) صوفانيطون (*292*) *պահպանվել է հունարենի Վատիկանյան օրինակում* σοφονιτῶν (Garitte, 387)

Կայէն Κάιν قاين (*62*)։

Կապադովկիա Καππαδοκία قباذوكيا (*293, 349*) قبادكيا (*20*)։

Կասպք Κασπῖται القسبيتيون (3)։

Կարմիր (ծով) ἐρυθρὰν (θάλασσαν) البحر الاحمر (153)։

Կուկաս Καυκασίω الاقرع (279) Արաբերենում ալ-Ակրա նշանակում է լերկ լեռ։ Այս անվամբ մի լեռ կա Մեքքայի և Մադինայի միջև։

Կեսարիա Καισαρεία قيسارية (20, 21, 293, 296, 300, 301, 316, 319, 349)։

Կոստանդ Κωνσταντίου قسطا (335)։

Կոստանդիանոս Κωνσταντῖνος قسطنطين (335, 359, 361)։

Կորդուք Κορδουιτῶν قورضويطون (292)։

Հայաստան, Հայք Ἀρμενία ارمينية (սկզբ. վերն. 1, 2. 4, 6, 7, 11, 12, 19, 21, 28, 30, 51, 78, 82, 104, 105, 107, 127, 128, 133, 134, 135, 136, 147, 173, 213, 275, 281, 283, 284, 285, 292, 293, 296. 305, 313, 329, 332, 333, 334, 344, 345, 349, 351, 352, 356, 362)։

Հայք Մեծք Ἀρμενίας μεγάλης ارمينية العظمى (սկզբ. վերն., 18, 30, 31, 109, 111, 316,) ارمينية العظيمة (305)։

Հոնք, Հոնաց Οὔννων Արաբական թարգմանության մեջ այս անունը կորել է, սակայն կա նախադասության մեջ իմաստ չարտահայտող ترك (2) բառը, որը, եթե կարդանք որպես բայ taraka, կնշանակի թողեց, իսկ եթե վերցնենք որպես հատուկ անուն՝ turk, հիմք է տալիս ենթադրելու, որ գուցե հոների փոխարեն Թուրք անունն է օգտագործվել թարգմանչի կողմից, ապա գրիչը այն ընկալել է որպես վերոհիշյալ բայը։

Հռիփսիմէ Ῥιψίμη رفسيميا (114-ի վերն., 115, 116, 120, 126, 137, 138, 139, 141, 142, 149, 152, 154, 156, 157, 158, 161, 168, 170, 172, 174, 175, 176, 178, 180, 181, 182, 199, 200, 240, 259, 267, 268) ريبسيمة (սկզբ. վերն.)։ Երկու դեպքում կա նաև հայկական և հունական Ագաթանգեղոսի մեջ բոլորովին չհիշվող ابركسيا Ibraksyā (սկզբ. վերն., 115) ձևը։ Հայկական Ագաթանգեղոսը հետևյալ կերպով է ստուգաբանում «Մանաւանդ դու Հռիփսիմէ ըստ անուանդ քում արդարև ընկեցեալ եղեր...ի մահուանէ ի կեանս» (175)։ Նույնը

կրկնում է նաև հունական Ագաթանգեղոսը, ավելի դիպուկ ձևով, քանի որ «ընկեցեալի» դիմաց օգտագործված հունական բայը (ἐξερρίφης) տալիս է նաև Հռիփսիմեի անվան ենթադրյալ ստուգաբանության հունական ծագումը ῥίπτω «նետել, գցել» ձևից։ Արաբականն անակնկալ կերպով նոր ստուգաբանություն է տալիս, կապելով Եպրաքսիա անվան հետ։ Այս հունական անունը հայերի մոտ ուշ միջնադարում է (ԺԵ դար) հանդիպում։ Հավանաբար «բարեբախտություն» նշանակությունն ունենալու համար է, որ այս անունը հատկացվել է նահատակ կույսին, սակայն հայկական և հունական Ագաթանգեղոսի մեջ այդ անվան բացակայությունը թույլ է տալիս ենթադրելու, որ արաբ թարգմանչի ձեռքով է ավելացված։

Հռոմոց (աշխարհ) Ῥωμαίων الروم (17, 19, 20, 115, 129, 136, 174, 180, 358) رومية (17, 115, 127)։

Ձիթենեաց (լեառն) ἐλαιῶν الزيتون (342)։

Ղևոնդիոս Λεόντιος لاونتيوس (296, 300, 301, 315, 316)։

Ճիղբք Σιλβανοί السلبانيون (3)։

Ճորայ (պահակ) (καὶ) Ζουάρου زوارو (2)

Այս անունը երեք լեզվով էլ աղավաղված ձևով է հանդիպում։ Հայկական ձեռագրերում մեծ մասամբ «զիւրոյ» ձևն է հանդիպում։ Հունական Լավրենտյան գրչագրում շաղկապը միացած է տեղանվան, արաբականը՝ Լավրենտյանի համեմատությամբ ավելի հստակ է։

Մաժաք Μασάχ مصاخ (293)։

Մանեայ այրք Μαναάρχ ماناارخ (349)։

Մասիս (լեառն) Μασίς ماسين (267)։

Մարիամ Μαρίας مريم (63, 279) مرتمريم (62)։

Մեծամօր Βάθεος العميق (177)։ Արաբականը պարզապես թարգմանել է հունարեն բառի «Խորունկ» իմաստը։

Մովսէս Μωσῆς موسى (144, 221, 344)։ Նաև Մովսէս եպիսկոպոս موسى (337)։

Մրհական, Մհրական (մեհեան) Ἡφαίστου يفسطوا (288)։

Յայէլ Ῥαχήλ يايل (154)։

Յաշտիշատ Πολύθυτος الكثير الذبائح (305)։

Հունարենն ու արաբերենը հաջորդաբար թարգմանել են այս տեղանվան իմաստը։

Յոյնք (*Յունաց*) Ἰωνίων اليونانيين (22, 23, 24, 36) Ἰωνίας يونياس (299, 358)։

Յովհաննես (*Մկրտիչ*) *աւետարանիչ* Ἰωάννου مار يوحنا (306) يوحنا المعمدان (328, 340) *նաև Յովհաննէս եպիսկոպոս* (337)։

Յովնան Ἰωνάν يونان (153)։

Նաբուգոդոնոսոր Ναβουχοδονόσορ بختنصر (153, 182)։

Նանե (*Նանէական*) Ἀθηνᾶς أثينس (285)։

Նիկիա Νικαέων نيقية (361)։

Նոյ Νῶε نوح (145)։

Նպատական (*լեառն*) Ναπάτ ناباط (314)։

Շուշան Σουσάνναν صوصنا (153)։

Ոսկեմայր Χρυσῆς μητρός الام الذهبية (306)։

Ուտի [Ουτη] نوتى (11)։

Ուտիացւոց (*աշխարհ*) Οὐτίων اوتيون (292)։

Պարթև πάρθος الفراتى (11, 14, 15, 17, 20, 105)։

Պարթևք πάρθοι الفراتيين (1, 8, 15, 174)։

Պարսք Πέρσαι, Περσίδα الفرس (2, 4, 6, 7, 9, 11, 14, 15, 17, 18, 19, 30, 106, 110, 173, 174) فارس (30, 106)։

Պաւղոս Παῦλος بولص (199, 332, 338, 344) بولس (276)։

Ռեբեկայ (*Ռեբեկկա*) Ῥεβέκκαν رفقة (144)։

Ռշտունեաց (*աշխարհ*) Ῥουστίνων رستينن (292)։

Սառա Σάρραν سارة (144)։

Սասան Σασάνου صاصنوا (1)։

Սատաղացւոց (*քաղաք*) Σαταλῶν صاطالون (334)։

Սեբաստիա (*Սեբաստացւոց*) Σεβαστηνῶν سبسطية (302)։

Սիւնեաց (*աշխարհ*) Συνιτῶν سونسطون (292)։

Սոյզն Χάσματος الهوتة (19)։

Սպանիացւոց (*երկիր*) Σπανίων الاسبانيا (355)։

Ստանրացի Σταχριτῶν الاصطخريطن (1)։

Վահագն Ἡρακλέος يراقليوس (109) ايراقليوس (306)։

Վաղէվանեան Οὐαυήιος واويوس (306)։

Վաղարշ Οὐαλερίου والرصوا (1)։

Վաղարշապատ Οὐαλαρσαπάτ والرساباط (358) والرصاباط (105, 127, 128) Οὐαλεροκτίστη والاروكتستى (14) واليروكتستى (14, 189) Οὐαλεροκτίστην واليراكتستن (289) Οὐαλεροκτίστης والاركتستس (16) واليروكتستس (277, 299)։

Վիրք Ἰβήρων الجرز (2)։

Սա այն հետաքրքրական դեպքերից է, երբ արաբ թարգմանիչն ինքնուրույն կերպով տվել է արաբ պատմագրության հատուկ ձևը (Ջուրզ)։

Վրթանես Οὐρθάνης ارثانس *ձեռ.* ادنانس (347) Οὐρθάνην ارثانن (349)։

Տաճատ Τασάτης طاساتس (348)։

Տաճկաստան, Տաճկաց Σαρακηνῶν العرب (6, 173)։

Տարօնոյ (*երկիր*) Ταραυνῶν طارونان (305)։

Տաւրոս (*լեառն*) Ταύρου طورس (305)։

Տիսբոնի (*Դրունք*) Κασπίων πυλῶν قسبيون (2)։

Հունականի և արաբականի Կասպից ձևը, որպես բացատություն կա նաև հայկական Ագաթանգեղոսի մի գրչագրում «ի դրունս Կազբից» (Ագաթանգեղոս, ԼԷ)։

Տրդատ Τηριδάτης تيريظاتيس (19, 21, 22, 25, 26, 28, 30, 31) تيريظاطس (296) Τηριδάτιος تيريظاتيوس (تيريطاتيوس) (83, 104, 106, 108, 109, 110, 111, 128, 136, 154, 174, 175, 263, 282, 289, 313, 316, 321, 346, 348, 350, 356, 357, 359, 361, 362)։

Փառական Շեմակաց Φαρακάνη Σεμάκων فاراقانى ساماقون (182)։

Փղշտացիք Φυλιστιαίων الفلسطينيين (144)։

Քանանացւոց (*ազգք*) Χαναναίων الكلذانيين (144)։ *Արաբ թարգմանիչը կամ նույն գրիչը բացահայտ շփոթության մեջ է, քանանացին շփոթելով Քաղդեացու հետ։*

Ոտայ, Ուտայ, Αὐταΐαν اوطاييان (187, 188)։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ագաթանգեղոսի[1] այս հատվածը հատուկ խորագիր ունի թե արաբականում, թե հայկականում։ Հայկականի «Պատմութիւն յաղագս ծննդեան և սննդեան և վարուց...» կամ («Վարք և Պատմութիւն սրբոյն Գրիգորի» (և այլ տարբերակների) խորագրերի փոխարեն, արաբականն ունի «Հանուն հոր և որդվո և հոգվույն սրբո մեկ Աստված. երեսուներորդ օրը. Պատմություն մեր հոր, Մեծ Հայք երկրի եպիսկոպոս, սուրբ Գրիգորի՝ Անակ պարսկի որդու և Հայաստանի թագավոր Խոսրովի ազգակցի, Գայանեի, Հռիփսիմեի, որը Եվպրաքսիան է և միանձնուհի ընկերուհիների հետ Մեծ Հայքում [կրած] մարտիրոսության. թող աստված պահի մեզ նրանց աղոթքներով, ամեն»։

Եվպրաքսիա անունը հավանաբար ավելացված է թարգմանչի ձեռքով (տե՛ս Հռիփսիմե անունը «Հատուկ անուններ» գլխում)։

2. «Երբ Պարթևաց թագավորության տարիները լրացան, քայքայվեց Վաղարշի որդի Արտավանի իշխանությունը ու

[1] Տալիս ենք միայն այն պարբերությունների թարգմանությունը, որոնք շեղում են հայկական բնագրի իմաստից կամ հունարեն թարգմանությունից։ Թարգմանված հատվածները չակերտների մեջ են առնված։ Հայկական և հունական Ագաթանգեղոսի պարբերությունների համարները չենք նշում, քանի որ արաբերեն բնագրում հատուկ փակագծերի մեջ (հայկականը՝ կլոր, իսկ հունականը՝ քառակուսի) են դրված։

սպանվեց Արտաշիրի ձեռքով, որը Սասանի որդի Արտաշիրն է և չկարողացավ երկար ժամանակ դիմանալ։ Այս Արտաշիրը Ստահրացիների զորավարն էր. հավաքեց պարսիկ զինվորներին ու նրանց պետերին, համոզեց ու առաջնորդեց նրանց, իսկ ինքը նրանց պետը դարձավ։ Այդ ժամանակ կործանվեց Պարթևաց թագավորությունը, քանզի նրանք ցանկանում էին այդ թագավորության ու իշխանության խորտակումը։

Պատահեց, որ Արտավանի մահվանից հետո, որն սպանվեց Սասանի որդու՝ Արտաշիրի ձեռքով, այդ գույժը հասավ Հայաստանի թագավոր Խոսրովին, որը սպանված Արտավանի եղբայրն էր և Պարթևաց տերության մեջ երկրորդը, քանի որ Հայաստանի թագավորը գտնվում էր Պարթևաց տերության գերակշռության ներքո։ Արդ, երբ լսեց այդ գույժը, հավաքեց իր զորքը, սակայն չկարողացավ այդ զորքով իր եղբոր վրեժը անմիջապես լուծել պատերազմի մեջ։ Վերադարձավ մեծ տխրությամբ, ի վիճակի չլինելով հանդուրժել պատահած դժբախտությունը, մանավանդ, որ կռվի մեջ հաջողություն չունեցավ և ոչ էլ եղբոր վրեժը լուծեց, և վերադարձավ գալով իր երկիրը»։

3. «Մեկ տարի մնալուց հետո, Հայոց թագավոր Խոսրովն սկսեց զորք հավաքել և այս բանում ապավինեց Աղվանից ու Վրաց պետերին։ Բաց արեց Ալանաց դռները և այն աշտարակը, որ Ջուարու աշտարակ էր կոչվում։ Այնտեղ իր զորքի մեծամեծներից շատ մարդկանց թողեց, որպեսզի պարսից կողմերը արշավեն, հասնեն մինչև Ասորիք և Կասպից կոչված դռները, հարձակվեն «հանգիստ և բարեկարգ վիճակում» գտնվող քաղաքների ու դաստակերտների վրա, բնաջինջ անեն նրանց ու կռվեն նրանց դեմ։ Իսկ նա շտապեց հասնել իր նպատակին, ցանկություն ունենալով վերացնել պարսից օրենքը, իր եղբոր վրեժը լուծել և ոչ թե լոկ նրանց տերությունը կործանել։ Քենով էր լցված, սիրտը վիրավոր, և քանի դեռ նպատակին չէր հասել, ինքնավստահ էր ու հպարտ, վստահ լինելով իր անձի, զորքի ու ռազմիկների բազմության և իր՛ մարդկանց քաջության վրա»։

Այս պարբերության մեջ «հանգիստ և բարեկարգ վիճակում» չակերտավոր խոսքերը ձեռագրում արաբատառ հունարեն են գրված (տե՛ս Բ գլխի «Թարգմանության ժամանակը» ենթագլուխը)։

4. «Այդ ժամանակ բոլորը եկան նրա ետևից անհամար բազմությամբ։ Եկան Աղվանք, Լփինք, Ճիղպք, Կասպք և ուրիշներ այդ կողմերի ժողովուրդներից, որպեսզի Արտավանի արյան վրեժը լուծեն, քանզի նա (իմա՝ Խոսրովը) խորը տրտմության մեջ էր բնական արյունակցության պատճառով, որը խոցվեց, հանուն նրանց տոհմական պատվի և այն իշխանների, որոնք սպանվել էին։ Այս Խոսրովը դեսպաններ էր ուղարկել իր տոհմայիններին, որպեսզի թիկունք լինեն, օժանդակեն կանգնելու նոր թագավորության դեմ և օգնության ձեռք մեկնեն։ Սակայն տոհմայինները, ազգապետներն ու իշխանները չանսացին նրան, քանզի (նախընտրեցին) համակերպվել և խոնարհվել Արտաշիրի թագավորության առջև, քան լինել ցեղակիցների ու եղբայրների հետ»։

5. «Սակայն այդ ժամանակ Խոսրովը վերցրեց իր զորաց բազմությունը և այնտեղ գտնվող պատերազմի գործում փորձված ռազմիկներին։ Դիմավորեց նրանց բանակներին և մտավ Պարսից երկիրը, իսկ երբ Պարսից թագավորը տեսավ այդ բանակների քաջությունն ու բազմությունը, քանզի մեծ ուժով էին եկել ու հասել նրա մոտ, ինքն էլ ելավ պատերազմի, հակառակ իր կամքի և առանց մարտի պատրաստության։ Սակայն, երբ չկարողացավ կռվել նրա դեմ, նրա առջևից փախուստի դիմեց, իսկ (հայ) մարտիկները շտապեցին նրանց ետևից և կոտորեցին ամբողջ պարսից զորքը և դաշտերի ու ճանապարհների վրա դիաթավալ սփռեցին։ Սպանվածների, մեռյալների ու կոտորվածների թիվն այնքան շատ էր, որ անհնար էր հաշվել, ըմբռնել, կամ վերահասու լինել։

Իսկ Հայոց թագավորը հզորացավ ու մեծ ուժով առաջ խաղաց և մեծ հաջողությամբ ու անհամար ավարով և լիակատար ուրախությամբ դարձավ Հայաստանի կողմերը, իր հայ-

րենի քաղաքը, որը կոչվում էր Այրարատ և մի ուրիշ քաղաք, որը կոչվում էր Վաղարշապատ»։

Վերջին նախադասությունը հայկական բնագրի «յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք» արտահայտությունից բոլորովին հեռանում է հունական թարգմանության շեղման հետևանքով։

6. «Ապա հրաման տվեց դեսպաններին, գնալ տարբեր կողմերը և հրովարտակներ տանել բոլոր գավառները, որպեսզի բերեն իր իշխանության տակ եղած կռատների սպասավորներին և ուղարկեց կուռքերին զոհ մատուցելու նպատակով սպիտակ ցուլեր ու սպիտակ նոխազներ, սպիտակ ձիեր ու սպիտակ նժույգներ, ոսկեղեն ու արծաթեղեն ամաններ, պատվական քարեր և հույժ շքեղ ու նուրբ հանդերձներ իր և տոհմակիցների ու ազնվական մերձավորների կողմից (մեծարելու) իրենց պաշտամունքի վայրերը։ Ամբողջ ավարից մաս ու բաժին հանեց, բազում պարգևներ շնորհեց և առատ ընծաներ բաշխեց կուռքերի քրմերին, իսկ զորքին ու իր հետ եղող իշխաններին մեծամեծ պարգևներ տվեց և արձակեց նրանց»։

Այստեղ հայկականի «յեօթն Բագինս» բառերը թեև հունականում պահպանված են, սակայն արաբերենում չկան, իսկ «ազգին Արշակունեաց» թե՛ մեկում, թե՛ մյուսում բացակայում է։

7. «Երբ եկավ մյուս տարին, Հայոց թագավոր Խոսրովը նորեն զորք հավաքեց նախկին թափով կամ ավելի ուժեղ, զորք կուտակեց և ասպատակ սփռեց Ասորիքի կողմերը։ Նրան օգնեց արաբաց զորքը։ Այս անգամ ևս ավարի առավ (երկիրը) և իր տեղը վերադարձավ։ Այսպես տասը տարվա ընթացքում տարեցտարի ասպատակում էր և ավարի առնում Պարսից երկիրը»։

Հայկական բնագրի «ամս մետասան» արտահայտությունը հունարենում ու նրա հետևությամբ նաև արաբերենում դարձել է «տասը տարի»։

8. «Երբ այս բոլորը և այս ամեն չարիքը, որ Հայաստանի

թագավորից էր հասել, տեսավ Պարսից թագավորը, շատ տխրեց, հուսահատվեց, տարակուսեց և վարանեց ինքն իր մեջ, հրավիրեց իր տերության բոլոր թագավորներին, զորավարներին, իշխաններին ու զորականներին։ Խորհրդակցեցին իրար հետ և աղաչեց նրանց, որպեսզի հնար գտնեն այս չարիքը վերացնելու, իսկ նրան, ով կկարողանար սպանել Հայաստանի թագավորին, խոստացավ մեծ պարգևներ ու թանկարժեք ընծաներ և հանձն առավ այդ կատարողին իր թագավորության ու տերության մեջ երկրորդ գահը տալ, եթե այդ բանն իրագործեր։ Եվ ասաց, որ այն մարդը, որի ձեռքով կկատարվի սույն գործը, եթե նույնիսկ աղքատներից ամենաաղքատը լինի, կամ ամենաանարգը բոլոր խեղճերից, ինձ հավասար կդառնա պատվի մեջ»։

9. «Այդ ժամանակ սույն մեծ խորհրդի միջից վեր կացավ մի նշանավոր պատվարժան մարդ, որը Պարթևաց թագավորության մի մեծ տոհմի նահապետն էր և անունն էլ Անակ, Խոսրով թագավորի ցեղից։ Կանգնեց ժողովի մեջտեղ ու սկսեց իբրև թշնամի վրեժ խնդրել իր ազգակիցներից ու իր ցեղից»։

10. «Պարսից թագավորը սկսեց հավանություն տալ նրան ու ասել՝ եթե դու ինձ այդ բարիքն անես, լուծես իմ վրեժը և անձնվիրաբար իմ քենը հագեցնես, կվերադարձնեմ քեզ ձեր պապենական հին իշխանությունը, քո գլխին մեծ թագավորության թագ կդնեմ, կփառավորեմ քեզ, կբարձրացնեմ, պատվով երևելի կդարձնեմ իմ ամբողջ թագավորության ու տերության մեջ և դու կհիշվես որպես իմ թագավորության մեջ երկրորդը»։

11. «Պատասխան տվեց այդ ժամանակ Անակ Պարթևը ասելով թագավորին՝ եթե դու իմ ազգի մնացորդներին շնորհ անես և նրանց բարիք գործես, ապա ես և իմ հարազատ եղբայրը հենց այսօր կհնազանդվենք քեզ և քո ձեռքի տակ կմտնենք, քանզի ճակատագիրը որոշել է, որ միմյանց նկատմամբ ուշադիր լինենք»։

12. «Այն ժամանակ Պարթևն ու իր եղբայրը իրենց կա-

նանց, որդիների ու ծառաների հետ պատրաստվեցին ու ճանապարհ ընկան իրենց՝ ցեղակիցներին ու տոհմակիցներին ապավինող ձևացնելով։ Դիմեցին Հայաստանի կողմերը, իբրև թե ապստամբված լինեին Պարսից թագավորից։ Ապաստանեցին Հայոց թագավոր Խոսրովի մոտ և գնացին Նուտի քաղաքը և այն քաղաքը, որը կոչվում է Խալխալ Հայոց թագավորների ձմեռանոցներում»։ (Նուտի (Ուտի) անվան բացատրությունը տես «Հատուկ անուններ» գլխում)։

13. «Երբ թագավորը տեսավ նրան, ընդունեց և պատվեց մեծագույն պատվով, (սա) սկսեց կեղծավորությամբ խոսել նրա հետ, իսկ Հայաստանի թագավորը չգիտեր այդ մասին։ Ասում էր նրան՝ ես եկել եմ քեզ մոտ, որպեսզի մեր հասարակաց վրեժը լուծենք, իսկ մենք կարող ենք այդ անել»։

14. «Երբ հասան ամառային օրերն ու արևմտյան ջերմ հողմերը և բացվեցին հունձի դռները, ելավ թագավորն այդ կողմերից և իջավ Այրարատ, Վաղարշապատ կոչված քաղաքը։ Իսկ մինչդեռ թագավորն ու Պարթևը հրճվանքի ու զվարճության մեջ հանգստանում էին, թագավորը որոշեց Պարսից կողմերն արշավել»։

15. «Երբ այս իմացավ Պարթևը, այն ժամանակ հիշեց ուխտն ու երդումը, որ իր և Պարսից թագավորի միջև եղել էր։ Ցանկացավ տեսնել իր երկիրն ու հայրենիքը և ստանալ այն պարգևները, որ Պարսից թագավորը խոստացել էր, քանի որ կամենում էր բռնել Պարթևաց տիրոջն ու թագավորին և ինքը դառնալ թագավոր, ստանալով նման պատիվներ։ Իր սրտում վատ խորհուրդ հղացավ և իր եղբոր հետ մեկուսի տեղ առաջնորդեց թագավորին, իբր թե երեքով առանձին մտածելու էին կամ խորհրդակցելու։ Նա և իր եղբայրը իրենց սուսերները թաքցրել էին և հանկարծակի դուրս բերեցին ու մերկացրին, իսկ թագավորը չգիտեր այդ բանը և չէր կասկածում, որ նրանցից որևէ վնաս կարող էր հասնել։ Խփեցին նրան և սրախողխող անելով գետին տապալեցին։ Թագավորի զինվորներից մեկը այդ բանն իմացավ և անմիջապես փութաց իմաց տալու կատարվածի մասին, աղաղակեց մեծ ողբ ու կոծով և այդ-

պես պատմեց։ Մինչ այդ, երկու եղբայրները, որոնք այն գործը կատարել էին, անմիջապես հեծան երիվարները և փախան հեռացան»։

16. «Երբ այս իմացան Հայաստանի իշխանները, զորավարներն ու զորականները, իրենց միջև բաժանեցին ճանապարհների խաչմերուկները և փութացին նրանց ետևից։ Ոմանք աճապարեցին և հասան Արտաշատ քաղաքի դռները, որտեղից անցնելն անհնար էր, քանզի այնտեղ գտնվող գետը, որը Երասխ էր կոչվում, շատ էր հորդել և ջրերը ծածկել էին գետինը, իբրև հետևանք սառույցների ու ձյան հալման ու քայքայման, իսկ ջրերը հոսել էին դեպի գետը, որի պղտորության ու եռման օրերն էին։ Նրանցից մի քանիսը անցան Վաղարշապատ քաղաքի կամուրջը և աճապարեցին, որ հասնեն Արտաշատ քաղաքը։ Երկու փախստականներն անցան (գետը) նախքան նրանց հասնելը, իսկ (վերջինները) չհասան նրանց։ Մեծ աղաղակով, խիստ ճչալով և ողբի ձայներով վերադարձան իրենց ամբողջ ժողովրդի հետ և հավաքվելով ողբում էին թագավորին»։

Զարմանալի է, որ ոճրագործների գետավեժ անելու տեսարանի նկարագրությունը արաբերենում հակառակ իմաստն է ստացել։ Բնագրում ասվում է. «Ի կիրճս ճանապարհացն արգելին զնոսա ի մէջ արարեալ զնոսա՝ ի Տափերական կամըրջացն գէտավէժ առնէին զնոսա»։ Հունարենում թեև Տափերականը չի հիշվում, այնուամենայնիվ դեպքի նկարագրությունը շատ աղավաղված չէ, իսկ արաբերենում ոճրագործները նույնիսկ փախչում են։

17. «Եվ մինչդեռ նրանում դեռ մնում էր կենդանության մի նշույլ և նա իր վերջին շունչն էր փչում, հրաման տվեց բնաջինջ անել նրանց ամբողջ սերունդը և չթողնել ոչ մեծի ոչ փոքրի, ով տարբերում էր աջը ձախից՝ ոչնչացնել։ Հրամայեց կոտորել նաև նրանց կանանց և բոլորին սրի քաշել։ Միայն երկու փոքր մանուկներ մնացին. նրանք թագավորին սպանող Պարթևի երկու որդիներն էին։ Այդպես էլ արվեց։ Ազատվեց նաև մեկը Պարթևի հեռավոր ազգականներից, որն այս

երկուսին թողեց դայակների մոտ։ Մանուկներից առաջինին նա փախցրեց Պարսից երկրի կողմերը, իսկ երկրորդին՝ փըրկեց (տանելով) Հոռոմոց կողմերը Հունաց երկրի գավառներում»։

Հայկականի «Ի կողմանս Յունաց»ը հունարենում դարձել է «Հոռոմոց կողմերը» ἐν τοῖς ῥωμαϊκοῖς τόποις, իսկ արաբերենում՝ երկու անուններն էլ հիշվում են։

18. «Եվ եղավ, որ երբ Պարսից թագավորն այս ամենը լսեց, լցվեց ուրախությամբ ու հրճվանքով։ Այդ օրը մեծ տոն հռչակեց և սատանայի քրմերին բազում պարգևներ տվեց։ Ապա մեծ զորաժողով արեց և ասպատակ սփռեց Մեծ Հայք երկիրը, գերեվարեց ում որ գտավ այնտեղ և լրիվ բնաջնջեց»։

Վերջին նախադասությունը հայկական բնագրում ավելի մանրամասն է «զխօսուն և զանասուն, զծեր և զտղայ, զերիտասարդ և զմանուկ»։

19. «Գերեվարության ժամանակ մեկը փրկեց հայոց սպանված թագավոր Խոսրովի որդուն՝ մի ոչ փոքրիկ մանկան, որի անունն էր Տրդատես։ Առավ իր հետ ըստ հնարավորության մի քանի զինվորների և փախավ Հոռոմների երկրի կողմերը կայսր թագավորի պալատը։ Իսկ Պարսից թագավորը նվաճեց Հայոց երկիրը և իր իշխանության տակ վերցրեց, ամեն տեղերը իր անունով կոչեց և այնտեղ մնացած զինվորներին հալածեց և փախան Հոռոմոց երկրի կողմերը։ Իր զորքը կանգնեցրեց այն վայրերում, որոնք վիհ էին կոչվում»։

Հայկականի «Մանկիկ մի փոքրիկ» խոսքերը արաբականում դարձել են «ոչ փոքրիկ մի մանկիկ»։ Թեև հունարենի Լավրենտյան օրինակը նույն աղավաղումն ունի, այնուամենայնիվ Վատիկանի Օտտոբոնյան գրչագիրը այս հարցում հայկական բնագրին մոտ է կանգնած։ Հայկական բնագրի «դայեկաց» բառը հունականում չի աղավաղված, սակայն արաբերենում տարօրինակ ձևով դարձել է «զորք»։

20. «Արդ եկավ Տրդատեսը և նստեց դպրության ու իմաստության ժողովին այն գյուղում, որը կոչվում էր Լիկիանոս։ Իսկ Պարթևի որդին, որը Հոռոմոց երկրի կողմերն էր գաղթել,

դաստիարակվեց ու կրթվեց Կապադովկիայի Կեսարիա քաղաքում: Մի քրիստոնյա մարդու հետ ծանոթացավ և նրանից սովորեց Քրիստոսի երկյուղը, ուսմունքն ու ճշմարիտ հավատքը և մեծ չափով ընտելացավ, վերահասու դարձավ աստվածային դպրության և նրա անունը Գրիգորիոս էր»:

Առաջին նախադասությունը սոսկ թյուրիմացության արդյունք է: Հունականի κώμης «կոմս» տիտղոսը արաբ թարգմանիչը շփոթել է κώμη «գյուղ» բառի հետ, որի հետևանքով Լիկիանոսը գյուղի անուն է դարձել:

21. Այս պարբերության ենթավերնագիրը «Առաջին հրաշքները և առաքինի գործերը» արաբ թարգմանչի կողմից չի հնարված: Որոշ ճառընտիրներ մի քիչ առաջ (Ագաթանգեղոս, 38) ունեն հատուկ վերնագրեր. «Ի յագադանգեղեայ պատմութենէ», «Հինգերորդ շաբաթ աւրն վկայաբանութիւն սրբոյն գրիգորի Հայոց լուսաւորչին, որ վկաեաց առաջի տըրդատայ թագաւորին» և կամ «Վեցերորդ շաբաթ աւրն յիշատակ է սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչին. յագադանգեղայ պատմութենէն»:

Վերնագրին անմիջապես հաջորդում է պարբերությունը. «Երբ տեղեկացավ, որ ինքը Անակ Պարթևի որդին էր և թե ինչպես նա սպանել էր Հայաստանի թագավորին, ելավ Կեսարիայից ու եկավ Տրդատեսի մոտ ինքնակամ ծառա դարձավ նրան և իր անձը ստրկության մատնեց այդ օրվանից: Ոչ ոք գիտեր և ոչ էլ ինքն էր որևէ մեկին հայտնել, թե ինչպես և ինչի սիրույն իր անձը ծառայության էր տվել և ամենայն հնազանդությամբ ու նվաստաբար ծառայում էր նրան»:

22. Բնագրի «զեկեղեցի Աստուծոյ» արտահայտությունը հունականում մնացել է անփոփոխ, իսկ արաբականը մի բառ ավելացրել է՝ «Աստուծո ընդհանրական եկեղեցին»:

23. Արաբականի «Երկրորդ հրաշքները» ենթավերնագիրը հայկականում չկա և գուցե արաբ թարգմանչի ձեռքով է ավելացված: Դրան անմիջապես հաջորդում է բնագիրը. «Այդ օրերում Գոթերի պետն ու թագավորը մեծ զորաժողով արեց, բազում զորք և հսկայական ուժեր բերեց պատերազմելու համար Հունաց թագավորի դեմ: Այդ նպատակով պատգամ հղեց նրան ասելով՝ ինչո՞ւ ես խեղճ մարդկանց խառնում պատերազմի մեջ, կոտորում զորքը, հյուծում և փորձանք ու տագնապ հասցնում նաև քաղաքներին: Ահավասիկ, ես միայնակ ախոյան եմ դուրս գալիս իմ զորքի միջից, դու էլ առանձնացիր քո ընկերակից հույներից, որպեսզի մարտի ելնենք միայնակ, առանց մարդկանց. եթե դու ինձ հաղթես, իմ բոլոր ընկերակիցները կհնազանդվեն քեզ և կընկնեն քո իշխանության ներքո: Գործը կավարտվի առանց այնպիսի արյունահեղության, որի համար պատասխանատու համարվես և ապահովություն կլինի, իսկ եթե ես քեզ հաղթեմ, քո ընկերակից հույները կհնազանդվեն, կծառայեն և այսպիսով խաղաղություն ու երջանկություն կլինի ամենքի համար»:

24. Արաբականը հունականի նման բաց է թողել ամբողջ նախադասություն, «Քանզի օրինօք կազմութեամբ, գունդ առ գունդ ճակատել ոչ առնուին յանձն և ըստ պատգամին պատշաճի ոչ կարէր ունել յանձին»:

25. Հայկական բնագրի «Բազումս ի շանց» խոսքերը հունականում հարազատ ձևով թարգմանվել են, իսկ արաբերենում դարձել են՝ բազում էշեր: Հետաքրքրական է, որ հայկական մի քանի գրչագրերում կան «իշեանս», «բազում իշեան» ձևերը (Ագաթանգեղոս, 42, էջ 28, ծան. 1):

26. Բնագրի և հունականի «զարմացաւ» մեկ բառի դիմաց արաբ թարգմանիչը հոմանիշներ է ավելացրել «զարմացավ, շվարեց, տարակուսեց ու հիացավ»:

27. Արաբ թարգմանիչը իր կողմից ավելացնում է բացատրական նախադասություններ: Պարբերության վերջում հայկական բնագրի «առ ի ժամ վաղուի զմիմեանս տեսանել պատերազմաւ» խոսքերից հետո արաբն ավելացնում է. «Իսկ Տրդատեսը պետք է ծպտվեր թագավոր կայսեր տարազով և բազմությունը գիտելու էր, թե ինչպես էր նա մենամարտելու Գոթաց թագավորի հետ»:

28. «Երբ այգը բացվեց, հրամայեց, որ նրա վրա ծիրանի գցեն, այնպես, որ ոչ ոք իմացավ, թե ով էր նա, այլ (կար-

ծում էին) թե իրոք ինքն իսկ կայսր թագավորն էր։ Երբ զորքի մեծ մասը դուրս ելավ, փողերի, ծնծղաների, թմբուկների ու շեփորների ձայներով կանգնեցին թշնամիների դեմ հանդիման։ Կայսերակերպը և Գոթաց թագավորը դեմ դիմաց կանգնեցին և երիվարների կրծքերը ցցած իրար մերձեցան։ Նրանցից ամեն մեկը իր ընկերոջը վրա հասավ և կայսերակերպը հաղթեց Գոթաց թագավորին և ձեռքերի մեջ վերցնելով կայսեր առջև կանգնեցրեց նրան»։

30. Բնագրի այս պարբերության վերջին տողերը «և զհայրենեացն տէրութիւն յինքն նուաճեաց և զօրացաւ ի վերայ սահմանաց նորա» արաբական թարգմանության մեջ բաց է թողնված։

31. Եկեղեաց գավառի անունը եկեղեցի թարգմանելու հետևանքով, արաբ թարգմանիչը աղավաղել է պարբերության իմաստը.

«Երբ Մեծ Հայքի Տրդատես արքայի թագավորության առաջին տարին լրացավ, զոհ մատուցելու նպատակով իր զորքի հետ գնաց այն եկեղեցին, որը կոչվում է Երիզա, Էրեզս կոչված գյուղում, այն վայրում, ուր կար աստվածուհի Արտեմիսի տաճարը։ Երբ այս պիղծ և գարշելի գործը ավարտեցին, իջան և բանակ դրին Գայլ կոչված գետի ափին»։

33. Արաբական թարգմանության «Երրորդ՝ նրա առաքինության և հրաշագործության վարքագրությունը» վերնագիրը, որը նշում է Ս. Գրիգորի վկայաբանության հատվածի սկիզբը, հայկական ձեռագրերում մի քիչ վերևում (Ագաթանգեղոս, 48) է տրված։ Հայկական ձեռագրում կան հետևյալ վերնագիրը՝ «Վկայութիւն սրբոյն գրիգորի հայոց լուսաւորչի», և կամ այլ տարբերակներ (Տե՛ս Առաջին Գլխի 5-րդ պարբերությունը)։

35. Վերջին նախադասության մեջ բնագրի խոսքերը (զի նա է միայն արարիչ...) հունականում և մանավանդ արաբականում աղավաղված են. «քանզի նա է միակ արարիչը երկնից ու հրեշտակաց և երկրի ու մարդկանց և ամենայն արարածոց, տեսանելիներին և անտեսանելիներին։ Նա է միայն,

իր միավորված երրորդությամբ ու եռյակ միությամբ, բոլոր արարածների երկրպագությանն արժանի, բարձր դասվելով ամեն արարածներից»։

37. Այս և հաջորդ պարբերություններում հունարեն և արաբական թարգմանությունը բնագրից հիմնականում չեն շեղվում։ Կրոնական բովանդակություն ունեցող հատվածներում թե՛ հույն, թե՛ արաբ թարգմանիչները ավելի լավ են հասկանում բնագրի իմաստը և քիչ են աղավաղում։

42. «Նրան կոչում եք Մեծ Տիկին ըստ քո սխալ ենթադրության և ամբարիշտ ու անհիմն խոսքերի։ Դա Արտեմիսն է։ Նա մոլորեցրել է ձեզ, քանզի ով թշվառ, եթե նա զգայարաններ ունենար, կասեի թե կախարդել է քեզ։ Սակայն քեզ կախարդել է նրանում ապրող սատանան, ո՜վ նրա աշակերտն ու որդին։ Վայ քեզ և քեզ նմաններին, որոնք նրան են ապավինում, հուսալով, որ գուցե իրենք էլ նրա նման [աստված] դառնան։ Սակայն այդպես չի լինի և ոչ էլ իրականում եղել է նրանց հետ, որոնք կարծվում է, թե իբր աստվածներ են։ Այլ նրանք մարդիկ են, որոնք այդպիսին են դարձել, որովհետև մի ժամանակ կախարդել են մարդկանց, դիվական մոլուցքով ու պիղծ կախարդանքով գերել են նրանց և այլակերպ ու երևակայական ձևերով համոզել, որ տաճարներ կառուցեն, կուռքեր պատրաստեն և արձաններ կանգնեցնեն նրանց համար։ Երկրպագում են այդ անօգուտ կուռքերին, սակայն դրանք ոչ կարող են բարիք գործել, ոչ էլ այլ բան, ոչ կարող են պատվել իրենց պաշտողներին, ոչ էլ պաշտոն մատուցել իրենց պատվողներին, ոչ կարող են անարգել իրենց հայհոյողներին, քանզի դրանք մարդկային ձեռքով պատրաստված արձաններ են՝ համր, կույր ու խուլ։ Նրանց մեջ չկա կյանքի նշան, քանզի ձեռքեր ունեն, բայց չեն բռնում, աչքեր ունեն, բայց չեն տեսնում, ականջներ ունեն, բայց չեն լսում, ոտքեր ունեն, բայց չեն քայլում, քթեր ունեն ու չեն հոտոտում և չունեն ոչ մի զգայարան։ Իսկ դուք, այդ պիղծ կուռքերի ծառայության մեջ եք ցնորված խելքով ու հիմարացած մտքով։ Քանզի դուք, ով անհավատներ, պատվում եք արծաթն ու ոս-

կին, երկրպագում եք քարերին ու փայտին, Աստուծո փոխարեն, որը ձեզ ստեղծել է և որի բարիքները ճաշակում եք ու շնորհները վայելում, պաշտում եք գործիքներով պատրաստված արձանները, գոհարեղենները ու կուռքերը, որոնք ստեղծված են Աստծո կողմից իր ծառաների ու երկրպագուների օգտագործման, վայելքների ու կարիքների համար»։

50. Արաբ թարգմանիչն իր կողմից ավելացրել է որոշ խոսքեր։ «Չի ի ձեռաց մարդկան են ստեղծեալք» խոսքերից հետո արաբը ավելացնում է «ձուլված արծաթից ու հատված ոսկուց, փորագրված փայտից ու քանդակված քարից»։

54. Խոսքը տպավորիչ դարձնելու համար, թարգմանիչն իր կողմից Տրդատի հասցեին հայհոյանքներ է ավելացնում։ Գրիգոր Լուսավորիչը դիմելով արքային հաճախ ասում է. «Ով թշվառական»։

55. Հայկական բնագրում Քրիստոսի հասցեին եղած «որոյ են ստացուածք իւր երկինք և երկիր» արտահայտությունը հունականում և արաբականում դարձել է «արարիչ ամենայնի»։

56. Հայկական բնագրում հիշված մարգարեն Նեեմին է, իսկ արաբ թարգմանիչը, ցանկանալով իր կողմից ավելացնել նրա անունը, ասում է, «ինչպես ասված է Դավիթ մարգարեի սաղմոսում», որը սխալ է, որովհետև այդ խոսքերը հստակ կերպով գտնում ենք Նեեմիի մոտ (Թ—11)։

57. Հայկականի և հունականի «և կայր նա կախեալ այնպէս աւուրս եօթն» խոսքերը արաբականը բաց է թողել։

67. Բնագրի «և զքաղաքս նոցա շինեցեր պատրաստեցեր ի մէջ հրոյն տանջանացն պատրաստելոց բարկութեան» խոսքերը հունականում և արաբականում բաց են թողնված։

81. Պարբերության վերջին նախադասությունը արաբը ճոխացրել է հետևյալ ձևով. «այն օրը, երբ տրվելու են հավիտենական բարիքները, որոնք աննկարագրելի են, քանզի աչքերը այն չեն տեսել, ականջները չեն լսել, սրտերը չեն զգացել։ Դրանք այն բարիքներն են, որոնք պահել ես ու պատրաստել ինչպես ասված է քո սուրբ Ավետարանում, նրանց համար, որոնք քեզ կհուսան հավիտյան, ամեն»։

82. Արաբ թարգմանիչը այս պարբերությունը կրկնապատկել է իր խոսքերով. «Եվ երբ նա կախված վիճակում էր, ասաց այս բոլոր խոսքերը, իսկ արագագիր դպիրները նշաններով գրեցին սրբի խոսքերը, քանզի սուրբը այս բոլոր տանջանքներն ու չարչարանքները առ ոչինչ էր համարում, թեև շատ էր չարչարվել, խոշտանգվել ու թաց բրերով ծեծվել։ Նրա ամբողջ մարմինը՝ նվիրական ու մաքուր, ջարդվել էր այդ ճկուն թաց բրերով, շատ ծեծվելուց։ Սակայն նա ուշադրություն չէր դարձնում և ոչ էլ ազդվում, այլ մնում էր կախված և ասում այն խոսքերը, որ վերևում հիշվեցին և դեռ ավելին, որն այստեղ չի հիշված, որովհետև այս խոսքերը նրանց գրի առածի վրա է հիմնված։ Գրի առան դպիրներն այդ բոլորը և ներկայացրին թագավորին, իսկ սուրբ Գրիգորիոսը կախված մնաց յոթը օր և հակառակ գործադրված նոր չարչարանքների, ոչ մի բառ չավելացրեց գրի առնված սույն խոսքերի վրա և կամ նման գովաբանական և աղաչական խոսքեր առ Աստված։ Յոթն օր անցնելուց հետո թագավորը հրամայեց իջեցնել և իր մոտ բերել նրան»։

89. «Ապա նա հրամայեց բերել աղ, բորակ ու կծու քացախ, պառկեցնել սրբին գետնի վրա և գլուխը ճզմել հյուսների մամուլի մեջ, սրել պարսկական եղեգի գլուխները, խրել նրա ձեռքերին ու ոտքերին, բոլոր մատների եղունգների տակ, խառնել աղը բորակի հետ ու հալեցնելով քացախի մեջ շաղ տալ նրա գլխի վրա»։

94. Պարբերության վերջում թագավորի խոսքերից հետո արաբ թարգմանիչը ավելացնում է. «և ասաց նրան երանելին՝ պապանձվիր, ո՜վ պիղծ շուն, դա քեզ նման կառադաժների պատասխանն է»։

99. Հայկական ձեռագրերի «յաւուրն չորրորդի» դիմաց հունականն ու արաբականն ունեն «երրորդ օրում»։ Վիեննայի կրկնագիրն ունի «յաւուրն երրորդի» («Յուշարձան», էջ 111)։

104. Հունականն ու արաբականը բնագրի «Տաճատ փեսայ Արտաւանայ» անունը ջնջել են և հիշում են սոսկ որպես «զորավարներից մեկը»։

105. Գրիգոր Լուսավորիչը, թեև ըստ հայկական հրատարակված բնագրի, «ամս երեքտասան» մնաց խոր Վիրապում, սակայն հունականում ու արաբականում այդ տարիները տասնչորս են թե՛ այս պարբերության մեջ, թե՛ հետագայում։ Վիեննայի կրկնագիր օրինակը ունի՝ «չորեքտասան» («Յուշարձան», էջ 118)։

107. Պարբերության վերջում արաբն իր կողմից ավելացնում է. «իսկ երանելի Գրիգորիոսին Աստված պահպանեց այնտեղ և նրան ոչ մի դժբախտություն չպատահեց, քանզի Աստված չի լքում իր սիրեցյալներին»։

109. «Նամակի պատճենը հետևյալն է. «Մեծ Հայքի թագավոր Տրդատեսից բոլոր մեծամեծներին, պետերին, զորքերին, զորավարներին, իր իշխանության բոլոր հպատակներին, գյուղերի, ագարակների, քաղաքների, ավանների, բնակավայրերի ու գավառների բոլոր բնակիչներին, ազատներին ու ստրուկներին, մեծերին ու փոքրերին, մերձավորներին ու հեռավորներին, ծերերին ու երիտասարդներին, ամենքին ողջո՜ւյն։ Թող աստվածների օգնությունը լինի և առատաձեռն մեծ Դիոսից լիություն լինի, խնամակալություն Մեծ Տիկին Արտեմիսից և առաքինություն հասնի քաջ Հերակլեսից ամբողջ աշխարհին ու նրա քաղաքներին»։ Ինչպես որ սրան հետևում է նամակի շարունակությունը, որի պարզաբանված հիշատակումը և խոսքի երկարումը անօգուտ է»։

114. Այս պարբերությունից առաջ, որտեղ նոր հատված է սկսվում, սույն վերնագիրը կա. «Պատմություն առաքինի վկաներ Հռիփսիմեի, Գայանե գլխավորի և նրա ընկերների»։ Նույն տեղում հայկական ձեռագրերն ունեն հետևյալ վերնագրերը. «Յաղագս գալստեան սրբոց Հռիփսիմեանց և նահատակութեան նոցա», «Վկայաբանութիւն սրբոյն Հռիփսիմեա և ընկերաց նորա» և այլն։ Արաբականը հիմնականում պահպանել է այս բոլորի իմաստը, ավելացնելով միայն Գայանեի անունը (Տե՛ս Ա. գլխի 5-րդ պարբերությունը)։

«Այնպես պատահեց այդ ժամանակ, որ թագավոր կայսր անհավատ Դիոկլետիանոսը իր անձի համար կին պահանջեց,

որպեսզի ամուսնանա։ Իր դեսպաններին ուղարկեց, թագավորության ու տերության ամբողջ ժողովրդին և գավառների ու երկրների կուսակալներին՝ (հրամայելով) հավաքել բոլոր նկարիչներին, քանդակագործներին, վայելուչ գիր գրողներին և գեղեցիկ հասակը ըստ կարելվույն լավ գնահատողներին, որպեսզի նրա համար գեղեցիկ կերպարներ պատկերեն, թմբկաձև տախտակների վրա գեղեցկորեն նկարեն արտաքինով ու հասակով կատարյալ կույսերին և այն իրագործել ամենաընտիր ու հմուտ ձևով»։

115. Հռիփսիմեի անունից հետո Եվպրաքսիայի հիշատակումը հատուկ է միայն արաբականին և քանի որ հայկական բնագիրն ու հունականն այդպիսի անուն չեն տալիս, գուցե ենթադրենք, որ սա արաբ թարգմանչի հնարածն է (Տե՛ս «Հռիփսիմե» «Հատուկ անուններ» գլխում)։

127. Նորաքաղաք անունը հունականում պահպանված է թարգմանաբար, սակայն արաբը կորցրել է այն։

134. Արաբ թարգմանիչը մերթ ավելացնում է, մերթ էլ աղավաղում իմաստը։ «Մինչդեռ յայն յոյզ քննութեան էին յաշխարհին սահմանացն Հայոց՝ սուրբ վկայքն այնոքիկ եկեալ ղօղեալ էին յարքայական կայանին ի նմին թագաւորականին ի Վաղարշապատ քաղաքի» արտահայտությունը հունականը պահպանել է, իսկ արաբը փոխել է իմաստը, կորցնելով նույնիսկ Վաղարշապատ անունը. «Սրա հետևանքով ամբողջ Հայաստանում մեծ իրարանցում և շփոթություն եղավ,՝ իսկ սրբուհիները թաքնված էին հնձանում»։

135. Այս պարբերությունը արաբը կրճատել ու աղավաղել է, «Քանզի Աստուծո ճշմարիտ որդին չխնայեց իր ժառանգությունը և տվեց իր սիրեցյալներին։ Նա արդար գործ է կատարում, քանզի բնությամբ որդի է և առանց տատանվելու իր պատվիրանները պահողներին իրազեկ է դարձնում իր մարգարեությանը։ Նրանք շողշողուն լույսի նման երևացին Հայաստան աշխարհի ազգերի մեջ և իրենց հրաշքներով ակամայից տիեզերքը լցրին Աստուծո փառաբանությամբ»։

144. Արաբը փղշտացիների անվան հիշատակումից հետո

6—353

ավելացնում է. «Դու ես, որ կործանեցիր քո դեմ ընդվզող փարավոնին և նրան ու զինվորներին խեղդեցիր ծովում, փրկելով Իսրայելի որդիներին քո մարգարեի՝ Մովսեսի ձեռքով և օգնեցիր նրանց, ինչպես ծովում, այնպես էլ ցամաքում։ Նույնպես և պահպանիր մեզ՝ քո դուստրերին, քո արդարությամբ հանուն քո սուրբ անվան»։

146. Արաբը բաց է թողել հետևյալը՝ «Իսկ եթէ ի սողունս և ի թռչունս խնայեցեր ո՞րչափ ևս խնայեսցես ի մեզ զոր անուանեցեր տաճար կամաց քոց»։

149. Հռիփսիմեի անվան հետ կապված բառախաղը՝ «Դու Հռիփսիմէ ըստ անուանդ քում արդարև ընկեցեալ եղեր Գայիանեաւդ և քոյովք սիրելեօքդ...» արաբականը չի հասկացել և թարգմանել է. «Ով Հռիփսիմե, որ ըստ քո անվան իրոք հրավիրվեցիր Գայանեի և այլոց հետ...»։

164. Բնագրի «Հիւսիւսոյ» բառի դիմաց հունարեն արտահայտությունը արաբ թարգմանիչը չի հասկացել և որպես տեղանուն է ընդունել (տե՛ս «Թարգմանության ժամանակը», «Լեզուն» գլխում)։

168. Այս պարբերության մեջ խառնվել է հաջորդ պարբերության մի նախադասությունը՝ չորս ցցեր տնկելու մասին. «Երբ նա այս բոլոր խոսքերն էր ասում և այսպես աղոթում այդ գիշեր, թագավորի մտերիմները և թագավորության մեծամեծները հանկարծ կանգնեցին խոհարարների պետերի և զինվորների հետ իրենց ձեռքում լապտերներ կրելով։ Եկան նրա կողմը և բռնելով երանելի Հռիփսիմեին, ձեռքերը ետևը կապեցին և գետինը չորս ցից խփելով՝ նրան ձգեցին ցցերի միջև։ Կամեցան նրան այրել կրակով և նրա մսերը վառել «կանթեղով», նրա լուսավոր աչքերը հանեցին և ցանկացան լեզուն կտրել, իսկ նա ինքն իր կամքով բացեց մաքուր բերանը և այն ցույց տվեց նրանց»։

Ջակերտների մեջ առնված «կանթեղով» բառը արաբերենում ունի «մաքագին», որը անհասկանալի է։ Գուցե հունարենի καύσαντες (վառող) բառն է արաբական թեքական (անկանոն) հոգնակի ձևով։

173. Բնագրի «յՈղիմպիադսն Յունաց» արտահայտությունը արաբը թարգմանել է սոսկ «մարտի ժամանակ»։

180. Այս պարբերությունը արաբը հակառակ իր սովորության, կրճատված է թարգմանել. Հռոմից երկրից նրանց հետ եկած ընկերուհիները յոթանասուն կին էին, իսկ սուրբ Հռիփսիմեի և Գայանեի հետ նահատակվողները լրիվ երեսունյոթ սուրբ կանայք էին»։

181. Արաբականը Հռիփսիմեի հետ նահատակված ընկերուհիների թիվը (բնագրում՝ երեսուն և երեք) չի հիշում՝ նշելով, որ վերևում ասված է։

183. Հայկականի չորսուկես տողը, որը հունարենում նույնությամբ տրված է, արաբը հետևյալ ձևով ճոխացնում է. «Եվ ոչ միայն նա ենթարկվեց այդ պատուհասին ու աղետին, այլև նրա երկրի ժողովրդի մեծ մասը և թագավորության բոլոր պետերն ու զորավարները նույն բաներին ենթարկվեցին և ուժեղ խելագարության մատնվեցին։ Մոլեգնում էին դիվահար վիճակում և քաղաքի շուրջը չոր խոտ էին արածում թագավորի հետ և իրենց միսն էին ուտում։ Երկրի և շրջակայքի ամբողջ ժողովուրդը ահավոր սարսափի մատնվեց, լսելով ու տեսնելով այս ամենը, որը թագավորին, նրա ընկերակիցներին ու ժողովրդի մեծ մասին էր պատահել։ Իսկ թագավորի տրուկները, ժողովուրդը, մերձավորներն ու սպասավորները, բոլորն էլ դիվահար եղան և ամբողջ ժամանակը այդպես մնացին գիշեր ու ցերեկ։ Նրանց շրջապատեցին կատաղած դևերը, որոնք ուժեղ կերպով նրանց սեղմեցին իրենց մեջ»։

186. Հայկականի հինգ տողը արաբ թարգմանիչը իր կողմից ճոխացնում է. «Դրանից հետո այսպիսի տեսիլք նա տեսավ մեկ, երկու, երեք և հինգ անգամ։ Տեսավ նույն անձին, որը երևաց նրան և պարսավում էր, հանդիմանում, սպառնում ու սաստում, ասելով՝ իմացիր, որ եթե այս բանը հստակ և պարզ ձևով իմաց չտաս թագավորին ու մերձավորներին, ապա բոլորին և մանավանդ քեզ, մեծ աղետներ են սպասում, ավելին, քան նրանց վրա արդեն հասել է։ Իսկ նա զգուշանում էր իր տեսածները հաղորդել մարդկանց, համոզված լինելով, թե

չեն հավատա։ Սակայն թագավորի և դիվաբախ եղած մարդկանց տանջանքները ուժեղանում էին, մեծանում ու ավելանում և անտանելի դառնում, մահը սպառնում էր նրանց և դիվահարությունը քայքայում։ Երբ նա վերջին տեսիլքը տեսավ, այլևս չկարողացավ համբերել կամ թաքցնել և եկավ մարդկանց մոտ ու կրկին պատմեց նրանց ամբողջ տեսիլքը։ Մեծ սարսափ ու ահ պատեց նրանց և վախեցան, որ իրենց հասած աղետները կավելանան։ Չկարողացան այլևս անտեսել այս գործը, կամ էլ չհավատալ տեսիլքին»։

189. Արաբը Գրիգորի և ամբողջ խմբի Վաղարշապատ հասնելուց անմիջապես հետո իր կողմից մեջ է բերում հետևյալը. «Իսկ թագավորի սերնդից մի այրի կին այդ ամբողջ ժամանակվա ընթացքում ծառայում էր արդարին, նրա գըտնըված բլուրը բերելով հաց և ջուր»։

193. Ըստ արաբի, երբ Ս. Գրիգոր մոտեցավ այն վայրին, որտեղ նետված էին Հռիփսիմյանց դիակները, «պատրաստել տվեց փայտե դագաղներ և նրանց մեջ ամփոփեց վկաների անարատ մարմինները»։

201. Բնագրի «զի սուտ են և սնոտի» խոսքերից հետո (պարբերության վերջում) արաբն իր կողմից ավելացնում է. «Եվ փորագրված են ու քանդակված, կտրված ու ձևված ձեռքերով։ Դրանք չեն տեսնում, չեն լսում, ոչ քաղցրություն ունեն, ոչ դառնություն, չեն վնասում և չեն օգնում, ձեռքեր ունեն ու չեն բռնում, ոտքեր ունեն ու չեն քայլում, ականջներ ունեն ու չեն լսում, քթեր ունեն ու չեն շնչում, աչքեր ունեն ու չեն տեսնում։ Նույնպիսիք են նաև նրանց ապավինողները»։

222. Այս պարբերությունից հետո հայկական բնագրում սկսում է Վարդապետությունը։ Հունականն ու արաբականը չունեն այս խոշոր բաժինը, այլ շարունակում են, տալով բնագրի այն հատվածը, որը հայերենում «Դարձ փրկութեան աշխարհիս Հայաստան» վերնագիրն է կրում։

228. Բնագրում թագավորն ու մեծամեծները ծոմ պահեցին «աւուրս վաթսուն և վեց», իսկ Գրիգորը «աւուրս վաթսուն

և հինգ» խրատեց նրանց։ Արաբականը ծոմապահության համար ունի վաթսուն օր, իսկ Գրիգորի խրատների համար՝ վաթսունհինգ օր։

230. Բնագրի «Ի լնուլ վաթսներորդի վեցերորդի աւուրն» խոսքերը հունականում և արաբականում դարձել են «երբ լրացավ վաթսուն օրը»։

239. Այստեղ և հետագա (266, 268) պարբերությունների մեջ Հռիփսիմեի ընկերուհիների թիվը, ըստ հայկականի, «երեսուն և երկու» է, իսկ հունականն ու արաբականն ունեն երեսունհերեք։ Պարբերության վերջում վկաների թիվը բնագրի «զերեսուն և զեօթն» թվի փոխարեն հունականն ու արաբականն ունեն սոսկ «երեսուն»։

276. Բնագրի «Առնոյր այնուհետև խորհուրդ հաւանութեան ընդ թագաւորին և ընդ իշխանսն նախարարօքն և զօրօքն հանդերձ» արտահայտության վերջին բառերը հունականում և արաբականում չեն պահպանվել։ Արաբականը հայկականի «ի բաց կորուսանել» արտահայտությունից հետո բացատրում է, որ խոսքը կուռքերին է վերաբերում։ Այսպես՝ «Այնուհետև իրենց մեջ խորհուրդ արեցին թագավորի և մեծամեծների հետ հասարակաց խաղաղության մասին, որպեսզի քանդեն, վերացնեն պղծությունը, այսինքն կուռքերը իրենց մեհյաններով, որ ոչ ոքի խոչընդոտ չլինեն և չխանգարեն վերին ազատության հասնելու։ Որպեսզի վստահորեն հասնեն բարյաց կատարմանը, ինչպես սովորեցնում է սուրբ Պողոս առաքյալը իր խոսքերի մեջ, երբ ասում է. «Միաբան հասցուք ի չափ հասակին Քրիստոսի», որոնց ազատությունը երկնքում է և այնտեղ սպասում են փրկչին, այսինքն մեր Տեր Հիսուս Քրիստոսին, և մերը կլինի պարծանքը շնորհիվ խաչին, գովության և Աստուծո փառավորման»։

277. Հայկականի «Նախ դիպեալ ի ճանապարհի երազացոյց, երազահան պաշտաման Տրի դից դպրի գիտութեան քրմաց անուանեալ Դիւան գրչի Որմզդի ուսման ճարտարութեան մեհեան», հունականը մոտավորապես նույն ձևով պահպանել է, իսկ արաբերենում այն լրիվ աղավաղվել է. «Իսկ

ճանապարհ գնալիս հասան մի վայր, որը կոչվում էր երազների մեկնիչ և սատանայի պաշտամունքին ու պղծության ուսմանն էր հատկացված»։

278. «Այդ ժամանակ երևան եկան դևերը բազում զինվորների և զորքի կերպարանքով, կազմ և պատրաստ պատերազմի, իրենց ձեռքին նիզակներով, կարծես քարշ էին տալիս տեղեր ու վահաններ»։ Այս պարբերության մեջ մեծ չափի է հասել Ագաթանգեղոսի բնագրի աղավաղումը։ Բնագիրն այսպիսին է. «Ուր և երևեալ կերպարանեալ դիւացն ի նմանութիւն առն ձիոյ բազմութեան կազմութեան գնդի և հետևակազօրու, մկնդաւորք և ունաւորք առաջի ընթացեալք ի կերպարանս մարդկան նմանութեան նիզակօք և նշանօք, ի զէն և ի զարդ վառեալք...»։ Աղավաղումը գալիս է մասամբ հունարենից։

280. «Այս բանն ասում էին նրանք, այսինքն այդ դևերը, իսկ բոլորը լսում էին նրանց։ Նրանց հավատն առաջվանից ավելի ամրացավ, երբ երևացին սև ու զազրելի դևերը և ծխի նման չքացան։ Երբ բոլորը սկսեցին տաճարը հիմքից քանդել, եկան աղքատներն ու չքավորները և խլեցին տաճարի գանձերը՝ ոսկի, արծաթ և այլ բաներ։ Եկել էին նրանց հետ նաև որբերն ու այրիները։ Իսկ տաճարի ունեցած փողերն ու միջոցները, ինչպես օրինակ՝ ունեցվածքն ու կալվածքները և այլ բաներ, սպասավորներով, քրմերով ու բոլոր սահմաններով, սուրբ եկեղեցու ծառայության հատկացվեցին»։ Տաճարի գանձերի բաշխման հարցում հունականն ու մանավանդ արաբականը շեղվում են հայկական բնագրից՝ «Իսկ մարդկանն հասելոց անդէն քանդեալ զհիմունս մնացեալս աւերէին և զգանձսն մթերեալս՝ աղքատաց, տառապելոց և չքաւորաց մասն հանէին»։

281. Բնագրի «այլ լոկ պարսպէր քաղաքորմով զտեղիսն» արտահայտությունը արաբը աղավաղել է. «Պահում և պահպանում էր այն վայրերը, որոնք հարմար էին միայն Աստուծո տաճարներ կառուցելու»։

283. «Ապա բոլորին հրավիրեց Աստուծո ողորմածությանը և առնելով Թագավորին ու այլ մարդկանց, գնաց, որպեսզի կենաց խոսքը սերմանի նաև այլ վայրերում և Հայաստան աշխարհի բոլոր սահմաններում։ Ապա եկավ հասավ Դարանաղյաց քաղաքը, որպեսզի Թագավորի և նրա ընկերակիցների հետ քանդի սուտ աստվածների այնտեղ եղած բոլոր մեհյանները։ Երբ եկան հասան Թորդան կոչված գյուղը, որում կար փառավորման սպիտակության կոչված դևերի մեհյանը և Բարշամինա զոհարանը, նախ քանդեցին այդ վայրը, փշրեցին սրբապատկերները և հավաքեցին այնտեղ եղած ամբողջ գանձը՝ ոսկի ու արծաթ և աղքատներին բաժանեցին, իսկ ամբողջ գյուղը իր ունեցած դաշտերով և սահմաններով նվիրաբերեցին հանուն եկեղեցու։ Եվ այնտեղ մնացին ու կանգնեցրին կենաց նշանը»։

284. Հայկական բնագրի «գաւառ» բառը շատ հաճախ արաբերենում թարգմանվում է քաղաք [illegible] թեև հունականը նման դեպքերում ունի πατρίς «հայրենիք» բառը։

285. «Ապա դրանից հետո Թագավորի և ընկերակիցների հետ նա գնաց «Ամուրուն» քաղաքը, որը կոչվում էր Եկեղյաց և այնտեղ երևացին դևերը Հայաստանի մեծ մեհյաններում, երկրպագության վայրերում, որտեղ կար Արտեմիսի զոհարանը Երեզ գյուղում, որովհետև նրանք հավաքվեցին վահաններով, կռվող զինվորների նման։ Նրանց հզոր աղաղակների պատճառով լեռներն արձագանքում էին և ցնցվում նրանց ուժեղ գոռալուց։ Երբ նրանք, այսինքն դևերը, ցրվեցին հեռացան մեհյանից, սա փուլ եկավ իր բարձր պարիսպով մեկտեղ և հանկարծ կործանվեց, իսկ զորքը, Թագավորն ու մանավանդ սուրբը նրանց հետ փշրեցին Արտեմիսի ոսկեզօծ սրբապատկերը և այդ վայրը ի հիմանց քանդեցին, վերցնելով ոսկին ու արծաթը։ Այնտեղից անցան Գայլ գետը և եկան Զևսի դստեր Աթենասի զոհարանը Թիլն կոչված գյուղում, իսկ մեհյանների գանձերը հավաքեցին և նվիրաբերեցին եկեղեցիների ծառայությանը՝ իրենց տերերով հանդերձ»։

Արաբ թարգմանիչը հունարեն ὅμορον «սահմանակից» բառը չհասկանալով, տեղանվան տեղ է ընդունել «ամուրուն» ձևով։ Բնագրի «Հայոց Թագաւորաց» արտահայտության փոխարեն հունարենն ու արաբերենն ունեն սոսկ՝ Հայաստան։

286. Բնագրի «Արքայն մեծասաստ իշխանութեամբ տայր հրաման սատանայակուր և դիւամոլ ազգացն կողմանցն այնոցիկ՝ թափել և զերծանել յունայնավար հնացելոցն սնոտիագործ պաշտամանցն» արտահայտության մեջ ազգ բառը արաբերենում իր տեղը փոխել է. «Իսկ թագավորը ամրապնդեց [իր իշխանությունը] ազգի մեջ և մեծ իշխանությամբ ու խիստ սպառնալիքով հրամայեց մարդկանց հրաժարվել դևերի երկրպագությունից և այդ կողմերում եղած կուռքերի տներից»

287. Այս պարբերության մեջ արաբական թարգմանության իմաստը բոլորովին փոխվել է. «Այդ ժամանակ շտապեց երանելի Գրիգորիոսը, որպեսզի Դերջան քաղաքը ևս հասնի և նրանց էլ տեղեկացնի ու քարոզի Ավետարանը և նրա ժողովրդին ազատի պիղծ դևերի պաշտամունքից և անմաքուր կուռքերի երկրպագությունից։ Այդ բարբարոս ազգերին մղի դեպի աստվածային իմաստության ուսուցումը և այդ դաժան ու բարքերով այլ ազգաց հետ խառնված ազգին դարձնի կիրթ, հասկացող, քաջածանոթ և սուրբ Ավետարանի ավետիսները կրկնող»։

289. «Մեծամեծք և կուսակալք, գաւառակալք, պատուաւորք, պատուականք զօրավարք պէտք և իշխանք, նախարարք և ազատք, դատաւորք և զօրագլուխք» արտահայտությունը, որը կա նաև հունականում, արաբը կրճատել է. «Մեծամեծները, ժողովրդի պետերը, զորավարները և աստիճաններով պատվվածները»։

292. Բնագրի «իշխանն Անգեղ տան» թեև հունականում նույն ձևով մնում է, արաբականում դարձել է «նրա գաղտնիքների տան տերը», որը հավանաբար հունարեն 'Αγγελιτῶν բառի թյուրըմբռնումից է առաջացել (տե՛ս «Հատուկ անուններ» գլուխը)։ «Իշխանն Աղձնեաց, որ է բդեաշխն մեծ» արտահայտությունը հունականում նույն ձևով կրկնված է, իսկ արաբը Աղձնիք տեղանունը ջնջելով դարձրել է «իշխանների վրա կոմս (կումիս)»։ «Իշխանն մարդպետութեան իշխանութեանն» արտահայտությունը հունականում աղավաղվել է ἄρχων ἐπὶ τῆς ἐξουσίας πατρίκιος λεγόμενος, որին հետևում է արաբը. «Իշխանության տերը, կոչեցյալն պատրիկ (բիթրիկ)»։ «Իշխանն Թագակապ իշխանութեան ասպետութեանն» հունարենում նույնիմաստ ձևով է թարգմանված, սակայն արաբը նրա վերջին բառը (ասպետության) բաց է թողել հետևյալ ձևով՝ «որն ունի թագավորի գլխին թագ դնելու իշխանություն»։ Բնագրի «սպարապետ» բառը արաբերենում դարձել է «զորքերի պետ»։ Վեցերորդ նախարարը երեք լեզուներում էլ նույն ձևով է տրված։ «Եօթներորդ՝ իշխանն Ծոփաց աշխարհին» թեև հունականի Լավրենտյան օրինակը չի պահպանել, այնուամենայնիվ արաբն ունի «յոթերորդ՝ իշխանը Ծոփաց (Սուֆանիթուն) երկրի», որը հաստատվում է հունական Ագաթանգեղոսի Վատիկանյան օրինակով՝ τῆς σοφονιτῶν χώρας (Garitte, 387), «Ութերորդ՝ իշխանն Գուգարացւոց աշխարհին, որ միւս անուանեալ բդեաշխն» հունականում թողել է միայն իր վերջին մասը, այն էլ յոթերորդ տեղում, արաբը թեև նույնությամբ թարգմանում է «ութերորդ՝ մյուս կոմեսը» այնուհանդերձ տեղը չի փոխել։ «Իններորդ իշխանն Ուշտունեաց» հարազատորեն պահպանվել է հունարենում (ութերորդ տեղում) և արաբերենում, իսկ հաջորդը «տասներորդ իշխանն Մոկաց աշխարհին» հունականն ունի, թեև աղավաղված ձևով, ἄρχων ὁ τῆς κορίτων χώρας, իսկ արաբերենը բոլորովին զանց է առել այն։ «Մետասաներորդ իշխանն Սիւնեաց աշխարհին» հունարենում և արաբերենում, թեև նույն ձևով թարգմանված է, սակայն տասներորդ տեղն է գրավում։ Տասներկուերորդից մինչև տասնվեցերորդը հունական և արաբական օրինակներում մեկական տեղ ետ ընկնելով (տասներորդից մինչև տասնհինգերորդ)՝ հարազատ են մնացել հայկական բնագրին։ Միայն տասնչորսերորդ տեղում «իշխանն Շահապ Զարաւանդ և Հեր գաւառի» արտահայտության մեջ արաբերենում Հեր տեղանունը կորել է և դարձել «կուսակալ Զարավանդ (Զարաւանդուն) երկրի»։

302. Այս պարբերությունը արաբերենում ազատ թարգ-

մանությունն է՝ «ապա նա (Ղևոնդիոս) ճանապարհ դրեց Գրիգորիոսին եպիսկոպոսաց խմբի հետ մեծ պատվով և գրեց ազդու նամակներ, որ ընդունվի ու պատվվի ամենուրեք։ Դուրս եկան այնտեղից շնորհոք տեառն մերո Հիսուսի Քրիստոսի և հասան Սեբաստիա քաղաքը և այնտեղ ոչ քիչ օրեր մնացին և հավատացյալ ու բարեպաշտ եղբայրների մի խմբի համոզեցին գնալ իրենց հետ, որպեսզի Սուրբ Գրիգորիոսը նրանց ձեռնադրի (և դարձնի) իր երկրի կղերը։ Նրանք իրենց հետ տարան մի մեծաթիվ խումբ և ամեն վայրում բազում պատվով ընդունվում էին եպիսկոպոսների, իշխանների ու ժողովրդի կողմից»։

304. Բնագրի «Նախարարակոյտ զօրուն հանդերձ» արտահայտությունը հունարենում և մանավանդ արաբերենում անհաջող ձևով է թարգմանված. «Դրանից հետո նա վերցրեց հնազանդ բազմությունը և իրեն ենթակա իշխաններին ու զորավարներին և անձնատուր եղավ Քրիստոսի շնորհին և անցավ երկար ճանապարհ արիությամբ, հեշտությամբ, հոգևոր հրճվանքով մինչև որ հասավ իր երկիրը»։

305. «Երբ հասավ Հայաստան երկրի սահմանները, Սուրբ Գրիգորիոսն իմացավ, որ Տարոն երկրում մնացել է Վահևանյան կուռքը։ Սա ոսկով ու արծաթով հարուստ զոհարան էր, որովհետև մեծ թագավորները այնտեղ բազում գանձեր էին կուտակել։ Սա կոչվում է ութերորդ երկրպագության վայրը ի փառս «Նինտիի» արարիչ Հերակլեսի և Հայոց մեծաց թագավորների զոհաբերման վայրերից էր, անանցանելի լեռներում, որովհետև Եփրատ գետից վերև էր գտնվում, մեծ լեռան կողմը, որը Տավրոս է կոչվում, իսկ վայրը կոչվում էր շատ զոհերի տեղ»։

Արաբերեն «Նինտիի արարիչ» արտահայտությունը, ըստ երևույթին, հունական թարգմանության δρακοντοπνίκτου (վիշապաքաղն կամ վիշապ խեղդող) բառի սխալ թարգմանության արդյունք է։ Եթե արաբերեն خالق -ի (արարիչ) փոխարեն خانق (խեղդող) կարդանք, ապա կարելի է ենթադրել, որ արաբը վերոհիշյալ հունարեն բառի երկրորդ արմատն է

նկատի առել (πνικτος), որը թարգմանելուց հետո նույն հունարեն բառը աղավաղված ձևով կրկնել է, զանց առնելով վիշապ բառը։

306. «(Երբ) իմացավ երանելի Գրիգորիոսը, որ այսպիսի մեծ զոհարանը և տաճարը կանգուն է իր երեք զոհարաններով, որոնցից առաջին զոհարանը կոչվում էր Վահեանյան, երկրորդը՝ Ոսկեղեն մայր և ոսկեծին դիցուհի, իսկ երրորդը՝ Աստղ դիցուհի և կոչվում էր Հերակլեսի անկողինը, իսկ հունարեն կոչվում էր Զուհարա» (գեղեցկության դիցուհի)։

Այստեղ թվում է, թե նախադասությունը կիսատ է մնում, որովհետև արաբ թարգմանիչը պարբերության սկզբում ավելացրել է «երբ» բառը, որը բոլորովին ավելորդ է։

307. Բնագրի «ձիոյ արշաւանօք երկուք» արտահայտությունը, որի մեջ ձիու արշավանքը ասպարեսն (ասպարեզ) է, հունարենում դարձել է երեք ստադիոն, իսկ արաբերենն ունի նետընկեց غزوة բառը։

308. «Այդ ժամանակ, երբ շինությունն ավարտվեց ու վերջացավ, հրաման տվեց Գրիգորիոսը զորքերին ու զխավորներին, որոնք նրա հետ էին, որպեսզի գնան կացիններով (բնագրում բրիչներով, հողուրագներով) և այլ գործիքներով ու կործանեն հիշյալ կուռքերի տաճարները, այն կուռքերի, որոնց զոհարանների մասին սկզբում հիշեցինք։ Նրանք շատ հոգնեցին, սակայն չկարողացան գտնել տաճարի դռները, որպեսզի ներս մտնեն, քանի որ դևերը սովորներ էին գցում և ծածկում դռները։ Առավել զարմանալին այն էր, որ նույնիսկ երկաթը չէր ազդում շինության վրա։ Տխտափույթ գնացին և իջնելով հայտնեցին այդ մասին եպիսկոպոսապետին»։

313. «Այս բոլորից հետո մեծ թագավոր Տրդատեսը լսեց, որ Գրիգորիոս երանելին հասել է Հայաստան երկիրը և իր հետ վերցնելով իր շուրջը եղած իշխաններին ու թագուհուն, դուրս եկավ Այրարատ քաղաքից, ընդունելու երանելի եպիսկոպոսապետ Գրիգորիոսին։ Եկավ Բագավան քաղաքը, որը պարսից լեզվով կոչվում է «Բամուն» և այնտեղ մնաց երեսուն օր՝ սպասելով երանելուն, իսկ սուրբը շրջում էր տար-

քեր կողմերում, հոգ տանելով եկեղեցիների շինության, քահանաների զարգացմանը և կատարելով մկրտություններ։ Եվ լուսավորում էր նա օրինական բոլոր ծեսերով»։

(«Բամուն» բառի համար տե՛ս «Դիցաւան», «Հատուկ անուններ» գլխում)։

322. «Երբ բոլորն ընդունում էին նրա կողմից տրված պատվիրանները և իրագործում, այն ժամանակ նա հրամայեց բոլոր նրանց, որոնք արքունիքում էին, ինչպես նաև զորքին, որ երեսուն օր ծոմ պահեն մշտական աղոթքներով, իսկ նա, ըստ իր սովորության, ընկերակիցների հետ անքուն էր մնում և զբաղվում բարեպաշտությամբ, պաղատանքով, հորդառատ արցունքներով, խստակեցությամբ և բոլորին հոգալով ու վկայելով առանց թուլացման, հիշեցնելով միշտ Ս. Մարգարեի խոսքերը, երբ ասում է. «Եթե հեծեծես, այն ժամանակ կփրկվես» (Համմ. Ես. Լ 15)։

326. «Նրանք ցնծությամբ հեռացան սպիտակ զգեստներով, ընթեռնելով Դավթի սաղմոսները և հոգևոր օրհնենքներ, իրենց ձեռքին վառված մոմի լապտերներ բռնած, մեծ ուրախությամբ։ Եվ լուսավորեցին ու դարձան հրեշտակների նման և հասան որդեգրման աստիճանին։ Նրանցից մեր Տեր Քրիստոսի հոտն էր բուրում։ Ապա նրանք մտան Աստուծո տաճարը և այդ ժամանակ Երանելի եպիսկոպոսապետ Սուրբ Գրիգորիոսը սրբազան պատարագ մատուցեց և հաղորդեց նրանց Տիրոջ սուրբ մարմնով և կենարար արյամբ մեղքերի քավության և հավիտենական կենաց համար»։

328. Արաբ թարգմանիչը աղավաղել է հետևյալ հատվածը. «Եւ զյիշատակս վկայիցն բերելոց ժամադրեաց ի տօն մեծ հռչակել սնոտեացն պաշտաման ի ժամանակի դիցն Ամանորոյ ամենաբեր նոր պտղոց տօնին, Հիւրընկալ դիցն Վանատրի զոր յառաջագոյն իսկ ի նմին տեղւոջ պաշտէին յուրախութեան Նաւասարդ աւուր»։ Հունականի մեջ ամանոր, Վանատուր, Նավասարդ անունները անհետացել են, իսկ արաբը ամբողջ շարադրանքն է աղավաղել. «Այդ ժամանակ հրամայեց Երանելի Գրիգորիոսը վկաների հիշատակը տոնել մեծ

հավաքույթի մեջ, որը կոչվում էր «բնբիս», որը սկզբում սահմանված էր նրանց հին աստվածներին։ Այդ հավաքույթը նրանց մոտ տոն էր տարվա վերջին օրում և նրանց մեծագույն տոնակատարությունն էր»։

Անհասկանալի «Բնբիս» (بنبس) բառը ըստ երևույթին հունաբանություն է։ Հունականը նույն տեղում ունի διαπορπῆς երթ։

329. Այստեղ արաբ թարգմանիչը աղավաղում է հայկական բնագրի խոսքերը, այնինչ հունականը սոսկ որոշ շեղումներ ունի։ Բնագիրն այսպիսին է. «Յետ այսորիկ հասեալ նմա բովանդակ ի վերայ ամենայն երկրին սահմանացն Հայոց Մեծաց աշխարհին, շինելով եկեղեցիս յամենայն աշխարհս, ի գաւառս, ի կողմանս, ի քաղաքս, յաւանս, ի շէնս, ի գեօղս, յագարակս։ Սոյնպէս և թագաւորն յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ գրեաց չորս չորս հողս երդոյ յամենայն ագարակ տեղիս իսկ յաւանսն եօթն եօթն հողս երդոյ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն, նուէր պտղոյ Տեառն մատուցանէր»։ Արաբն այսպես է թարգմանել. «Դրանից հետո դուրս եկավ և գնաց Հայաստան երկրի բոլոր սահմանները։ Ամեն տեղ եկեղեցիներ կառուցեց, բերդերում, գյուղերում, ագարակներում, քաղաքներում և այլ վայրերում։ Եվ թագավորը իր ամբողջ տերության մեջ եպիսկոպոսապետի համար հատկացրեց ագարակներից չորսը ամեն տեղ ուր նա գնար»։

Այստեղ հատկացրեց ասելու համար արաբ թարգմանիչը գործածել է «վակֆ արեց» (այսինքն անշարժ ժառանգական գույք դարձրեց) արտահայտությունը, որը հատուկ է արաբական միջնադարին։

330. Արաբ թարգմանիչը բաց է թողել (սակայն հունականն ունի) բնագրի «սոյնպէս և զեպիսկոպոսսն վիճակեցուցանէր ի գլխաւորութիւն ժողովրդոցն Տեառն և հրաման տայր նոցա հաւատարիմ առաջնորդութեամբ վերակացու լինել լուսաւորապես հօտին Քրիստոսի»։

332. «Ապա թագավորը հրամայեց, որ ամեն քաղաքից

ու Հայաստանի գավառներից հավաքեն երեխաներին, որոնք նրա իշխանության տակ էին և կարգեց հավատարիմ ուսուցիչների, ինչպես նախապես հիշեցինք: Նա ռոճիկ էր վճարում նրանց և հավաքեց երկու տեղում, որպեսզի մի տեղում հոռոմների հունարեն լեզվով սովորեն, իսկ մյուս տեղում՝ ասորերեն: Այսպիսով, նրանք, որ անասունների նման էին ապրում և ոչ կրթություն ունեին, ոչ էլ հոգևոր գիտելիքներ, ծանոթ դարձան մարգարեություններին, սուրբ Պողոս առաքյալի թղթերին և չորս սուրբ Ավետարանների խոսքերին, այնպես որ, անգիր սովորեցին առանց նայելու գրքերին, քանզի նա բացահայտեց Աստվածային պատվիրանները և այն ծանոթացրեց նրանց»:

334. Այս պարբերության երկրորդ կեսը, որ հայկականի 842 պարբերությանն է համապատասխանում, մեծ չափով կրճատված է. «Եվ ավարտեց Սուրբ Ավետարանի քարոզությունը ամբողջ Հայաստան երկրում մի ծայրից մինչև մյուսը, Սատաղացոց քաղաքից մինչև Խաղտիք քաղաքը և գուների դուռ (Ալանաց Դուռ) սահմանները այլ բազում երկրների հետ, որոնց թիվը դժվար է հաշվել և ամենուրեք Ավետարանի կենարար ձայնը տարածեց»:

337. Նոր ձեռնադրված եպիսկոպոսների ցուցակում արաբը հունականի նման չունի վերջին երկու անունները «մետասաներորդ՝ Տիրիկէս, երկոտասաներորդ՝ Կիւրակոս»:

341. «Երբ իր անձը այս եղանակով զորացավ ու այսպիսի կերպարանք ընդունեց և զորեղացրեց աստվածային հարըստությամբ, որոշ ժամանակ շրջում էր ճշմարտության աշակերտյալների մեջ մխիթարելով, խրատելով հոգևոր անձնօգուտ խրատներով: Միշտ, ամենուրեք մարդկանց հետաքըրքրում էր աստվածային ուսմունքով, որպեսզի նրանց սովորեցնի ազատորեն երկրպագել Աստծուն և բարենորոգել նրանց սրտերը պարարտ պտղատու հողի նման, որը մեկի փոխարեն տալիս է երեսուն և վաթսուն և հարյուր: Եվ միշտ այսպես էր անում իր անձի և ամբողջ քաղաքի սիրույն»:

Նախավերջին նախադասությունը ավելացված է արաբ

թարգմանչի կողմից վերցնելով Ավետարանից «ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարեւր (Մարկ. Դ, 20)»:

Հայկական բնագրի «Որոյ բազում անգամ առեալ զաշակերտսն ուրոյն...» պարբերության դիմաց արաբ թարգմանիչը (մասամբ հետևելով հունականին) աղավաղել է. «Քանզի նա շատ անգամ վերցնում էր իր աշակերտներին մենակության մեջ և նրանց օրինակ էր դառնում իր գործերով: Իսկ երանելին լեռան վրա ուսուցանում էր նրանց և հանձնեց նրանց «ալ-բատարիմուն» աղոթքի ձևը, որն է «Հայր մեր, որ յերկինս ես»: Եվ եղավ թաթախման (պահքը բանալու) օրերը կանոնական ժողովում, երեք անգամ բարձրացավ Ջիթենյաց լեռը և աղոթում էր գիշերը միայնակ»:

Այստեղ «բատարիմունը» հավանաբար Թաբորականի աղավաղումն է (տե՛ս «Հատուկ անուններ» գլուխը), իսկ կանոնականը, որ հայկականում և հունականում աղոթքին է վերաբերում, արաբ թարգմանչի սխալով անցել է ժողովին և անհասկանալի դարձել:

343. Բնագրի 852 պարբերությունից արաբ թարգմանիչը պահպանել է միայն մեկ փոքր նախադասություն. «Եվ ընդունեցին աստվածային ուսմունքը նախ և առաջ իրենց անձի օգտի համար»: Բնագրի հաջորդ պարբերությունից արաբ թարգմանիչը բաց է թողել ամբողջ վերջին նախադասությունը. «Եւ այնպէս յառաջ ամենայն աստուածեղէն գանձուցն վայելչութեամբք լցեալ... և ի նմին հանապազորդեալ»:

344. Հայկական բնագրի 854 պարբերությունից արաբականը բաց է թողել «հայաբարբառ հայերենախօս գաւառ», իսկ 855 պարբերությունը տրված է հակիրճ նախադասությամբ՝ «Եվ նա միշտ անապատներում էր բնակության տեղ ընտրում»:

345. Հայկականի 857 պարբերությունը ամբողջովին բաց է թողնված արաբերեն թարգմանության մեջ:

346. Հայերեն բնագրի «իսկ թագաւորն շատ աղաչեաց զԳրիգոր» արտահայտությունից հետո արաբականն ավելացնում է «և նրա ոտքերը ընկավ»:

348. Թագավորի ուղարկած երեք նախարարների անունները արաբականը պահպանել է, սակայն նրանց պաշտոնները, որոնք հայկականում և հունականում հիշվում են, զանց է առել «առաջինը Արտավազդ (Արթուաքսադ), երկրորդը՝ Տաճատ (Թասատիս), և երրորդը՝ Դատ (Թաթաս)»։

351. Բնագրի «աթոռ կաթողիկոսութեան Հայոց Մեծաց» արտահայտության դիմաց, որը հունականում պահպանվել է նույնությամբ, արաբն ունի Հայաստանի սուրբ քահանայության աստիճանը»։

353. Հայկական բնագրի 865 պարբերությունը արաբը լրիվ զանց է առել։

355. Բնագրի 867 պարբերությունը արաբը կրճատված և փոփոխված ձևով է ներկայացնում. «Երբ այս դեպքերը սույն ձևով ընթացան, այդ ժամանակ թագավորեց Կոստայի որդի Կոստանդին թագավորը Սպանիա և Գալիա երկրներում և հավատաց Աստուծուն երկնից ու երկրի արարչին, որովհետև իր խղճի մեջ համոզված էր, որ չկա թագավորություն բացի երկնից արքայությունից, իսկ այս աշխարհի թագավորությունը անցողիկ է և ունայն»։

Բնագրի 868, 869 և 870 պարբերությունները արաբը լրիվ զանց է առել։

Բնագրի 871 պարբերության միայն առաջին կեսն է պահպանված արաբականի մեջ։

356. Բնագրի «ի դուռն թագաւորութեանն Արշակունեաց» արտահայտությունը, թեև հունականում կա, արաբը զանց է առել, սակայն պահպանելով [illegible] բառը որպես παλάτιον-ի (արքունիք) աղավաղումը։

357. Բնագրի 873 պարբերության մեջ, ուր տրված են Տրդատ թագավորին ընկերակցող նախարարների ցուցակը «Եւ ի զինուորական կողմանէն զչորեսին գահերէցսն իւրոյ տաճարին, որ բդեաշխքն կոչին...» արաբը կրճատել է և թողել սոսկ հետևյալը. «Իր ամենամեծ զորավարներից վերցրեց չորսին, մեծ իշխանին, որը Անգեղ (Անգալիթուն) քաղաքի վրա էր իշխում, այն իշխանին, որը թագավորի գլխին թագ

էր դնում, մեծ դոմեստիկին իր խմբի հետ և այլ իշխանների, որոնց թիվը շատ էր, ինչպես նաև յոթանասուն հազար ընտիր ասպետների»։

359—360. Հայկականի 876 պարբերությունից արաբականում մնացել է սոսկ երկու նախադասություն. «Եվ նա շտամաչեց նրան հայտնել իրեն հասած ամեն ինչի և նահատակների համբերության մասին, իսկ կայսր թագավորը շատ զարմացավ և իրեն գցեց Ս. Գրիգորիոսի ոտքերը, խնդրելով նրան օրհնել իրեն»։

Հայկական բնագրի 877, 878, 879 և 880 պարբերությունները արաբը լրիվ զանց է առել։ 881 պարբերությունից մնում է միայն մեկ տող. «Այդ ժամանակ հասան Այրարատ քաղաքը՝ սուրբ նահատակների հանգստյան վայրը»։ 882 պարբերությունից մնում է հետևյալը. «Իսկ իրենց հետ ունեին նվերներ սուրբ թագավորի հրամանով՝ ոսկի, արծաթ և բազում ամաններ ի ծառայություն նրանց եկեղեցու»։

363. Բնագրի 886 պարբերությունից պահպանվել է միայն մեկ երրորդը. «Սրանից հետո Երանելի Գրիգորիոսը քարոզեց ժողովրդին բազում դժվարըմբռնելի խոսքերով և շատ խորիմաստ ու բոլորին հաճելի առակներով»։ Իսկ 887 պարբերությունը լրիվ ջնջված է։ Հաջորդ 888 պարբերությունից արաբը պահպանել է վերջին նախադասությունը. «Քուն չէր տալիս իր աչքերին, ոչ էլ թմբիր ու հանգիստ՝ իր քունքերին, մինչև որ հասավ Տիրոջ կողմից հրավիրվելու ժամը»։

364. Բնագրի 889 պարբերությամբ արաբ թարգմանիչն ավարտում է իր շարադրանքը։ Գրիչը հետևյալ հիշատակարանն է տալիս.

«Աստված թող ների նրան, որ գրել է և որ կարդացել և թող ներողամիտ լինի (ընթերցողը) իր գտած սխալների ու պակասության համար և հավերժ փառք Աստուծո և նրա գթությունը մեզ վրա լինի, ամեն։

Ավարտվեց մեր հոր Ադամի վեց հազար ութ հարյուր և երեսուն յոթ տարում. թող Աստված վախճանը բարի դարձնի։

(Գրվել է) Սուրբ Սինայի լեռան վանքում, որը Տիրուհու եկեղեցու օրհնությունն ունի»։

НОВАЯ АРАБСКАЯ РЕДАКЦИЯ АГАФАНГЕЛА

Резюме

Изучение арабского Агафангела является лишь частью того широкого круга вопросов, который долгое время занимал арменоведов разных стран. Известно большое количество редакций «Истории Армении Агафангела» почти на всех языках христианского средневековья—армянском, греческом, арабском, латинском, грузинском, эфиопском и др. Это сочинение находилось в центре внимания еще в раннем средневековье и стало весьма важной и спорной проблемой для многих исследователей Армении и Европы начиная с XVIII столетия.

Первое достоверное упоминание о нем дает армянский историк V века Лазар Парпеци (Парпский), называя это сочинение Книгой Григора (Гирк Григорисн). То же название дается еще в историческом сочинении VII в.—«Истории Себеоса».

В дальнейшем автором этого сочинения, которое больше не называлось Книгой Григора, стали считать римлянина, секретаря царя Армении Трдата III (Тирадата). Само название Агатангелос, считавшееся именем самого автора, объяснялось в греческом значении «добрый вестник».

История Агафангела в том виде, в каком она дошла, состоит из следующих частей: Предисловие, История и Учение.

В Истории Агафангела достоверные исторические факты сливаются с эпическими и, особенно, агиографическими материалами. Арташиром сасанидом был низложен и убит последний Аршакид—Артабан. Родственник Артабана, царь Армении Хосров Аршакуни, 10 лет воевал с Арташиром, который, не найдя другого выхода, через посредство Анака Парфянина изменнически убил Хосрова. Было истреблено потомство Анака, но спасся его сын Григор, которого увезли в Кесарию (Кападокия). Покорив Армению, Арташир приказал уничтожить потомство Хосрова, но младенец Трдат был спасен и увезен на Запад. Когда наследник трона Армении вырос, он пошел войной на персов и восстановил царство Аршакуни в Армении.

В это время Григор поступает на службу к царю Трдату. Трдат, узнав о том, что Григор христианин, уговаривает его отречься от новой религии. Но Григор был непоколебим. Подвергнув его мучениям, царь велел бросить его в страшную тюрьму Арташата—Хор вирап.

Далее повествуется о мученичестве дев Рипсимеан (Рипсимэ, Гаянэ и их спутниц), об умопомешательстве Трдата и о том, как извлекли Григора из Хор вирапа, чтобы тот вылечил царя.

Учение святого Григора—пространная проповедь, прерывает текст истории Агафангела. После Учения продолжается историческая часть—спасительное обращение нашей страны Армении. Здесь повествуется о видении Григора, о постройке гробниц-часовен для святых дев, рукоположении Григора, об обращении армян в христианство, разрушении капищ и т. д. Эти сведения являются исключительно важным источником для истории языческой религии Армении. Были низвергнуты идолы во многих языческих храмах, как, например, храме Анаит (Артемида) в Арташате, храме Арамазда (Зевс) в Ани-Камахе и, наконец, в храме трех бо-

жеств—Анаит, Ваагна (Геракл) и Астлик (Афродита) в Тароне.

